սակ կոչի՝ զկրողդ ինքեան նշանակ։ Այս
պաշտի և երկրպագի՝ ած̃ չարչարեալ՝ 'ի
քում պատկերի։

Թագ անթարշամ զարդու սխոնի՝ նշան
գովելի։ Յորոյ ապացոյց նախանշանակ
մարգարէն ընտրեալ՝ որոշեաց 'ի քարանց
յղքունց զփայլակնանշոյլս։ Նու զօրինակն՝
ճշմարիտ քև փառաւորելոյ՝ 'ի քառաւաղօ
նորոգ պճնեալ պաճուճեաց։ Ի բերս շըր-
թանց բանաձարակ որոձման, 'ի կոչումն քա-
ւից զքեզ համբաւէր։ Յորոյ օրինակ քում
անեղծութէ՝ զմայրն ընդ նոձոյն, և զպարդն
ընդ սոսոյն՝ 'ի պատճառ փառաց Մծին ո̃յ
վերանորոգեաց։

Ժողովեալ գումարուէ բանական հօտից՝
նշան սրբարչաստեղծ. Որ 'ի վաղնջուցն
կանխութէ զքոյդ տպաւորեալ զարմանա-
գործութի՝ 'ի գումարտակ երամոյ զառնածին

հօտից տանն լաբանու։ Քանզի 'ի քոյդ
նշան գեղեցկընեալ զուղէշ սկզբնօնի՝ քում
շառաւիղի. Որ 'ի գոյն արեան որովի ներկես
զազգս այլալեզուս բազմաթիւ զարմի։ Կա-
կամ զդարձեալս 'ի հակակայս խայտաբղէ-
տուն մեղացն գունով, 'ի մի աւազան շնոր-
հիւ մաքրուէ զմնուն տեսակ ընկզմեալ՝
միում կի քան թէ իէլի ընծայեցուցանես։
Ոսկապէս լուսով նորոգեալ քնեան նշան.
Որ 'ի յանմատոյց փոցն ոչ լուսաւորեցար։
Մինչ զի՝ նկարագիրն կենդանատեղծ երե-
սաց մերոց հոգի տր.քն՝ 'ի պատկեր տեսակի
մերում քև նշանակի։ Որ երբեմն նոյն ծնքն
'ի քեզ է յայտնի հանգուցեալ. ոչ և գու-
ընդ նմա ես միշտ միացեալ։
Լուսաւորեալ ես ամենազօր նշան խաչիդ-
փրկուէ։ Որ 'ի սաղմոսանուագ երգոյն
յորդորման՝ զքեզ նկար մարմնոյս պճնման՝
'ի մեզ ընկալաք նշան փրկուէ. անմարանչէ
լի սլաքին հարման և չարին աղեղան ներհակ
դու վահան։
Սոսատաւխանեալ ես խորհրդարան մեծուէ
էին, և նշան պարծունակ մահու յաղթողին։
Քանզի քև ձիաւորեալ գունէլն ձորձով
ըստ մեծին յակօբայ յարիւն խաղողոյ, ա-
րագ ընթանայ 'ի դժուարակոխ մթին շաւ-
ղարան խորին դժոխոց՝ ածայրին հոգւոցն
կցս ծագել։ Զոր և դանիէլ աղգեաց մեզ

 ժը

կատակ. որ կայ ՚ի խաւարի, և լոյս խոր ընդ
նմա փայլէ համարձակ ։

Սնող զմեզ վերստին ՚ի մանկ յի նշան արար
չափէր ։ Ո՛ր սկզբնարարն բարեաց յա՛ մկըր
տութե և բաժակ լուծման մեղաց և արժանս
կենաց զքեզ դաւանեաց ։ Իսկ զկցորդութե
փառաց խնդրողաց որդւոցն որոտման, զկեն
տունակ խորհուրդ քո ազդեաց ։

Կացարան անբժնելի հրաշից անմահին յէ
նշան անպարտելի ։ Քանզի քեզ զօտեւորե
միջամփինդ ամրութե բանն մարմնացեալ՝ ա
րեաց յողնաթիւ ազանց հեթանոսաց . ՚ի
շնորհ որդեգրութե ծնողին խորոյ՝ զամենե
սեան զմեզ հրաւիրեալ ։

Հանդխաւկիր նահատակութե նախկին վկայե
լոյն խաչ անեղակերպ ։ Քանզի ՚ի քեզ ծա
նուցաւ բեւեռեալն ամ՝ մարդ երկրորդ՝
առեղծիչ առաջնոյն ։ Իսկ նա որ առաստաղ
եաց ՚ի կենաց դրախտէն զկողմն պարտակից.
նոյն դարձեալ ՚ի քեզ՝ զմահակիցն ընքեան՝
կայն վայր ցանկալի եմուծ հրամանօք խ
րովք վերստին ։

Զօնարան ընծայամատոյց դաւթին անմահի
խաչ ամենազօր ։ Քանզի լուսմն և սկիզբն
տուաքելոց և մարգարէից, մաքրութե կարա
պետն և առաջին նախընթացագ զբաղմեալդ ՚ի
քեզ՝ զառն անարատ ծոյ և հօր ՚ի մկրտութեն
ահաւոր մեծամեծն կայանեաց ։ Ո՛ւ բարձօղն



մե

մեղաց բնաւէին աշխարհաց՝ զանձն խոր 'ի վեր
քո պատարագ նուիրեաց ։

Պատմեար անշէջ և անստուեր բոցով պայ-
ծառ փայլատակէլ նշան ամենազօրն ։ Բան-
զի 'ի քեզ անպարունակն ած մարդացեալ՝
արարքդ բանակին ածուէն՝ ամենածախ հր-
բովն՝ 'ի չարչարիլն ողջամբ կիզեալ՝ սրբուէ
մեզ ցուցաւ ։ Որ և անմահն՝ անշիջուէ բստ
առակաւոր զոհիցն կիզման՝ զճարպ հնազան-
դուէն՝ հօր ձենձերել՝ զածային հոգւյն՝ բու-
րումն անուշից կնդրուկ հաշտուէ նմին
ախորժակ յերկինս արձակեաց ։

Ճեմարան և ընդունարան երկնից արքային
նշան ած ընկալ ։ Մեծ են սքանչելիքն քո
առ քեզ, քան թէ 'ի վրանն սողոմոնի ։ Զի 'ի
նա միայն աստեղք լուսատու շրջան առնուն
ճեմելով ։ Իսկ վարագոյր տարածեալ 'ի մէջ
փառացն քո ։ Եւ դու զծածկեալն 'ի նմա
նէ՝ յայտնի շօշափեալ մեզ ընձեռեցեր . և 'ի
ճաշակումն հաղորդուէ կենացն հացի՝ լու-
սաւորեալ զմարդիկ մատուցեր ։

Սքրուէ և բժշկուէ ախտիցն մեղաց՝ քո-
ածիր նշան կենսատու խաչիդ ։ Ի քեզ նոր-
գիշն խնամովք 'ի սորբինս երկրի հետևեալն
ած՝ զոխզմ չարուէ ժահահոտ յանցուա-
ծոց՝ հրանշոյլ և անշէջ բոցով տոչորեաց ։
Զոր հրեշտականուն մաղաքիաւ՝ աւետա-
րանեալ կանուխ մեզ ազդեաց ։ Ծագեցից
եր

Երկիւղածաց խմբից արդար արեգականն՝ բժշ
կութե̄ թեւովք պացեալ․

Յանվախճան փառացն հաղորդութ̄ զմեզ
հրաւիրող երջանիկ նշան։ Րռհաւաստ_
չեայ ուխտի խոստացեալ շնորհի աներկեւան
ցնծութե̄ն։ Քանզի դու ես փոխանորդ գրա
ւական անմահական բարութեն հանգստեան։

Լուսահետեւօղ վերնական անծանօթ և
անքնութել ամենանձուկ ճանապարհին փայտ
նորոգութե̄։ Դու տիրապէս միշտ առաջնոր_
դես զքեզ սիրողաց յերկին կենդանեաց ․
խրամատեալ ինքնիշխան քո ընթացիւք՝ ըզ
ցանկն անջրպետ սրոյ սրովբէին ։

Շնորհատուր աւանդ լուսոյ պարգեւաց
էրն՝ կեցուցիչ նշան։ Որ թէպէտ՚ի սահ
մանելն քաուից տարերաց զգայականաց զե_
տեղեալ որոշեցեր , սակայն անդր քան զու_
խորհրդոյ իմաստից գերալրանցս բազմեցեր։

Ունող յաղթութե̄ զօրեղն ուժգնութե̄ ան_
րական արուեստից մարմնաւոր անտեսութե̄
ընակողէն՚ի քեզ նշան ամենազօր։ Որ՚ի յայտ
նութե̄ն՝ իբրև առակաւ պատմաբանեցար ՚ի
տեսողէն։ Զանցեալսն իբրև զապառնիս
նշանակեալ՝ գառն հեծեալ՚ի ձերմակ երի_
վար․ և զդ խմեցուցն ժպրհութե̄ վիշապէն վա_
նեալ։ Ուստի և խոստովանեցաւ՚ի վերին ա_
թոռոյն շրջան բազմելոցն , որ ամենակալ․
որ էն , և որ էր , և որ յապայսն յուսով յայտ

նես

Տեսողի։ Քանզի արդարեւ 'ի քո դէմս լուսա-
նկար փրկութիւնս այսորիկ յանկել առ լցան՝
բարեաց լրութիւն 'ի փառս անեղին։

Զորեքծագեանս եզերաց տիեզերաց՝ կնիք
պահպանական նշան ամենազօր։ Որ խեթ-
կից եղջերօք քառայծորդ զուգութբ՝ յաւէ-
ցուցանես զյաստուածն մյ ըստ զաքարեայ 'ի
չարին գումարս։ Իսկ ձիընթաց երագամամբ
'ի նոյն չորս դիմեցմամբ՝ զալզաց և զազանց
գիրտ նուաճես ուղղութբ 'ի զգաստութ մե-
րոյ երասանի ընդունէ։ Նա՛ զի և խորհրդա-
կան տեսչութբ՝ դէմք հետոց կառացն 'ի բնա-
կութէ կոյս քումդ հանգստեան տեսու-
թեցան։

Պայծառանշոյլ ջահ վեհին ծագման փրկ-
չին լոյն նշան անպարտելի։ Որ վաղագեկոյց
ազգամամբ պուշակեցար 'ի գրոյն նկարեալ։
յորոյ օրինակ նաւեանն յեսու մանաւանդ՝
յափշփայ բողբոջն անդրանիկ, իբր նախա
տիպ մերոյդ կոտակի, զքարինս ամփոփեաց 'ի
յորդանանէ՝ զՃոյն իսկ լի նշանակ ուխտի։
Նաւ զեղ փրկութ յոյս երկնիցն փառաց՝
նորոգն յն հեթանոսաց եա եկեղեցեաց։

Բոյն կենդանւոյ նորագործն աւազանի՝
մաքրարանդ նիւթ նշանդ երկրպագելի։
Որ իբր խմոր անապական կենաց զանգուա-
ծոյ արկել յարգանդ մօրն եկեղեցւոյ, զառ-
ընկղմեալն 'ի տգեղ գունոյն յեղեալ փոփո-
խես։

խես. և յընտանութ արեանն ըն ներկեալ-
զարդարես. և նորա ծնելոցն ծածկեցեր
լուսաւոր՝ զքո զանձամբ արկանես։

Ովա՜հ կենսաշուք ճանապարհի արդարոցն՝ խաչ փրկչին հետևակ. Քանզի ախոր-
ժողացն զերկնիցն կայան՝ զքեզ եդ առաջի
բանալիք բացարան. ի բուն զընդ ակիրց դաս-
ախարակարան, առեալ մեզ զօրութ ար-
քայութ, հետոցն ուղղութե։

Ուր ծածանմուխ բարձրացեալն այցելու.
նշան պրանչելապատուեալ՝ փայլակնաձև
փայլմամբ յեսանեալ. քառատարրեան դո-
լով բերմանս, ՚ի ձեռն աջողակ աջոյն ըն
յերկմամբ շողշողեալ։ Որ ՚ի փրկութ նորա-
մեն մարդոյն՝ զջիս ուժգնապէրկս չարին
խոստութ՝ քե հատեալ խոպան պարուրեալ.
զօրեղ երդմամբ ՚ի խոր խոցոտեալ՝ անպատ-
ուհասելի լուծեալ խորտակեաց։

Ո մեր մերձացելոյ տարրշին՝ աղդութն
ածայնն խաչ խորհրդական։ Քանզի
դու զխուրակործան բարուց հրեից խակա-
մրտութն՝ գայթակղութ. և արտաքնախոր-
հուրդ հեթանոսաց հաւատոյս հանձարա-
խոյզ խնդրանացն՝ յիմարութ։ Բայց մա-
ւբնելոցս ՚ի քեզ՝ վեմ, ՚ի հաստատութդ ար-
ձանացուցիչ։ ՚Ի վե՛ որոյ պօղոս շինել պհա-
նատ՝ ՚ի խորհուրդ քում փրկութ զզործն
աւետարանաց. և զմնն քո զործօղ անձառ իցն՝
մեկ

մեկնեալս յայտնեալ քարոզեաց։ Եւ զծայր կատարածի ընթացից բանին՝ ՚ի քոյդ գլխաւորեալ ուխտակցութի կամաց առաքչին։ Վասնզի քեւ ընկալաք ՚ի մեզ զքո՝ զոյգ զօրութին եւ զիմաստութին։

Ցեղ՚րոց բաժանեալ ազգաց հրաւիրակ կոչման՚ի մի եկեղեցի նշան հաշտեցուցիչ։ Վասնզի հեշտաւէտս մարդահաճոյ հօտից բանիւնողաց՝ իբր գործի հեշտման ստացմանց հոգեւորիդ քննարահարուէ՝ դու առաջնորդես ․քանթէ՝ անբանից ջոկաց հաւաքման։ Վասնզի ՚ի վայր դալարի անդորրաւէտ յուսով հանգստեան զամենեսեան գրգեալ պարարես։

Բախձան պատճառ հաշտութէ տն անսկըզբան՝ ընդ ծառայն սխալական նշանդ խաղաղութէ։ Վասնզի ՚ի վր քո նուէրն բարեաց փրկողին արեան՝ մեծաբարբառ առ նա յերկինս ձայնեաց։ Եւ ոչ աբէլ՝ որդի ադամայ՝ մահու դատաւ գուժատու, այսպէս եւ դու կարապետ կենաց յարուէ ես աւետատու։

Յանկացողաց երկնիցն փառաց՝ նրբական հետս շաւղաց նշան լուսապորդ։ Վասնզի քեւ իշխանութ մոլեգնութ չարին պետութեան՝ յաւէտ կապտեցաւ. եւ ճանապարհ մոլից դրախտին՝ լայն եւ ընդարձակ մարդկան հորդեցաւ։

Նուէթ ածային շնորհացն գուշակման՝

քննուայք ո՞ր մարգարէիցն 'ի քեզ հանդու-
ցեալ նշան հրաշագործ։ Քանզի զվաղա-
ճարբառ երգոց նոցին կատարումն յո՝ հե-
ծելութ՟ն 'ի քեզ կրեցեր։ Սոր ճաշակմամբն
լեղւոյ ընդ զմռսեալ քացախին՝ զամենայնն
'ի լրումն ածեալ աւարտեաց․ և փառաւո-
րեալ մարդացեալ որդին ա՟յ, զերկրպագութ՟
յիմնայեաց և 'ի զգալեաց, 'ի մի անունն
ք՟ս կրկնեաց։

Փառք անփոխանորդելի երկնից արքայութեն
ժառանգողի նշան լուսապանծոյդ։ Քանզի
զյառաջադրութ՟ խորհրդոյ կամաւոր մա-
հուն խորդ յո՟ քարոզեալ, զոյս քեզ անուն
սեպհականեալ հաստատեաց։ Որով և ժա-
ռանգեաց զփառս սրբասացութե միշտ օրհ-
ներգութե՝ ո՟ց 'ի վերնոց, և'ի ներքնոց․ խա-
ղաղաքարն աւետեցերաց՝ որ զթշնամութին հէն
'ի քեզ նահանջեաց։

Քաղաքիս լուսոյ՝ նոր եղէմի՝ մահարձան
անմատչելի։ Քանզի զմոլար աղանդ-
տասյօղն թիւր դաւանման՝ որք առ այս ե-
րևումն զմարմին բանին մարդկութե համ-
բաւեն շրթամբք նենգութե, դու ցրես զնետս
չարութեն՝ ընդդեմ կառուցեալ անկան ո՟ր-
արձան։ Դու հաստատես 'ի գիծ քառանման՝
պատկառելի քոյին տեսութե զանյայտն հե-
ղուսեալ, զանմարմինն բևեռեալ, զանմահն
մահացեալ․ և մերայնովս՝ հօրն անեղի խա-



կա

կանխեցին որդիք՝ ՚ի չափն քո զճգնաւորութիւն
աւարտել:

Ահա այսքանեօք և այսպիսեօք՝ և ևս ընդ-
բազմօք բարեգործ բանիւք միշտ բա-
րեբանեալ քեզ նշան: Որ զմեծագործ-
պատուհաս պարծանաց պատուոյ պսակին՝
՚ի ձև պատկերի քում տեսանել մեք ժա-
ռանգեցաք: Եւ մնուան անձուկ դրախտին
անեկի՝ ՚ի բոցեղէնն սրոյ պարփակեալ, քև
մարդկան ազանց հորդեցաւ: Եւ սեփհականս
կաթուղիկէ անստասանական վերինն սիոնին՝
սուն և նեցուկ նորին ամրոցի՝ հաստատ
պնդութ դու խարսխեցեր: Ի այսորիկ
խոստովանութի յօդակապս բարսանունէ՝
փոքր և նուաղ է քում հիացմանս. որ դե-
րազանցդ ես բանից գովութե: Ոչ է թէ ըն-
տեղծիչն կուսէ ՚ի քեզ ծանուցաւ, այլ
զորովին շնորհս ոչ ընդունիլ խոստովանես
ցի երկրածնս մարդ՝ ՚ի քեզ վստահացեալ
անեղծ զօրութի: Նա այսուհետև գերա-
զանց սրին նուաղաց, խմացական մաքուր
նուիրօք, և մնացորդն պատարագօք, օրհնել
թինկեալ և գովեալ ես ՚ի սահման անստուար
և անստուեր յաւիտենին: Աշան պայծառա
փայլ: Սպաչ տերունական: Գործի փրկչին
յաղթութե: Նեցուկ մեր հաստատունէ:
Յուսյ բարի հովանուն: Ենք ամուր պահ
պանութե: Պարսպական միշտ խաղաղութէ:



Աշ

Պաշտելի հրեշտակաց և մարդկան։ Ը. Հալ_կու դխնաց դխմեցման։ Պատաապարտէջ
Նոցին յաւիտեան։

Օրհնեալ ես փայտ կենաց. որ դու միայ_նակ. լուսոյ ընդունակ, 'ի փառաց ան_քակ. շնորհացն գտակ, երկրի երևակ, ծագ_մանն դիտակ, արարչին խօսնակ. մէջնորդ_համարձակ, ամուր աշտարակ. Այ 'ի յա_ւարտումն լոման շրջանակի, եօթնեակ դա_րուց վախճանի, յորժամ բնութ նիւթոց լուծանի. միայն դու 'ի նորան հիւթ ան_նիւթից վեհագոյն, ձկտեալ ձգիս 'ի բար_ձունս երկնից փայլակնանման 'ի տես հայեց_ման ամէնուեթեն` յաւուր գալստեն անմահ արքային։ Դու ղջաղթանակ փառացն քն յայն ժամ 'ի քեղ լոմամբ տու բերեալ, պարծե_ցուցանես 'ի պայծառութ քումդ տեսակի զքև պանծացեալսն։ Դու փայլումն նշուլից անօրինակ քո գեղոյ յն տարածեալ, տեսակ լուսոյ մեծ լուսաւորացդ տարերականաց` 'ի ջրդ ապաստանեալ տիրական ծագումն, աղօտանունաց և անծագելի տուներին ծածկեալ մթանան.

Դու որդ` մաքուր ընտրութ ոք պատմու_ճանին, անդատապարտ համարձակութ, 'ի դէմս անպատկառ դեղոյ երեսաց, 'ի հո_գի շնորհաց, 'ի յոյսն կենաց` անբերօղ պար_տեաց` չարին յանցանաց, 'ի հանդերձ փառաց`



Հոր

շնորհքն հրեշտակաց՝ միշտ երգեցողաց՝ զգու-
շական և աննկրհելի փառաբանողաց, զեր-
կրպագուս քում Նշանի՝ զուգապարակ-
ցեմ։ Թերևս՝ ոչ՛ յերբեկս աւարտման աւուր
այսմ յաւիտենի արժանի լեցուք և՛ի սկիզբն
վաղորդայնի մշտատևն ժամու՝ փառաւո-
րել զքեզ կենսատու՝ ՚ի կանուխն ժամանումի
և յանադամն յարաձգումի, ՚ի գիծն լայնա-
կան և՛ի մակերևութն հարստական։ Որ ես
միշտ բարեպաշտական երգաբանութ երկրպա-
գեալ․ յի արեամբն միեալ․ և զէն Նորին զօ-
րացեալ։ Որ է ՚ի քեզ ընդ քեզ և առ քեզ․
՚ի միջոց տարածման երկնաթռիչ և փայ-
լակնընթաց խաչիդ ձևակի։ Որով վարժէ
և յարմարէ զմեզս կրօն՝ անանջրպետ դաս-
տիարակութ ըստ քում խորհրդի՝ անան-
ջրպետ միականութ ընակեալ բազմեալ
միացեալ և ոչ հեռացեալ։ Որով ըմբռնէ
զատարուցեալքս՝ ՚ի լուծդ ածեալ ըզձգմի։
Եւ ինքն ըմբռնի բովանդակապէս քև ՚ի
մէնջ՝ աստ և ՚ի հանդերձեալն ապառնի։
Յաղագս որոյ ՚ի գովեստ ներբողական ձա-
ունս փոխնձանի՝ Նմա փառք Յի Քի ընդ
հօրն՝ և ընդ հոգւոյն ազգակցի, ՚ի խոստո-
վանողացս զդաւանութ միոյ և միայնոյ պաշտ
ունելի և պաշտելի երկրպագելի ոչ Երրոր-
դութեն։ Որում ըստ անսահման գովութե եր-
գոց, ըստ անկէան խնկութե, և ըստ անկշռան



եշ

իշխանութե, ըստ էականն յարակայութե, և
ըստ արարչականն զօրութե․ որ ՚ի ստեղծ_
ուածն առաջին, նոյն և յերկիր գոյացուցա_
նելս նորոգմամբ, ևևս առաւել յանփոփոխ
և յանզուգական յաւիտեանս ամէն։

---

Պ․ այսն չորք տառեալ՝ ԵԷԲ ճշմարիտ խորհրդոյ
տեառն՝ ըստ ՚Ի եկեղեցին խաչին խորհրդոյ, և
ճ՚Ի ամբողջ երգաբանութե ամբողջագոյն։

Պուսմանք խմբից դասուց երջանկացն՝
պատուասիրեն բերբաբեղուն բանիւք
գովեստի՝ ըսկզբնակայն կենաց գոյից՚ի կեցու
բանից ըղձալձայնութեց։ Ու որ փոքր տաւ_
ղօք և քնարիւք զգայլին սրտի շարժել զգոր_
ծի՝ զգերազանցեալն՚ի լոյս անմատոյց՝ ուրա_
խութե վերադրութեան։ Ու զանձառ ա_
բարչութե հրաշագործ ամենաստեղծն տրութ
օրհնելով, պատմառ փառաբանութե խկութե
հաստչին զհաստատածոյս ունուն գոյութ։
Ուր և ճշմարիտն բան ցուցանէ․ ՚ի ստեղծա_
նելն իմն զայս տմ, բոյլք զօրաց դասուց
երջանկացն օրհնեցին զիս մեծաձայն․ և տմ
հրեշտակք իմ գովեցին զիս։
Ու արդ՝ եթէ հրափայլ և երագնթացն
փառաբանչօք՝ վերնաթռիչ պատգամա_
ւորօք՝ հոգեխանիւթ և աներծական կենդա_
նեօքն նա օրհնաբանի։ Որ թէպէտ և նոքա
վեհք են բնակութ կայից սաոլեցս, և նշյլ
երկ

երկրի՝ լուսոյ առաջնոյն, այլ սակայն յոյժ
աննմանաբար առաւելութեամբ առ ընութ բարի
բանին բարձրեալ՝ բարեզարդաբար բերկ-
րանօք բերին։ Իսկ որ գոհաբանի առ 'ի նմանէ
որ աստուածն՝ լայնածիգ հեռաւորութեամբ և ընդ-
արձակ միջոցաւ յաւէտ անջրպետ նշուլիւքն
ծածկի 'ի նոցունց։ Ապա զայն որ զանհաւան
հրեղինաց 'ի հողեղէն յարկին պարունակեաց.
և զանձառն 'ի սերովբէից՝ զգալի մարմնոյ յ-
գիշն պատեաց. և զերկրակերիչն դասուց հրեշ-
տակաց՝ կաթնասուն ստեամբքն դիեցոյց,
որ երգ պատկանագիր 'ի ձայն գովեստից օրհ-
նեալ պատուեցէ։ Օ մարմնարանն անտե-
սին, և զձեռնարանն մեծին։ Օ տաղաւարն
տիրական, և զխորանն ածական։ Օ խառնա-
րանն ձուշակման՝ անապական խառնմանուն։
Օ սրբարանն մաքրութե, և զընդունականն
զգաստուէ։ Օ նպատակն կուսուէ, և զօ-
րինակն երանուէ։ Օ հարսնարանն անլու-
ծանելի՝ անժամանէկանն փեսայի։ Օ բնա-
կարանն հաճուէ՝ կամաց աներկն ածուէ։
Օ պղքան վտարդ շնորհաց ընդունակն,
և ոչ նոքին ածուէն օրհնաւք հրշտակացն
պարք՝ որ պարտն է պատուել ժպրհին։
Ուղ թէ՝ մարդ երկրայինն 'ի կշիռն չափոյ բե-
րանոյ հողազանգուածս հիւթոյ մնեղիս
մարմնոյ։ Բանիւ անձառութեամբ անհասակա-
նաւ՝ վեհագոյն ածին փակել գտանի. և ոչ



զօ

զօրէն երկնայնոց՝ զարդարչին անհաս անօրէ-
նութեան զանքննին ծնօղ՝ արժանապէս վերաքա-
րոզել։ Քանզի թէ ըստ առաքելական ձայնին
պօղոսի՝ մարդն անձնաւորն ոչ կարէ պատ-
մել, այլ որ զլուի բանին էութեան ծածուկն՝
յղացեալ կրեաց ՚ի մարմնի, զիարդ զննեսցէ
շարժութեան շրթանց լեզու մարմնեղէն զնա
ճանաչել։ Ո՜վ թէ դաւք պետութեց անմա-
հից վեհից վերնոց բնակութեան՝ եկեղեցեաւս
յայս խորհուրդ խորին յառեցան, այսպէս յայտ
է թէ՝ մեծ է առ նոսա հիացումն սքանչելի
գործոյս այսորիկ, քան զհասումն երկրաւո-
րացս բանից պատմութե։ Բայց սակայն եր-
գեսցէ՛ բանս ոգւոյ զօրեսցէ ՚ի բաղձանաց
սրտի փափագման՝ նմին ընծայ օրհնութե
փառաց տեսչութեն։ Զի թէ երկինք՝ փա-
ռացն ոչ լինին պատմաբանք, և յանդորէն
դարձ տարագրելոյ առնձին յուղայի՝ ժո-
ղովք ժողովրդոց տեսին զփառս անեղին, ա-
պա այժմ յերևիլ բանին ՚ի մարմնի և լինել
մարդկին ազգաձևան կերպիւ, հարկ է յոյժ
ճանհողական ոչ միայն անմարմնոյն՝ այլև
զդայնոյս արժանաբար ըղձականութե ճչել
զձայն բերկրանաց բարբառոյ բանից օրհ-
նութեց։ Քանզի խոնարհս այս երկիր՝ եղև
տիրական՝ դասու լծակից ընդ աթոռակիր եր-
կնից վերին։ Այս խրախուսեալ հոգևորական
հրաշամնօք երկուցն դասուց ՚ի մի խումբ



պա

պարու՝ տօնս տարեկանս մրկչին փայլմանն
կատարեն. զգայական սեռս եղականաց, և
անմարմին դասք հրեշտակաց. յերևելիս ան-
տեսականաց, և յիմանալիսն ծածկեցելոց։
Ընդ որս և մեք կցորդք այսօր եկեղեցի դաս-
տըր վերինն յարկի երկնայինն առագաստի,
պարեմք հոգեւոր տարփմամբ՝ երգելով քեզ
ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց.
Ո՛վ ամենասուրբ արրչընկալ տիրուհի և Աստուա-
ծածին. որ զանտանելին երկնի բարձրութե և
երկրի լայնութե, ծովու խորութե և անդնդոց
անհասութե, զ'ի քէն մարմնացեալն խոկութ
էութե, յորովայն անձուկ ընդ քում սնեկի
կրել զօրեցեր. Նա որ հայեցեալ երջանկին
յոբայ՝ պատասխանեաց 'ի ձև առակաց՝
զանբաւութիւն մեծին սքանչացուցել, յումեմն
դիմաց ասելով, եթէ չունիմ զնա. և զայլմէ,
թէ չէ ընդ ինև. Որում երգակցեալ վեհին
յովհաննու 'ի բանն յայտնութե սաէ հիաց-
մամբ, փախեաւ երկին և երկիր 'ի մի սաստ-
նութի 'ի դիմաց նորին, և տեղի ոչ գտաւ։
Քանզի արդ որև յաւէտ անձկութե ամփո-
փին 'ի բերումն բովանդակութե արարչական
բանին հանգստեան։ Իսկ դու ընտրեալ 'ի
զարմէ և'ի զանգուածոյ մարդուս զաւակի ոբ
Ածածին. Տարար զնա 'ի քեզ ախորժ հան-
գըստեամբ կամացն հաճութե. եղեալ երկին
անձնական՝ բանական բուսոյն։ Իւր զգայա-

կան անդաստան՝ կենացն հացի։ Իբրու վառա_
րան բորբոքման՝ անշէջ կայծական։ Իբրու վայր
դալարաբեր՝ հայրական ծոցածին ծաղկին։
Իբրու ծառ երկնուղէշ՝ անթարշամ խնծորին։
Իբրու գործ՟ն գոյութ՟՝ լուսատու մարգարտին։
Իբրու լեառն արձանունակ՝ երկրաւոր վիմին։
Իբրու այգ արփիասկիզբն աստեղն առաւօտին։
Իբրու յարկ դիտապետին՝ բանական հօտին։
Իբրու արքայարան լուսակերտ՝ անմահ թագա_
ւորին։ Իբրու մայր կաթնամատոյց՝ բնաւից ըս_
տեղծողին։ Իբրու հարսն սրբուհի՝ հօրն քի՟։

Ցնծա՛ եւ ուրախ լեր ձայնիւ երգոցս օրհ_
նութե՟, քաղցր երանութե՟ բանագովութե՟։
Խրախացիր եւ ձայնիւ ողջունի գաբրիէլեան
աւետեացն՝ բերկրեալդ ՚ի կանայս։ Ընկալա_
րան արժանաւոր բանին խոնարհութե՟։ Տնկա_
սաղարթ մարմնոյ ծնութե՟ն խառնարան։
Իւղարան օծելութե՟ ք՟ական անուանադրութե՟։
Որ նախ քան զծնանիլ բանին առ՚ի քէն՝ ան_
թերի լրականութբ՟ հրեշտակական թեւոցն
սքօղմամբ՝ ցանկ արկել պահէիր անաղտ ան_
բծութբ՟։ Դու որ հաճեալ հաւանութբ՟ Երրոր_
դական փառք ծնութե՟ն՝ ճանապարհ արար
հանգստե՟ն։ Քանզի հոգին որ եկն ՚ի քեզ՝
յօրինօղն անախտ սրբութե՟։ եւ բարձրելոյն
հօրն զօրութբ՟՝ մօրդ հովանացաւ։ Արդ այն
պատրաստել զքեզ ընդունակ։ Իբրու որ բնա_
կեցաւն էակիցն հօր բարձրելոյ՝ էր անճա_

մանձնակ։ Եւ որ յօդաւոր մարմնով ՚ի քէն ծը-
նաւ՝ սկիզբն ունի էութե նախք զարուսեակ։
Աւստի և զյօդաւոր մարմինն միակ, խառ-
նեաց ընդ ածական բնութեն իւր անքակ։
Եւ սեպհականեաց զաթոռն հօր իւրոյ
դաւթի յաւիտեան. Թագաւորեալ տանս յի
և երկրիս քաղաքի։ Արկեալ սոցա ուղղա-
նապարհի զփայտակերտն գործի՝ հանել ՚ի
կամարն երկնից տաճարի։ Եւ կանգնեաց
զխորանն կործանեալ ադամեան մարմնոյն՝
՚ի նորոգութի շինութե քանական ուխտին
դաշնաւորութե։

Որդ՝ ապաշխարեաց բազմամթիւ և բարձրա-
գոյն բարեաց ընդունակ և մատակարար՝
միայն դու մաքուր կուսութե էին խնկարան
տիրուհի օրհնեալ որ ածածին։ Քանզի
իբրև զձիւնշուշան խառնութե խնկոց կնդրկի
և զմուռ տէ տաշխին և կասիոյի՝ բորբոքեալ
հրով մաքրութե բարդեցեր զծուխ բուրման
անուշահոտ սրբութե ՚ի հոտոտելիս այ և հօր
հաճութե։ Աարուք մաքրել, բարութե լցել,
հեղութ արձանացել, առաքինութ կատարել,
քաղցրութ աղբիւրացեալ որ ածամայր։

Ընդա և ուրախ լեր յարկ անճառ ծնելոյդ
՚ի քէն աներղ այ։ Որ ՚ի նմին յորդւոյն քոյ
խնամոց՝ հրաշազարդ փառօք ամբարձար ՚ի
կատար աւարտման վերնայինն երկնի լու-
սայլես։ Եւ թեւօք թեթեւութե հոգւոյն սր-



լո

լուցեալ՝ յիմանալիսն վերացուցեր 'ի կայանս
հանգչիլ: Ուստի և զանհաստատելին իշխանա
կանս իմացմանն՝ զանկապտելին զգայութե սր
տի նկատմանն՝ զկայելս անտեսիցն՝ անձնապա
հոգխադ ըկեալ, զանեղծելին փառաց ծոխուն՝
քեզ սեպհականեցեր ով ա՟ծածին:

Երանեալ ես մաքուրդ փայլումն, կրօղ
արարչին առաքինութե: Որ սքանչելարուեստ
հրաշիւք ներգործեալ քև 'ի մեզ զփոփո-
խումն մեծ արգասեաց փառացն և փրկութե
յեղանակեցեր: Քանզի զանհայրն մանուկ՝
մայրդ որդեպէս գերագգուշեցեր. և ըմբըռ-
նեալ բարձողաց ձեռացդ բազկօք՝ զանպա-
րագիրն էակ մարդացեալ՝ 'ի համբոյր հայե-
լոյ մատուցման շրթանցդ ողջագուրեցեր:
Որում գտաք մեք ժառանգակիցք՝ արքայ
հայր զոհ առ ձայնել՝ 'ի ձեռն քումդ միջ-
նորդութե ով ա՟ծամայր:

Բարեհամբաւեալ ես մաքրութե շաւիղ
նախընթաց կուսից: Որ զլրութ ուսուցն
գայից՝ կարօտաբար կաթամբ լցուցեր. և
աչաց մարդկութե զանտեսն 'ի մարմնի ե-
տուր նկատել: Այդ զամբերան գոհութ՝
տացուք քեզ օրհնաբանն՝ անձկով տարփման
ով ա՟ծածին:

Երանեալ ես դու 'ի լեզուս անբիծս ընտ-
րական շրթանց՝ ծաղկեալ յեսսեայ պտղոյն
մեր կենաց: Որ 'ի դրուն խաւանութե քաւից

յերամակեալ տարերաց՝ անկցորդ մնացեր՚ի մանկ հողածնելոցս հասարակաց։ Ո՛չ բե-րող ծանրութե՛ բնակակիր համաստեղծս կա-րեաց, այլ քրոբէօրէն հրաբերան բղխօղ-նշուլեց։ Ուստի երագ ընթացիւք հեռաց հեռացեալ ՚ի վայրն անմատոյց, յորվին մե-րին ընծայեցար ՚ոբ ծածանայր։

Ուրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ ՚ի կանայս, Որ դժուարնտել դաստիարա-կաւ խաչին վարժեալ կրթեցար, որդւոյ քո կցորդակցութ՝ միատեւակն ժուժկալութ՝ կրե-լով գերաշխեալ վշտաց ծնիցելոյդ՚ի քէն ՚ոն, մշտաչարչարն մեռելութ՝ անձնատուր տօ-թով խարուկեն։ Իբրև զորոշ անարատ քա-հանայական նուիրմամբ ՚ի վր սիրոյ սեղա-նոյդ մատեար՝ ասրաբոյս և ստեւագխակ գեղմնաբարձ մաքուր պատարագ։ Ի ճգնա-ւորական վարս ողջակիզեալ, քան թէ ՚ի սրոյ հանդէս խողխողեալ։ Ո՛ այսուիկ՚ի նուէր քոյ զենման՝ հրեշտակացն պարք պաշտպա-նեալ, ընդ տապերոցն գումար գասակցեալ՝ զնիայն արժանիդ պատուեալ գովեին ՚ոբ ծածածին։

Ուրախացիր համայն տարփանօք բերկրեալդ ՚ի կանայս։ Որ ՚ի կոյս և յանարօր արգան-դէ բան բեղմնաւորեցեր։ Ցաւոց անփծից՝ արմատ օրհնութե։ Հօրն ադամայ՝ որդի բերկրութե։ Ոյ շնորհ ունելով քեզ օրհ-



նեալքս

նեալքս ՚ի յորդիդ քո փրկիչ Տէր, երանեմք
քեզ որ ածածին։

Ուրախացիր անբաւ բերկրանօք Հօրն լու-
սոյ, ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ։ Որ
յօրէնս երկրայինս աղացաւոր կրից, զերկ-
նայինն ածեալ մատուցեր. և զաննմանն նմա-
նեաց մարմնադրուած ազգի մարդկութեանս ՚ի
չափ հասակի դեղոյ՝ գեղեցիկ զատեղն վայե-
լուչ ՚ի լիբանանէ մեզ պարգևեցեր։ Ուստի
զպատկերն նախահօրն ՚ի քէն ստացեալ նորոգ-
հաստատեալ՝ գոհաբանեմք զքեզ տիրամայրդ։

Ուրախացիր յողջոյն նախընծայ երկնային
աւետաւորին տաճար սրբափայլ։ Որ լուսով
ածակման ուռճացեալ լցար. և երկրաւոր
մարմնով՝ երկնայնոյն աթոռ կազմեցար. և
արեգակնապէս հոլովմամբ առ արուսեակն
երագ ընթացար։ Որ բացեալ դրերան պա-
ռաւոյն ամլածին որդւոյն՝ օրհնէր զօրհնեալդ
՚ի կանայս՝ որ ածածին։ Նաև դու լցեր
զտունն զաքարեայ բարբառովն գոհութե,
յօրինակ հանրական եկեղեցւոյ՝ որ է քո
միշտ օրհնաբան։ Ո՜ է երանեն ահա յայնմ-
հետէ քեզ ամ ազգք՝ ըստ բանի ածազա-
կից քում դաւանութե, սկզբնաւոր կուսից
անարատութե. ՚ի բերկրեալ լեզուս շրթանց
զուարթնոց միշտ բարբառեալ որ ածածին։
Քանզի արդ եկեղեցի դասուց անդրանկաց՝
զ՚ի քէն մարմինն ՚ի բանէն անանջատ՝ հաստա

պատուէ հօր փառաւորէ յերկս սրբասցս։
Նա որ հպաւոր քո գոլով ահաւոր խորհր-
դոյդ տեսող՝ զանճառն ուրախութի յաւէտ
վայելես, Ով զոր նորա թեւաքօղելով դի-
մաց ծածկութիւ ՚ի բազցուստ ակնարկեն,
դու յաւէտ համարձակ նմին կաթնածիր
մայր ցուցեալ ծանուցար. և ՚ի մէջ դաստա-
կաց ձեռացդ՝ որ զմանուկ զծերն հին աւուրց
գգուանօք ընկալար. եղեալ կառք անձնա-
ւոր կայից, բազմելոյն յաթոռ քրովբէից։
Ո՛չ զի ոչ ընդ քեզ միայն, այլ ՚ի քեզ։
Ո՛չ միայն փարեցաւ բազմեալ, այլ բնա-
կեցաւ տաղաւարեալ։ Ո՛չ միայն միացաւ ՚ի
զանգուած մարմնոյ, այլ մարդացաւ. ա-
ռեալ զկերպարան ՚ի քէն սկսելոյ։ Ո՛չ միայն
մի զօդեցաւ քո՛ յերկուց գոյութեց, այլ ըն-
կղմեցաւ յանապական անօսր էութին՝ մարմ-
նոյն վերբերումն։ Ո՛չ միայն միջնորդաւ ան-
ձինն ը հոգոյ միաւորեցու դիտակ տեսակօք,
այլ եռամանն խառնել էութք միաւորեցաւ
անշփոթելի։ Ո՛ի որդի ծերովս բնութք՝ յա-
թոռ հօրն ի՛ւր աջոյ՝ յերկնաւորացն մեշտ
պաշտպանեցաւ։

Յաղագս որոյ և մք երկրաւորքս՝ զմատա-
կարարդ և զսպասաւոր մեծս խորհրդոյ՝
երանեմք ըղձական երգօք զանժամանակն
էութե երջանիկդ ծնող։ Որ զանի և ամցունց
պսակէն՝ հոգեշունչ երգօք ՚ի քեզ ընծայար։



Ո՛չ

Ո՛չ 'ի մասնէ, այլ 'ի լրումն։ Ո՛չ հատմամբ, այլ հաստատութեամբ. Ո՛չ բաժանաբար, այլ ամբողջապէս։ Ո՛չ փոփոխմամբ, այլ փոխարութեամբ։ Ո՛չ 'ի ծիրս սահմանի տեղւոյ, այլ 'ի սեփական լայնատարր ոգւոյ։ Քանզի զբերողն 'ի կշիռ ձեռին զերկիր և զերկինն՝ տարար յարգանդի։ Եւ ոչ միայն 'ի տես նկատման աչաց նայեցար 'ի նմա, այլև շօշափմամբ ձեռաց ծանեար։ Ո՛չ միայն ողջունել զանհուայն շրթանց, այլև ըմբռնել։ Ո՛չ միայն զննել զհասարակաշէն խորան մարդացելբանին, այլև անուանել կոչմամբ յա՛ դ.քն այ։ Ո՛չ միայն առեամբքդ սնուցեր զանժամանակն ըստ աւուրց, այլև աճմամբ հասակի զնոյն ընծայեցեր։ Ո՛ որ խոստովանի հանրական եկեղեցի զծնեալդ 'ի.քէն՝ ած ճշմարիտ, ընդ նախեղակ գոյակն միացեալ. 'ի տեսութէ իմաստից .քննութ մեր փակել։ Յորոյ տիպն տպացուցի խաբօղն յակօբ՝ ըմբռնեաց զմայր տուցեալն ընդ իւր պնդապէս. և զանխուլ խորհրդով՝ զածատեսն անուն ընկալաւ։

Նայեա՛ց և որ 'ի.քէն ծնեալդ մարմին՝ 'ի յարգանդ սրբոյդ սենեկի՝ ընդ ած խառնեցաւ. և խաբել զերդօմն մարդկան թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացաւ։ Ա՛յ ո՛չ տեսօղ ոյ, այլ՝ ճշմարիտ ած անուանել, զամեն յինել անուն փոխադրեց։ Մակս որդ՝ լե բերանով զպաշտպանդ փրկութ այսմ մեծս խորհրդ

 դոյ

Որդոյ՝ երանեմք զտիրուհիդ մեր Ածածին։
Որոյ տեսչութեան այ՝ նախագիծ ՚ի ծովէ
քայլն պատուական հրափայլ՝ և սպիտակ
մարգարտին մաքուր կերպարան գոյացեալ
ցուցաւ։ Քանզի արդարև դու ես այն
պատուական յեղիս ծովէ ընտրութեան, որ
զածային հրոյն տարար կերպարան։ Ո՛վ
որքան մեծ է ՚ի քեզդ աւարտել խորհրդ֊
սրբուհի։ Ո՛հ թէ առածք մարգարէիցն
հոգեկիր յղացմամբ՝ ինչ ծնողք ասացան։
Ապա դու որ զԲանն Ած անձնաւոր՝ հայ֊
րենի բնութեան հպաւոր՝ ՚ի սենեկի քում մաք֊
րականի՝ մարմնապէս բազմածանուցեր, զոր֊
պիսի արժանապատիւ գովութիս ոչ ընդու֊
նիցիս։ Ո՛վ շնորհաշուք գեղով արփաւոր
ծածկութիւ՝ յանմատոյց գեղեցկութեան պա֊
ճոյճ փաղփաղել։ Ո՛վ համեստ հեզութե՝ խո֊
նարհ անբծութե՝ կերպասիւք լուսոյ ՚ի հո֊
գւոյն պարապօղեցել։ Ո՛վ զարդուք երկ֊
նայնովք ոսկեզօծ սրբութե՝ արծաթափայլ
մաքրութե՝ ականակապ պսակ քեզ փառաց
զբարձրելոյն հովանի ՚ի գլուխ ընկալեալ։
Ո՛վ քառեակ մանեկաւ նշոյլափայլ մաքուր
ուլանցն յեռամամբ՝ այ հոգւոյ և մարմնոյ
խառնմամբ ՚ի մի էուի երիցն հիւսմամբ ՚ի
յորդւոյն լանջս ըստ քո շնորհօք առ լցեալ։
Օրհնեալդ միայն ՚ի կանայս՝ շրթամբք քա֊
հանայուհւոյ մօր մկրտչին յովհաննու փա֊



ռա

ռաւոր. և 'ի դասուց համազարմ նմանացե-
ղեաց՝ ցանկալի երգ օք ներբողականս տաղօք.
Ո՜չ եթէ բանականս մարդոյ գոյութ՛ն 'ի պատ-
կեր նոյ 'ի սկզբանն ստեղծաւ, և այսր աղա-
գաւ ստեղծողին զշնորհս կալաւ: Այս և
առաւել քեզ պարտական եմք երկրպագութ՛
ունել շնորհ տիրամայր. որ նոյ 'ի ծառայի
կերպարան ստեղծման եղեր պատճառ: Ա-
որ 'ի լրումն աւարտման՝ մարգարէական կը-
տակն հասանիւր. այն՝ զոր ասէ. եղեցի 'ի վե-
րան աջ քո, և աջ քո 'ի վե որդւոյ՝ 'ի քեզ
խորախուսեալ: Աջ և կարողութին և բազուկն
հօր միածինն 'ի քեզ հանգուցեալ, և զնմ
որդիս մարդկան՝ վկայս և երկրպագուս իւր
զօրացուցել: Այն նկարագիր՝ և կերպա-
րանն հօր գոյութէ 'ի քեզ բնակելովն՝ սրբու
և արդարութ լրման ծի ընձեռեց: Այս յե-
րաւն և արժանապէս հոգեշարժ քնարիւք

զքեզ բարեհամբաւեմք նը ծածկն.
Ի մարդկային զարմէ՝ հրեշտակ երկնային.
Ցեղծականաց սեռեցս՝ անմահ սերովբէ.
Ի հողային նիւթոյ՝ ոսկի սափորայ. Ի ծա-
ղային բերմանց՝ շնորհալցս մարգարիտ: Ի
յեսսեանն բուսոյ՝ քաղցրապտուղ ծաղիկ:
Ի յաւուրց նախնեաց՝ ձիր օրհնութե.
Յօղյն հանդարտի՝ տմպ անձրևածիր.
Արևուն ծագման՝ ակն արփիափայլ: Ներ-
կացելոյ այգւոյն՝ սատղ առաւօտի: Իշէ-


բոյն

բայքն մթին՝ խօսնակ բերկրանաց։ Օրհնի
ստուերքն՝ տառ ճշմարտածառ։ Ասկս որոյ
իբր ընխւթ գործունեայ այսքանեաց բա-
րեաց՝ օրհնեալ ես դու 'ի կանայս։ Նախա-
ստեղծին մերկացելոյ՝ փառք անկողոպտելի։
Աշտացելոյ անխծաղորտ մօրն՝ սփոփիչ
քաւութե։ Որդւոց նորին խռովութե՝ խա-
ղաղութե հայնստու։

Լու մորդ՝ որ բան բարդատելով զանհամե-
մատ քո մեծութիդ լեցի կարող գերա-
հռչակել։ Արարչին մայր։ Անհասին ծնող։
Անբաւելին գրկարան։ Ամենակալին յանձան-
ձիչ։ Փառազարդողին զգեցուցիչ։ Եր-
օրհնելոյն գրգիչ։ Ահա յաղագս այսորիկ
ըստ անսուտ քո բանին՝ յիրաւի տացուք քեզ
երանի մայրդ լի։

Աննիրհելի դիտմամբ լուսակիր աչօք նկա-
տեալ տեսակ։ Կտակ մակագիծ, անեղծ-
պայմանաւ արձան հաստատեալ։ Սահման
յարակայ, մեծութե կցորդութե։ Երկուց
միութե անայլայլականի, կապ պատկանակիր։
Աեհին պատկեր, կերպիւ կշռորդեալ։
Ծեթե պարզու, հիւթիւ բաղկացեալ։
Տառ տարրերական, տողիւ ձեւացեալ։ Տումար
անջնջալի, անսխալ դրոշմեալ։ Ատեան մե-
ծութե, շնորհիւ նկարեալ։ Նմանակ ընտրութե,
բանիւք բարդեցեալ։ Արձան անձնական, ի-
մաստիւք զօդեցեալ։ Կնիք մատանեայ, տրամե


կեր

կերպագրէր։ Զգեստ լուսանիւթ՝ երկնից
արքային։ Օթոց սրբութ՝ անմահ բնակողին։
Յարկ վայելչութ՝ անեղ շինողին։ Առիթ
ծնդկութ՝ բանի անեղին։ Գործի մարմնութ՝
վեհին բնութ։ Պատճառ պատշաճից՝ անպատ
ճառ ծննդոց։ Օրինակ ուղղութ, անայլայ
լակ վրիպութ։ Անպակաս աճելութ, լման
թերութ։ Իսկուհի երկնային, կենդանեաց
գաւառին։ Սանակից շնորհընկալ հայրա
կան գթութեան։ Անպարտակիրն աղգակցութ,
երկնից վերստին։ Անամանակն արգանդի
ծանուցող ծննդեան։

Դու զհօրն լուսոյ զորդի հարազատ՝ ի սուր
բն կոյս Քի՝ մայրենի կաթամբ ջամբել
դիեցուցեր։ Դու զմի թեւովք՝ խնամոյն պահ-
պանութ զպարունակօղն պարփակեցեր։ Դու
զկենդանութ ընթացս՝ ի լուսազարդ կենացն
շաւիղ ածեցեր։ Դու ըստ նմանութ արարչին
օդային թռչնոց՝ ի յանցաւորաց աստի փո-
խեցար։ Դու ի մէջ դասուց հրեշտակաց՝ ու-
նօղ Քի յայտնեալ ծանուցար։ Դու լուսարփի
ամփոփ առ ի նմին պատուել համբարձար։
Դու հողեղէն հաստուած՝ ի քրովբէից աւել
հանգուցար։ Դու ի կանանց ազանցն կերպից՝
արուսեկին տեսակ տեսար։ Դու զնշելի բնութ
մարդկային՝ յանձառ շնորհ խորհուրդ ծած-
կեցեր։ Դու ի ստեղծողէն քո և համայնից՝
հպատակօրէն ձեւով պաշտեցար։ Դու հաստո



ղէն

ղին ծածկաց Տր՝ մայր օրինակ անուանեալ ձայ-
նեցար։ Եւ մեղուցելոյ կնոջն առաջնոյ՝ ա-
ռանց յանցանաց զաւակ գովեցար։ Եւ ամ
անբծից ընտրութե՝ պսակ սրբութե դու գա-
ւանեցար։ Եւ իբրև զհանդարտ երինջ անա-
րատ՝ արարչութեանդ լծոյն մածուցար։ Եւ
իբր յաւանակ կամաց անբաւին աթոռութեն հե-
ծեցար։ Եւ ՚ի խորոց ծովէ Տր՝ շուշանա-
կան շաւղօք ամբարձար։ Եւ իբր ՚ի դժնեայ
փշոց խոստութեց Տիս զբօսանաց ծաղկեցար։
Եւ իբր ՚ի դառն արմատոց երկրէ՝ քաղցրա-
ճաշակ պտուղ յայտնեցեր։ Եւ երրորդութեն
անտես Թագուհուէ՝ խորհրդակից սիրոյ կո-
չեցար։ Եւ ծածուկ հաւաքման բանին՝ իբր
լուսատու ձորձով պատեցեր։ Եւ անքակ էին
տրութե՝ սահման սկզբան վերակարգեցար։
Եւ ՚ի սրբասնել միջոց քո սահմանց՝ զանկէտն
՚ի առաջինն ծրար Թագուցեր։ Եւ ՚ի կուսա-
կան քում բարունակէ՝ զանմահարարն ողկոյզ
հասուցեր։ Եւ միջնորդ կենաց երկոցունց՝
զբանչելութս համբարձակեցար։ Եւ համօղէչ
՚ի խաղաղութե, մրրկածուփ շարժմանց կա-
ցուցար։ Եւ խրախակից վերնոյն բարձրութե,
անկապտելի անուանեալ պատուեցար։

Որդ՝ յայսքանս, և ՚ի սոյնսիխսիս, և յևս
ընտրելական երգս բանահիւսից գերա-
հրաշակեալ ես. վսեմական վարուց Նախըն-
թաց և յառաջաշաւիղ որք Ածածին։ Ո



դն

զի որք երևեալն ՚ի քեն միածին անդրանիկ բնութեն հօր՝ սկիզբն ասի հետևման խաչու_նակ մահակիր ճգանց։ Այսպէս երանեալդ և բարեբանեալդ, գերօրինակ ցուցման տե_սակի ածակրօն կարգաց ծաղեցար։ Եւ՝ զանմատոյց հուրն կիզանող, անմատչական ծածքմամբ ծախեցաք։ Եւ՝ զարարդեալն ՚ի թևս օդայինս, ՚ի քառընթաց կենդանիս տե սաք։ Եւ՝ զանկցորդն տեսականաց, ՚ի մարդկայինն կերպ նկատեցաք։ Եւ՝ զգո_վեալ բարձօղն մեղաց, իբր զգառն ճաշակ ընկալաք։ Եւ՝ դատողն ՚ի չարագործաց, ոմն ոյ ճշմարտի երկրպագեցաք։ Եւ՝ զան_ծանօթն հօր էութի, ազգակցացս օրհնաբա նեցաք։ Եւ՝ զմուրհակ պարտուց անիծիցն, ՚ի յաւազանին ջուր ընկղմեցաք։ Եւ՝ զան_տեսն աչաց հրեշտակաց, տղայական տիօք գգուեցաք։ Եւ՝ զանսահման բանին բնութի, ՚ի համառակածին տիօք համբուրեցաք։ Եւ՝ զադամն նոր հօգեղէն, ՚ի չափ հասակի ա_ռաջնոյն տեսաք։ Եւ՝ զարեգակն արդա_րութե, կենցաղակից մեր կցորդ ստացաք։ Եւ՝ զանժամանակ բանին էութի, սկսեալ ՚ի դաւթայ պատմեցաք։ Եւ՝ զանհամե_մատն մարդոյ պատկերի, մեզ նմանատիպ

գործով գրեցաք։

Արդ՝ այսքանեաց սքանչնական մասանց, ճառեցելոց, դու միայնակ պատճառ՝ ա_



նա

նորատ կուսից նպատակ կրօնից, տիրամայր
ծը ծածածին. Քանզի թէ չէր 'ի քէն ածեալ
ուղէշն երկնային, ոչ էր պտղաբերեալ զան-
ճաշակելին 'ի շրթանցն մեր հաղորդութիւն.
Նաև թէ չէր երևեալ հօրն արդարութիւն 'ի յերկ-
նից, չև էր սկսեալ ճշմարտութիւն 'ի յերկրէ.
Նաև թէ չէր յղացեալ յանփորձականդ քում
արգանդի, ոչ էր մարմնացեալ: Նաև թէ չէր
յայտնեալ մերով բնութեամբ, ոչ էր շօշափեալ
և ըմբռնեալ անհասն իմաստից: Նաև թէ չէր
կրեալ 'ի գիրկ բարձողաց հողեղէն բազկաց,
ոչ էր ծանուցեալ: Նաև թէ չէր համբուրեալ
երկրաւոր շրթամբք, ոչ էր ճառեցեալ: Նաև
թէ չէր հետևեալ 'ի մարդկան ընթացս, ոչ
էր քարոզեալ էակն 'ի յեկեղեցս: Նաև թէ չէր
թափեալ իւղն անապական 'ի վեհագունէն,
ոչ էր զմեզ օծեալ: Նաև թէ չէր խառնեալ
զմերս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ: Նաև
թէ չէր խրախուսեալ միրդն 'ի յերկնայնումն,
ոչ ևս էր սրբեալ: Նաև թէ չէր խոնարհեալ
բարձրն 'ի յընտանի փառացն, ոչ էր վերա-
ցեալ 'ի սորընայնոցս առեցեալն:

Բայց մարմնացաւ, որքան մարդն: Այն
և յայտնեցաւ, ըստ որում ծանուցն: Աւե-
տարանեցաւ, ուստի փառաւորեցաւ: Իսկ
մաքրեցաւ, որով երգեցաւ: Իսկ մկրտեցաւ,
որև վկայեցաւ: Այն իսկ պատմեցաւ, որով
ճառեցաւ: Իսկ տնանկացաւ, որով ճոխեցաւ:



Իսկ

Իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ։ Իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ։ Իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ։ Իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ։ Իսկ ամաչեցոյց, որով պատկառեցաւ։ Իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ։ Իսկ զգեցոյց, որով մերկացաւ։ Իսկ ողջացոյց, որով բևեռեցաւ։ Իսկ կանգնեցաւ, որով վտանգեցաւ։ Եւ սլացաւ ընդ վերնայսն։ Թռեաւ ընդ հոգեղէն։ Ծածկեցաւ ընդ զանքննսն։ Փախեաւ ընդ զանհաս։ Ի յամպս երկնից եդ զգնացս։ Գովեցաւ ընդ միածին։ Բոսորաբուղխ կայլակօք ներկեաւ։ Նկից վիրացն խոցով հարցաքննեցաւ։ Ի վեհից անմահ հրեշտակացն հաւատացաւ։ Յաղթող մեղման և մարմն փառաւորեցաւ։ Դատաւոր արդարակշիռ յամ ազգաց վերադասեցաւ։ Քանզի ՚ի քէն հիմնադրեաց զեկեղըն մարդեղուէ անեղն խնկութի։ Եւ յընտրեալ անպատում շնորհէ՝ զայս ամ անփոխանորդելի պարգևական ձիրս ընկալաք։ Եւ քև՝ ամ այս պատրաստուի բարեբաստութի բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ։ Եւ զամ փառս երանական լուսոյ նշուլից՝ վերնոց և ներքնոց ծածուկ խորհրդոյ, բազմագովեալ պայծառ յօրինման նոր արարածոց՝ անճառ շինուածոյ նք եկեղեցւոյ, ՚ի քէն ծնիցելոյ կերպիւ մերոյ և բարձրացելոյ անուանն յէ, ծնկովք

կըրկ

կրկնելովք մատուցանեմք։ Աստի և քեզ
բերկրեցելոյդ՝ զսովորականն օրհնաբանութիւն
բանիս երկրորդեմք։

Օրհնեա՛լ ես դու ՚ի կանայս, գլուխ նոցին
պանծանաց և պայծառ պսակ։ Պսակ
կուսութեան, մաքուր հարսնութեան։ Պսակ ընտ_
րութեան, անփոյթ գովութեան։ Պսակ անեղծութեան,
լուսոյ նմանութեան։ Պսակ շնորհանորոգ, կեն
ծնելութեան։ Պսակ երանական, բանին հօր
մայրութեան։ Պսակ ոբ պարծանաց, կենաց
բարձրութեան։ Պսակ պայծառափայլ փառաց
իմաստութեան։ Պսակ տիրապատուհասատ, երկ_
նահանձարն գիտութեան։ Պսակ պետանական,
եկեղեցւոյ գեղեցկութեան։ Պսակ պաշտելութեան,
սիւնի նորոյ զարդարման։ Պսակ յոբնանը
կար՝ յարփից եօթանց փայլատակման։ Պսակ
առաջնորդկին, վերնոցն ազգակցութեան։ Պսակ
անբծութեան, շաւղացն արդարութեան։

Արդ ամենեցուն վերակարգելոց թուոցս
այսոցիկ՝ բնակարան բաղձալի և երանելի և
ընդունարան ընտրական կամաց անբաւին,
զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս
նորաստեղծականն ադամայ. որոց անհա_
մար և անթիւ ազանց՝ ամրական և պահպա_
նական պարիսպ կառուցար։ Քանզի յար_
ժանահայց և յամենազօրքդ բարեխօսութ
միշտ ապաւինեալ, մեք ՚ի հաստատութեան. խնա_
մեալք և հանգուցեալք ընդ հովանեաւ պաշտ_

պանուէ ամուր պատուարի սբ̃ ա̃ծածնիդ։
Պատուար պձ̃նայօրէն, 'ի զանազան մաք-
րաղորդ ականց յարձակեալ։ Պատուար հզ-
բարարփակ, անմատոյց ընդդիմողացն հինից։
Պատուար բոցանշոյլ. անհուպ և անհաս մա-
տուցման դժնեայ դժրողաց Պատուար ա-
մենահրաշ ըստ եզեկիէլի, որ աղխել զմուտ-
քո՝ ձ̃չգրտապատումն գրեաց։ Պատուար
շրջապարփակ ըստ դաւթայ, որոյ հիմն ան-
շարժութե̃ 'ի բարձրելոյն հաստատեցաւ։
Պատուար ամրակառոյց քաղաքի վերնոյն ե̃րս
ղողմի, որում զհամնուրս բնակիչս արարեր։
Զանդր կ̃ծ ծնար 'ի մարմնի, և զծնունդս
մարմնաւոր սիրելին՝ որդիս արարեր վերնումն
հոգևորի։ Որոյ աղագաւ օրհնեցաւ արդարոդ-
քոյ կուսութ 'ի շրթունս նոցին, և խոստովա-
նեցար յա̃մցունց մարմնարան և տաճար հօր
խնկակցին։ Որով արդարացո՝ 'ի քեղ ընծայել
բան պատմողին. եղեր մեր օգնական և տուն
ապաւէնի՝ յուղևից հեղեղաց յաւուր անձ-
կութե̃։ Զ՝ աքրութ կուսից, և սկզբնաշաւիղ
դասուց երջանկաց։ Մ՝այր հիմնադրութե̃
հաստատութե̃ եկեղեցւոյ, և ծնօղ անարատ
բանին ա̃յ։ Օ քեզ յաւէտ օրհնութք մեզ
պսակեմք՝ 'ի նուիրեալ տեղիս սրբութ քում
տաճարի։ Ի՛ւ 'ի թևս պահպանութե̃ լոյնա-
տարած քումդ մաղթանաց ապաւինելով,
զձեռս մեր 'ի ամե̃ տարածեմք, և անբիկբայ

Յուսով հաւատովք ապրիլ։ Արդ աղաչեմք՝
ընկալ զերգաբան օրհնութի մերումն լեզուի։
Եւ հաճեալ տացես սմա զձիրս շնորհաց սի-
ոնի և բեթլեհեմի։ Ուստի արժանացուք
ընդունիլ մասն փրկութ̃՝ յաւուր գալստեան
մեծի յայտնութ̃՝ փառաց անեղծի, փրկչին
անմահի, քումդ միածնի, միոյն ա̃յ ո̃ն յէ։
Եւ իբր զպատճառ սկզբնաշաւիղ այսքա-
նեաց բարեաց, 'ի սոյն կամարի գեղապճնե-
լոյ զքեզ պատուեսցուք՝ անժամանակ Էին
բարձրացեալ ծնող։

---

Նորին վերտառեն 'ի վ̃ր տառից անուան իւրոյ։

Գերազանց չափոյ կշռման երկնային բը-
նութ̃, և քրովբէականն նախադասութ̃
եղեալ վեհական։ Սրբուհի պայծառ առա-
գաստ փրկչին քո, և նորուն իսկ տեսաւորիչ
վ̃ն մեր։ Ծունր կրկնեսցի արժանապատի̃
քումդ պատկերի։ Հայցեա՛ վ̃ն մեր առ ծը-
նեալդ 'ի քէն ա̃ծ 'ի մարմնի։
Րոպէից յորնաթիւ մասանց բերկրութ̃ ազ-
գաց և ազանց արմատոյ օրհնութ̃։ Ի ծագ-
մանէ փառացն երկնայնոյ՝ անստուեր նշոյ-
լարփալի շողեալ 'ի սորինս տեղի։ Անորիշ-
հպմամբ՝ մերձաւոր անմատոյց լուսոյ՝ ան-
ճառ խոստմամբ ապառնեցն յուսոյ։ Ի մա-
հու պարտեացն զերծո զառ քեզ ապաստան
ծառայքս քումդ որդւոյ։



Ի

Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր փարուց՝ երկնայնոցն կրօնից եղեր հպաւոր. Մարմ-
նաւորիթ տեսանէ նոցին զանզննին որդւոյն կերպարան. Ասատի տեսին զանկէտն սկսեալ, և երանեցին զարմանալ և զարտաձառ: Յորմէ և մեք հայցեմք զնորոգումն կենաց, և պաշտպան զոխրամօրդ ձեռընտուութիւն:

Գովաւորեալ այսօր 'ի քեզ զխմանալեացն փարթամութիւն. որ պայծեալ հասեր 'ի բարձունս երկնից. իբր անընդունակ ապականութե և մաշու լուծման. Եւ ցուցար ընտակից արժանապատուի կենդանեաց երկրին: Մեծ տիրամայր՝ արդահատեա մեզ զողորմութիւն որոց պանդխտիմք 'ի վիշս նեղեին:

Անօղ հրձուանաց անթիւ խրախութեանց ածայլին անկէտն խոստմանց՝ 'ի բարեբատանս անդաստանաց տիրական անկցն. Որ սահեղունք շառաւեղացն՝ երկրային հնարից գերազանց: Խնդր մուծցես զքո դաւանողքս մեր տիրուհի մայրդ լոյս:

Բռնեմք 'ի քեն աղերսիւ բանիւոր եւ քաղցրալուր գրաւ ձի: Միայն երանեալ և բարեբանեալ: Յօրն հանձուք հովանաւորեալ: Որդւոցն ծնող: Յորդւոյն վերընդունող: Երրորդուէ փառացն տարօղ: Ս երանկարեմ զառ յաւազանէն անախատ արդանդէ զկարդացեալս անունն՝ 'ի գիր մատենի վերնում դպրոցին. Եւ զերդագրութիւն սակաւամաս



նեայ

նեայ այսր գովեստի, արժան հաստատեա միշտ անկործան որպէս առաջի։ Ընծայեալ մարմնոյս՝ զմխաշուրս գեծ, և զգայնն շնչոյս՝ զպատկեր բանին։ Ո՛ ի իեր ՚ի գոյից երկուց զուգելոց ՚ի մի խառնութի մեզ կենդանութոյ, միշտ փառաւորեսցիս դու սովին օրհնութբ, որ անեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութբ։ Թերևս ՚ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց, լիցի մեզ անդատապարտ համարձակութի՝ յատենի մեծ և ահաւոր որ դատաւորին։ Իւ գացուք արժանի՝ անբիծ վարուք և ուղիղ դաւանութբ հաւատոցն հաստատութբ՝ հանդիպիլ և անդանօր ընծայի բանից քումդ երանութե. փառաւորել ընդ քեզ և ընդ քոյն՝ յանդիման դ խմից պաշտելի և պսակելի քում ծնափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեդ՝ զեւուի անբաւ և անքննելի որ Երրորդութեն՝ ՚ի միութեն և արքշութե։ Որում վայելչական պատիւ և գովեստ անդադար երգոց. այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն։

---

Յիշատակարան Մխիթարայ աբբին ընծայական Գրոյ երջանկին և ընթերհընկալ տն Աստուածածնին։ յերեայ նորին Հոգեբարձուէն Սարգսի։

Շնորհաձիր էին և հոգւոյ նր ընդունակ՝ ընտրեալք և ներանձնացեալք այցելուք։ Ըստ հայցման հաճուէ բարեսէր կնոջ երջանկին, և գրեալ նամակի ձեռամ



պատ

պատմենի, յօրինեալ շարադրեցի զպատմու-
թիւս գովեստ, և զճառս ներբողենի։ Ակա-
բեալ հաստատեալ 'ի գեղ պատկերի զխնոց
սովեստի՝ սրբոնկիայ լուսափառ դաշտի
քարանեդ։ Մ՚տրակեալ յընթացս սոր
տապարիսի զշրթունս գրչիս, անշունչ խօսո
ղիս, անբայլ ընթացողիս, անձայն հնչողիս,
անդուլ պատմողիս, և անսայթաքելի քա-
րոզչիս։ Իւ արձանացուցի 'ի սմին անջինջ
յիշատակ զանուն անեղայլի ձեռումդ կոչման
որ Սոււփաննոս՝ լերինդ մնկաց հզօր դիտա-
պետ։ Որոց զի մնացես յարակայ 'ի սոյն հա-
մառօտագրիծ մատենի՝ յաւուրս անթիւս և
յամս հազարաւորս՝ ի ձեռն սակաւամանեայ
խմասաին։ Իս դրիգոր՝ յետին վարժապե-
տաց և կրասեր բանասիրից՝ որդի դասեր եղ-
բօր հօր անանիայի հոգեպարդ և մատակարժ
փիլիսոփայի, և ըստ վարուց մարքրուն կրօ-
նից գեղեցիկ և հաչակելոյ։ Իւ ընծայեցի
քումդ եկեղեցւոյ զայս նուէր բարեց բանից
ցանկալեաց։ Յորոյ պատուղ վայելեսցես ա-
խորժ բերկրանաց ճաշակմամբ՝ յամեալ և
յարակայել 'ի հոգևոր հրճուանս ալոթից։
Իւ ընկալեալ խառնեսցես 'ի յոգնահամբար
զարդս ամենագեղս երկնային դանձուցդ՝
զտարար ահտակի տաւիդ։ Այլ և յիշատա
կեսցես զանուն խնարոյս 'ի զաւիթ սիրոյ
անձկուն սրտիդ սնեկի, մինչ նորոգ մատ


ծեալ

ծեալ զմեզ ՚ի ձեռումդ Տր̃ խորանի ա̃ծա-
յնակի՝ հանդէպ սեղանոյդ արարչնկալի. զիս
և եղբայրն իմ զանդրանիկ զյովհաննէս ցան-
կալի անուամբ ՚ի միում կարգի. որ գիտական է
և հանճարեղ իմաստասէր. քան զիս առաւել
՚ի յամի։ Եւ յամի կեցցեն մեր անձինքս ընդ-
քեզ։ Որ̃ և քոյդ ոգի միացեալ ընդ մեզ՝
միջնորդաւ էութե բանի՚ ՚ի մեզ. քրոյ ընդունե-
հալոցի։ Անբաժին տեսամամբ, և անորիշ սոր-
ոյգս շնչով, և անպայպայտ խորհրդով, և
անանջրպետ կամօք։ Խորսխել՝ հաստատել՝
և հիմնադրեալ խորհրդով ՚ի Քս̃ Յս̃ ՚ի Տր̃
մեր։ Որում փառք յաւիտեանս ամէն։

Որդ՝ քանզի անընտել գոլով տեսութե բաղձա
լի վայրից և Ձեզ խորանացդ, զթերին
լութե և զպակասն ամենութե՝ յարմարական
դրութեդ աղերսեմ շնորհել։ Եւ ինձ տառա-
պելոյս օգնեա աղօթիւք՝ որ յարաժամ դե-
գերիմ յընթեռնուլն. խոկ փոքու և ոչ փոքր
ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ։

❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖ ❖

Նորին Գրիգորի Նարեկացւոյն Մաշտոց ՚ի հա-
րէն Գուրգէնս Մէջ Տառնեղբօրն Անձեւանեաց Նա-
խարարի՝ Պետրոսեան Գոշնաւորի։ Եւ եօթնա-
սուն և երկուց ոճիւն Աշխերտացն ՆԻԷ։

Տիեզերաց ծաղիկք և տունկք անճառելիք
աննեղեմայ։ Ադամայ նախաստեղծին



ծը

ծնունդք՝ և զարմք սխալին։ Նուաք ամբար_
ձուղէշք՝ բխուրսատեանք. ծիրանածայր ըն_
ձիւղք և երփնագեղք. քաղցրապտուղք և
ախորժելիք։ Երկնընթաց դիտակք ըն_
րուէ. լուսանունդք և տիրահաստատք. չու_
հուէտք և արդիւնականք. ուղեկք և ար_
մատացեալք. պարարեալք և պանծացեալք։
Ի զօղս պարգևողին՝ ընտրական սերմանք
ոմանց, բարեբոյս անդաստանին։ Բղխմունք
հանճարահոսք՝ մշակութեանք և յարընթացք։
Գետք հանդարտահետք, գեղածաւալք և
գեղածիծաղք, դարմանադուշակք և արփի_
ական լուսոյն դիտակք. սատանական օձոյն
սուզիչք, և դժնդակ այսոցն չնչող նահան_
ջիչք և ապականիչք։ Մե և երջանիկ գու_
մարք դասու Տնօրինողին։ Քանզի առ ձեզ
և յաղագս ձեր՝ ի դադարմանէ լուսէ շար_
ժել կարգ բանին՝ ի գովեստ փոյց մեծութե_
վեհին հաճոյն՝ անսասանելի դրութ հիմնե_
ցեալ միշտ կառուցանի։ Ոչ զի յաւէտ
բնակող բարեշունչ բանից՝ քան թէ շինուա_
ծոց՝ էականն ած դաւանի։

Նուորդ՝ ձօնեսջիք երգոյն բանի պշնորհս
մաղթանաց ձերում հայցուածոց՝ զար_
ժանապատիւ ձեր տրուիդ դերահռչակելս։
Քանզի՝ի վեր քան զձառ շրթանց և զխմաստ
բանից զօրուէ, շուք և զարդ գեղոյ ձոխուէ
ձերում բարձրութեդ՝ չքնաղապէս գերա_
հըւ

հռչակի։ Իսկ թէ ոչ հրշալի գրեսցի լողացք,
մերկասցի բացցի բացերևեսցի ծածկուն
ծոցոյ բանիս, անեղծականս ձառել ղատեղ
ծականաց ժամանակաւ։ Իսկ զդէմս ձեր գրել
շնորհօք որդւք էուէ։ Թէպէտ և ոչ անժա-
մանակք ըստ անսահմանին, այլ իբր սկիզբն
գոյից յաւիտենից. և իբր հիմն ժամանակաց՝
սկսեալք և ընտրեալք նախ քան զեղանել
եկեղցս Տի՝ ըստ բարբառոյ ձայնին պօղոսի։
Քանզի ոչ սկիզբն վերին երկնայինն՝ սկզբնա-
մեծայր և կանխակատուցց մայրն ազատ մար-
բածին, նոյնպս և որդիք նորին անդրանիկք
և հոգեպացածառք։ Ի սկիզբն ծայրից ան-
ջրպետեալք։ Ընդ արձակ ամաց միջոցի՝ աս-
տուստ նկատեալք։ Ի գրուն մատենի բանին
նկարեալք։ Փառօք բարձրուն շնորհին պատ
կերեալք։ Ի նստուներական փայլմամբ՝ բա-
րերարին հօր կերպացեալք։ Ի նհաւասար հա-
մարձակութ՝ ի ստորեւըս ստեղծագործելք։
Մ՝ ատնակից կրօնից՝ օծութ փրկչին ձեռնա-
դրեալք։ Համգունակից խմբից անմահից
դասուց պարակցեալք։ Իսկ գերաղանց քան
զաստացեալ չափս սահմանի հինն ամանակի՝
համբաւ հրաշափառ խորին խորհրդոյ՝ մար-
գարէաքարող և տեսանողագուշակ երևման
անօրինեցելոյ մարմնոյ յի՝ հօրն արարչակցի՝
ձեօք քարոզեցաւ ծագաց Տի։ Իսրանելք ես
և բաղձալիք՝ սպասաւորք նախապատիւք



մարմ

մարմնացելոյ և մարդացելոյ ը̃ս կերպի մերոյ ո̃յ։
Բազմապատկաւոր ընտրութ̃բք փորձելովք
ոսկիապէս ՚ի հողոյ նիւթոյ, Ընդունակք
յանցման մերոց չարութե̃ ախտից մերոյս
զանգուածոյ։ Պայծառազգեստք և սփիւռ
կափայլք ըստ պատահման արժանթոյ։ Նա̃-
քուլք վարուք և բարիք բարուք, ըստ պար-
գուէ տարածման տեսուե̃ օգոյ։ Բաջա-
պինդ ՚ի համատուե̃, ըստ կարծրութե̃ ձու-
ման արժանթոյ։ Ըղձակամք և ախորժելիք՝
գունակութե̃ տենչալի լուսոյ։ Քանզի ար-
դարև լոյք մշտապայծառք ՚ի բնութե̃ ան-
սուէր լուսոյ վերակարգեցայք՝ անաղօտա-
պէս ծագել ՚ի ստորինս։ Ուստի և նորոգ-
գոյութի երկնի և երկրի՝ ՚ի յո̃է ձեօք սահ-
մանեցաւ։ Նա՛ զի և ընդմիջեալն ՚ի յանոց՝
խորհուրդ. քառանիւթ աւուրն պահպանու-
թեան, յորում արուսեակն սկզբնթաց և
վայելչագեղ լուսապատարն պայծառութե̃՝
ծակցութե̃ ընկերին իւրոյ լուսնոյ՝ անզգայա-
բար իբր ընչապէս՝ երաժշտական կամաց ան-
բաւելն՝ անմոլար շաւղօք հետև մամբ աստե-
ղացն պարագայութե̃, յանվրիպական խոր-
հուրդ ձեռումդ դիտման՝ զարարածս բա-
րեզարդեն։ Քանզի իրափակք և պահպա-
նակք և կամնոք ուղղուէ երկրի, կրօնաղօր
մարքականի գծագրութե̃ ձեռումդ տեսուե̃՝
կանխաւ դրոշմեցան։ Ո՞ զի ոչ պատճառք



խո

խոտաճարակք, և կամ լուղակք կերակրե-
լեք, և կամ բոյսք սերմանամատոյցք, և կամ
պտղածին ծառք վարսաւորք. մարմնաճաշակ
կերակրոցն խորտիկք, որ՚ի յերկրէ ցուցեալք՝
՚ի սոյն կոչնչին: Այլ երկնային զարդք և վեր-
նականն կամարին կանթեղք. լուսաւորութք և
անշէջ լապտերք՝ այսր աւուր բարերարութ̃
արարչին ստեղծուածք և պարգևք:

Արդ. Նմանաբար և ազգականացապէս՝ ՚ի ձեզ
յարմարի վայելչական երգոյս տեսութ̃:
Արեգակունք բազմահոլովք՝ դիմումն չա-
րեաց ցամաքեցուցիչք: Լուսնական բու-
սոց դալարմանիչք: Անձնաւոր ամպոց վերըն-
ձիւղիչք: Սառնացելոց մտօք՝ հրացուցիչք:
Ջերի և խակ խորհրդոց՝ հասուցիչք և
հմտացուցիչք: Մթացելոց մտօք խաւարի՝
լուսափայլ խրախացուցիչք և բարեգործիչք:
Սրսփելոց ՚ի ծովային ծփանաց Տիս՝ սաստէ
զալեկս ուղղիչք և առաջնորդիչք: Պայծա-
ռափայլ լուսաւորք: Հրազունք եօթնա-
նշոյլք: Ճանթք կիզանօղք: Յոլմունք ա-
հագինք: Ջուանք հրեղէնք: Մարզիչք մարդ-
կան: Լոյսք ընտրութ̃: Ջերոցք հոգւոց:
Բանզի յայտնի կոչեցայք՝ ՚ի կամս կոչո-
ղին զօրացեալ:

Իսկ արդ՝ այսքաննեօք համարձակութ̃ բազ-
մամաննեայ շնորհիւ ամբարեալք և յա-
ւէտ լցեալք և բնաւին մաքրեալք, զընա-



կու

կուսն վեհին բարձրութեան զիմաստս վերընկա-
լայք։ Փառօք տիրականս ճոխացայք և փառ-
թամնեցայք։ Շնորհօք բանին աստուածացեալք։
Ծնունդք հոգւոյն թագաւորեալք։ Իշխանք
պանծացեալք։ Պետք և գլխաւորք։ Նահա-
պետք վսեմականք։ Նախարարք նախահա-
գանք։ Առաջնորդք բարեշաւիղք։ Վարորդք
հմտավարժք։ Գիտապետք երկնաբնակք։
Վերատեսուչք անմոլարք։ Առաջելոցք ուղ-
ղատարք։ Բաշխանայք քաւութեան։ Լուցունք
երևելիք։ Սոյն զի այսպիսիք և այսքանիկ ա-
տիճանի փառաց ձերումն տերաձիր գլխաւո-
րութիւնք։ Նա՛ զի և մասունք անդամոց սուրբ
հաստատեալք, մաքուր սրբութեամբ, մերձաւոր
ընտանութեամբ, յամին կատարեցման գլխոյ գովե-
լոյն արժանապէս միազարդեալք։ Սաստի
անխառնից և անանջրպետ միակենցաղ և զու-
գակցորդ ընդ Քրիստոսի գոյք փառաւորեալք։
Քանզի և զայն իսկ հայցեաց միածինն առ-
պատուականին վերընծայեալ զբանիցն մաղ-
թանս. կամիմ և ուր ընդ իս պերճանալ հայր
ի քում պարգևս։ Բառակի երիւք գովութեան
բարեաց բաղդատեալք։ Չորեքծագեան մա-
սանց էակաց՝ անպատակառ խօսնակք։ Միա-
բան բնութեամբ եղականաց սիրոյ ջատագովք։
Շնորհալարդ բանին տուողի՝ հոգեշունչ
աւետարանիչք։ Ամոլք ուղղաձիգք և համ-
դարտաքայլք։ Ուսարակք եղանց՝ բանինք


և

և նուիրեալք։ Ծաղկեցք կրօնից՝ համահաւաք և խոհեմընթացք։ ՚Ի գործի ձեւակի խաչին խորհրդոյ՝ զմարդկային սրտից անդստանս հերկագործողք։ Գաղանին փրկագործութեանցք, և՚ի պարանոց այդերի ձեռամբ ամբարձողք։ Բանզի՚ի կոյս և առաջս քառից ստորագրեալ գունդս երիս՝ Թուով երկոտասան։ Ձուլեալ ՚ի ձև կերպագրել պատկերաց ցլուց, անդրիագործս և արհեստակիտուածըս։ ՚Ի դիտումն կայից հիւսիսոյ և՚ի դիմաց ծովու՝ ընդ ելս և ընդ մուտս ծագման արևու՝ կերպարանի ձեռամբ օրինակի։ Ծակ ջրակիր խաչանիշ և պղնձանիւթ՝ յուսով հաստոյ՚ի գաւիթ ծոցոյ սողովմոնեան խորանին յարկի։ Իբր եկեղեցական խորհրդուծուէ վերադիտողք տիեզերաց։ ՚Ի նպաստ պատճառի նոր նորոգման՝ զմկրտութեն ջուր սրբելով։ Որով զանեբիւթ մտացն ծածուկ սրբագործեալ։ Իբր ստուերին առակաւ՝ ՚ի նորս տեսակ կարկառեալ զհինն ապաւաթաղանդի աղեացն որովայնից։ Որ մերում ոգւոյս է ապաւինութի։ Իբր մատուցելոց պատճարեղինաց։ Բանզի անվրէպ և անտարակոյս՝ նշանակ դիմաց խորհրդոյս կերպի՝ ՚ի ձէզ յարմարի ով հծարեալք։ Խորոխք միանգամայն և համդարտք՝ ըստ օձակոլս գործի որթուցն եղջերուաց։ ՚Ի ձեռն խնամոց և զօրութե մարդասէր և ամենաստեղծ-


հի

հոգւոյն՝ ժողովեալք և մանաւորեալք վե-
ճակաւ բանին ընտրութե ըստ նախագուշակ-
ձայնին եսայեայ։ Մահացու և սատակիչ-
թունիցն սատանայի՝ խայթոց սատակիչք։
Դժնդակ խստութե շնչոյ վիշապին առաջնոյ
պատրողին պատրիչք։ Հրեշտակք զօրութե։
Զուարթունք աննիրհելք։ Լուսեղէն
պատգամաւորք՝ անաչառութե բանին դա-
տողի։ Անծայրութեք, շնորհապարգևք կա-
մաց անեղին։ Սոփերք հոգեմատեանք՝ ծած-
կութե խորհրդոյ էին։ Տառք ժամանակաց։
Ծննդոց մարդկութե նուագք։ Նախատակք
տիրադիծք և ածադրոշմք։ Տօնք նաւակա-
տեաց հանդարտաձայն սաղմոսաց՝ ածելի գե-
րազանցեալք։ Զգեցողք փառաց՝ քան թէ
հանդերձից։ Անակօղք երկնից՝ քան թէ կա-
մարաց կենցաղափանաց։ Կցորդակիցք լու-
սաւորելոց՝ քան թէ երկրայնոց։ Հոգւոք թե-
թևք՝ ի թանձր մարմնի։ Անձինք անբծութե
հիւթիւ շաղկապեալք։ Երագունք ՚ի թր-
ռիչս իմաստից բանի։ Ի մուտս անմատոյց՝
մօտք սլացեալք։ Հրաշեցն երկնայնոց՝ երկ-
րաւոր գրութե պատկիչք։ Աննմանին փա-
ռաց՝ մահացու զանգուածով քարոզք։
Երօղք գլխաւորին դիմաց՝ կարթիւ հան-
ճարոյ։ Խաղացնելք բանաւորին սատակութե,
խեր ձագու փոքու դեւր ըմբռնելոյ։ Մեր-
կամարին մատանցն ձեռօք՝ քան թէ ագու-



ցեալ

ցեալ ոտիցն կօշկօք՝ զխածանողէն խորտակեալ զգլուխ։ Արդ օրինակ նմանաչար՝ 'ի ձեռն տիրամեծար մաքրական և ընտրելական պարգևածիր և շնորհաբաշխ աջոյն պօղոսի՝ երևի 'ի բորբոքեալ խարոյկին բոցոյ՝ 'ի բարբարոսական վիճակին առաջին. Յորում հրաշալիս ծանուցաւ Յս յաշակերտին համարձակութի։ Քանզի իբր ծածկեալն վարագուրաւ խորհուրդ կերպաւորութի պատկերի բանին յոբեայ, յաւարտումն լրումն կատարման լայնածիր և դժոխամարտ հին ասպարիսին հանդիսի՝ զմրցանակ յաղթութե գլխաւորել երջանկին. այսմ ծանուցաւ անտառ սատակութի՝ անդ ծելն սխրալն և անբերելն կարծրուն չարին կակղացեալ։ Որ և յաւէտ վանեալ անդր քան զկայ կենաց կեցողս կարծեաց՝ պատժապարտս ընկերանեցէ։ Այնպս և սորին իւրով համակրօն դաւանահամբոյր գործակցօք՝ իբր 'ի գաւիթ գրկաց մի նաւի՝ զերկրածուփ ալիս կոխողն՝ սակաւաթիւ գնդաւ երջանկաց հանգունակցել այնմ յաղթութե, զմելեգնածառ բանսարկուին գլուխ՝ բոլորովին իւր զգայութբն և խորհրդանոցաւ կոր կիցն մեքենայից՝ յարմարոյն յուսով հատեալ վերակարեցին։

Ա զի ընտրեալն և զարմանալին կիւլիկեցի, որ յարաբխայ հեթանոսաց կոչման առաքեալ, երանելն և՝ և հրաշանուն ախոյ



եանն

եանն քաջամարտիկ, մշտանուէր հայցմամբ աղօթից՝ զդիւաբախս խորոցն կոհակս կարկեալ նահանջեալ յինքեան խափանեաց։ Նա և ՚ի մկանաց կայիցն պատուաստալաստն փայտից, սատորէն պտղոյս խորոցն սասանեցաւ։ Անմարմնաբար՝ քան թէ թանձրապէս յաղթեաց անդնդոց և անդնդայնոց։ Նա և ծաղրականաւ պսպղանմամբ հեգնեաց ըստ մեծին դաւթի զմայլն ահագին զարմից լըղակաց։ Նա և անսայթաքելի ոտիցն հետովք՝ ընդ անկոխն ընթացաւ սահման յատակի, և զանհունն ծովուն մրցէլ ծոցն բաժանեաց ըստ մեծին մովսէսի։ Նա և ՚ի խորհուրդհմուտ որսողաց առաւել նաւէին՝ բազմահոյլ հոգիս նաւողացն՝ ՚ի հեղձմանէ խորոցն փրկեաց։ Նա և շրթնաշղթայաշար կարծն առասանաւ դանդանաւանդակապ պաշարմամբ, զկործանողին մալեալ զկզակս՝ ըստ առակաւոր բանի նախնւոյն եդովմայ, զկորուսիչ և զմահացու թոյնս իժին ժանեաց՝ զօրուէ՛ կեցուցիչ խաչին պակասեաց և ցամաքեցոյց։ Նա և այսու գուշակէլ զդիր ըստուէրականին՝ Հօմերատեսն արդիւնաւորեցին։ Կոխեցին մանրեցին վասամուն օձից խիստ հերձուածողաց և թունից կարծաց նոցին գործակցաց, ընդ զօրացելոյն ՚ի չարին մահու և բելիարայ։

Իսկ ըմակից և կցորդակից նորին առաջին՝



սկըզբ

սկզբնաթիւն և նախամեծարն, վէմն հաս_
տատեալ և արձանն հիմնացեալ. քարն ան_
ուանի՝ եօթնաթիւ դաւանութ͞ե յարմարա_
գրեալ. ըստ չափոյ խորհրդեան ժամանակի
սկսման և լրման՝ ընտրելն և փառազարդելն
կեփաս։ Աւետարանն շրթամբք երանեալ, և
տարերարութ͞ե բարձրելոյն հօրն ուշադրեալ
և իմաստնացեալ, Նաև ուղղահամբոյր դա_
ւանմամբ հոգւոյն իմաստից՝ տեառ͞ն զանժա_
մանակ պատճառ անսկզբնին ծննդեան. արժա
Մատեղանիչ լուսաւորութբ՝ բոցաձաձանչ
չքով պաճուճեալ։ Յորդանդ մաքուր և ի
ծնունդս անախտս, երկնեալ անդստին ժա
ռանգս այ։ Որ է օրինակ առ ձեռն յուսոյ
անկնկալուէ՝ զխաղաղութի գտեալ խնկապէս։
Հա՛ ըն՛՛։



Բա

Բարութեան լուսոյ հօր Թագաւոր փեսայն երկնաւոր։ Ընծայ խորհրդով՝ ՚ի հանդէս խնճոյից պարու՝ կարգեաց քեզ կանոնս անփոփոխելիս։ Բազմամասնեայ օրինակ կերպից ՚ի նոյն տեսութեան բոլոր էութեան, ՚ի կերպարանս բիւրատեսակս սա՚ի շինուած կաթուղիկէի։ Հասակ տոհմից զանազանութեան իմն ժողովեալ հնազանդութեան։ Տուն և տեղի և յարկ ծածկութի։ Դարակ տօթոյ՝ վէմ օգնականի։ Մարմնագոյից հոգեխառնից։ Օծ ը մարդկան ընտանեցուցիչ։ Համանունակ աղանց կուսակաց։ Յոյս քաւութեան պարտաւորելոց։ Նախացուցակ համարձակելոց։ Կատարելոց անձանց խմբարան։ Ահա՛ ըն"։

Իմաստութեան հօր բնակութիւն եօթնաստեղեան սեամբք կառուցեալ։ Յորում օրհնեալն պատարագն ՚ի սպասու կամաց ճաշակման երկնաւոր հացին՝ ՚ի գահաւորակ սրբոյ սեղանոյն։ Կենաց մանանայն և գառն երկնաւոր, որ բաշխեայ զմեզս կենդանեաց և ննջեցելոց։ Նոյն ինքն ծմ և յամի՝ զենումն մեծ քան զհարելին։ Որ զգլուխեալն տնօրինէ յանբռնադատ եկաւորութեան։ ՚Ի գիրկս սատեպնց սիրով քաղցրութեամբ կոչէ ձեռամբ յամրոցն անմատոյց, փախուցելոյն պատսպարան։ ՚Ի վերնայարկ սրահն հոգեկիր՝ ուր զաշակերտսն զարմանագրեաց։ Յորում եղեցեն կարգեալք զօրութեամբ գահերեցութեամբ վերադիտողաց։



ղաց։

ղաց․ 'ի պատիւ աւուրն քո ուրախացեալք
ունօղք անկեան անըմպացն պարու․ Ո՜ հայ-
րապետն մեր՝ եպսօք՝ քահանայիւք և սարկա-
ւագօք․ Ո՜ վարդապետս․ դպրօք և հոգևո-
պայծառ վարժապետական շնորհիւ․
Ո՜ Թագաւորն մեր՝ խուռովք զաւակօք․ Աւ-
որք ընդ նոյա են իշխանութք պետութք և
զինուորութք՝ հարազատ սիրով օրհնեալ
յամենից․ Ի՛հա՛ յիշեսցես և ողորմեսցիս հո-
գւոցն հանգուցելոց յուսով յարութե՝
խնդրեմք․

Աւ ևս առաւել զյորդորումն սի՛․
Առնել վերստին զմերժելսն առ'ի քէն՝ մեջ
նորդութ բազմելոցն 'ի քեզ՝ աղաչեմք․
Պատեալ ակն պատուական մարգարիտ՝ ան-
ձառ ներգործութ յոխս ծովու, մարխ-
ամ ոք ծծածին․ Պուսար լուսոյ և մայր
սիրնի․ Անձեռագործ հիման հաւատոյ ճշ-
մարիտ պատկեր․ Որդ այսր օրինակի անուամբ
օծեալ կնքեցար․ Հարսնարան միոյ բանիդ-
մարմնացելոյդ 'ի քէն ոյ․ Բարեխօս ըքեզ
ընկալցիս առ'ի հաշտութ պարտաւորելոցս՝
զշառաւիղն անմահից կենաց զկարապետն
կոչման ոբց, և զպսակն մարտիրոսաց, առա-
քելովք և մրգրեիւք․ Եւ որ մերն է լուսա-
ւորիչ՝ հանդերձ միանձամբք ձգնաւորօք․
որք են ժառանգ ոյ՝ ծնեալք յորդեգրութ
ոբ աւազանն՝ անանձրպետ հոգետոհմութ․

Յորում կրկին հայցեսցես նորոգել զփրկչին
՚ի մեծ լուսնուն փառաց՝ անպարունակ բա-
ցարձակութեան զմայրն մաքուր զաւակօք հան-
դերձ, ուխտիւք պսակելովք յայնմ աւա-
գաստի յաւուր ահաւոր երևման մեծին ա̃ծյ:
Եւ այժմ ողորմեա՛ց մեզ":

## Նորին Գրիգորի Նրկցւ՝ ՚Ի ս̃բ Խաչն ա̃ծընկալ:

Գանձ անքննին. ծածկեալ մեծութիւն. զօ-
րեղ ահաւոր՝ միշտ բարի: Երեքսրբեան
անսահմանելի՝ օրհնութեան կենդանի: Անճառ-
իսկութիւն՝ փակեալ ՚ի զգալեացս: Համագոյ
անթարգմանելի: Անհասանելի հեռաւոր,
և անընդմիջելի մերձաւոր՝ անման Թ̃գւր:
Ահա խնկեսցին մաղթանք մեր առաջին քո
ամենակալ, աղաչեմք:

Սրովբէից համայնից եւ ՚ի կուսից քառից՝ ՚ի
մի եղելութիւն զերկիր հաստատեցեր: Խոր-
հուրդ կրկին ձեռնարկ վերստին. ընդդիմակ
միջոց միջնորդաց երկուց՝ եղծման և նորո-
գութեան տեսութեան կենացդ փայտի: Ահա":

Ի բարձունս անքաւս՝ անհետազօտելի գո-
վեստիւ տօնեալ՝ ահեղ անմատոյց: Յան-
հանգչելի նուագ ներբողից ազգաց հրանիւ-
թից՝ պանծալի երգով պսակեալ ա̃ծ բոլո-
րից: Ի սահմանս երկրակշռութեան երկնից՝ ՚ի
թևս չորից արփիակերպից՝ բազմօք կարգե-

ցեր քեզ պատիւս անպատումս. Ի դրախ-
տըն Ադենայ ՚ի մնկոյն պարտեալ՝ աղդեալ
ձայնեցեր ՚ի ծառն օրհնութե. Ո՛հա՛ բն".

Պուշակ գարնայնոյ ՚ի Թուխս ամբարձման՝
յօրինակ երկնի կամաց գթածիդ, ՚ի լուսան
ամբոյծ նշխան տանիդ. Պատկեր փրկութե.
կերպարան հրաշից, ապաստան յուսոյ, գեր
՚ի վերնայինսն ընոր ժողովուրդս ուխտիւ
միջնորդեալ ՚ի Թևս խաչիդ՝ առ քեզ մա-
տուսցես. Ո՛հա՛ խնկես".

Ս՛վգիր մատենի մատինդ տյ, կենսունակ
տախտակ անխորտակելի, և աւանդ նորոյ
օրինի սրբամատնութեց աներծանելի. Յու-
մըն ցուցմանց կանխապատմութեց աւետեաց
բղխից. Ի բիւրուց հիւթից մեզ ՚ի յօգ-
նուի սոյն իսկ ծանուցար. Տիպ պաշտելի,
դրաւ Տի, շաւիղ անհետազօտելի, արեամբ
արարչին նկարեալ ՚ի փառս լուսոյ. Ո՛հա՛
խնկեսցին դարձեալ խնդրուածք մեր՝ ա-
ռաջի քո ամենակալ. աղաչեմք.

Տարունեացն պետ և ձիր իմաստից տր յս
քս. միայն ուսուցիչ զանիմանալեան. որ ոչ
գծագրի յայսմ յաւիտենի. Պատկեր հօր
անհաս ՚ի վեր քան զբան. Սեղեալ յայս նը-
շան՝ հաստատեալ սովին պնդութբ զհինս
Տի. Պահեալ ամրութբ ըստ քումդ իրաւանց՝
զհովուապետն խաչինց քոց բանաւոր հօտի.
Ո՛ եպսունս՝ երիցամբք և սարկաւագօք.

 Ո՛վր

Ո՛ վարդապետ դպրօք և բնութեամբ խակ պաշ-տօնէիւք եկեղեցականօք։ Ո՛ Թագաւորն մեր՝ իւրովք ծննդօք, հանդերձ պետական նա-հանգօք յաղանդեցելովք։ Արասցես լինիլ երկիւղածութե սրտի՝ խաչիդ պարծանաց ՚ի քեզ զօրացելոյ։ Ահա խնկ"։

Առ քեզ համբառնամք զձեռս զմիտս և զզ-գայութիս հոգւոց իմաստից։ Արժանացու-ցես զմեզ անշարժ պնդութե ընդ հովանեա-թեւոց տր խաչիդ։ Ո՛ արքայութիւն յաղթօղ։ Ո՛ դատողութիւն անպատիժ։ Ո՛ իշխանա-կանոն հանդարտ։ Ո՛ զինուորութիւն խրա-տեալս։ Ձիավարժիցն տուր սանձս։ Սոսկա-կանացն անբծութի, Հետևակացն խրախոյս։ Քաղաքայնոցն պատուէր։ Նուիրողացն լրութի։ Ուխտաւորացն սփոփանս։ Ննջեցե-լոցն հանդիստ։ Եւ համօրէն ժողովրդեանս քում սովիմէ ամրութի, պաշտպանութի, քա-ւութի, առողջութի և ողորմութի օրհնեալ յա-ւիտեանս։ Ահա յիշեսցես և ողորմեսցիս ննջեցելոցն յուսով յարութե, հայցեմք։

Եւ ևս առաւել զյորդորումն սր"։

Քաշել զմարմինս մեր ՚ի մի շաւիղ ընթացութե հոգւոյ սիրոյն որ առ տր, խն"։

Պահպանութի խնամոց՝ խնդրողին զխաղա-ղութի միշտ յերկրպագուացս։ Պաշտպանու-թե ծնողի փրկչին և մարմնաւորանի անպա-րագրելի ՚ի ձեռն՝ մարիամու ածածնի և միշտ



կու

կուսի։ Ողջունի՛ և աղաչանօք մկրտչին
Ջուրբեզ՝ զհոգւոյն հրաւիրողի կրտսերին մեծին
յովհաննու։ Պաղատանօք Թագաւորելոցն
օծութ՟ հոգւոյն առաքելոցն սրբազգեստից։
Նահատակութ՟ նախկին վկային Ք՟ին ստե-
փաննոսի՝ որ է որդի անդրանիկ փրկագործ-
կրից երկ՟րդն ադամայ։ Երգահանութ՟ և ա-
ղօթիւք արի երջանկաց մարտիրոսացն կա-
տարելոց։ Խոստովանողական դաւանութ՟
Ք՟ին գրիգորի հայաստանեայցս լուսաւորչի
և յանմերձենալին նուիրողի։ Աշտապաշ-
տօն բազկատարածութ՟ մաքուր միանձանց։
Եւ ամ՟ ընտրելոց պսակելոցն ընդ քեզ խա-
չակիր վարուք յաւուրն մեծի։ Եւ այժմ
աղօթմեաց մեղ՟ որ ամ՟ մեր՝ ըստ մեծի.
ողոր՟»։

# ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

Հրեշտակական Մեծ Վարդապետի, և Հայոց
ցեղին Զօրաւորի, Ճգնազգեաց Մաքրա-
կաց Հեշենակի.

Համառօտեալ Բան Խրատու՝ վասն Ուղեղ
Հաւատոյ.

Խոյ և Մաքուր Վարդոյ Ամենակարողութեան.

Ի խնդրոյ Ներսէն Հարապետի

## ՄԱՐԳԱՆԱՅ

Գեհանատպրի.

Ծանօթացումն առ Աստուած և ընթերցօղս
անչէնութ.

Զեղ նորտենիս՝ և շոյս գանձս ծածկեալ և
շաղբեւրս չնջեալ չաբեղուլ ՚ի լոյս ածել. և
էբր յոյժէլէն ոտնորոշ եգայէալս նմանմաց ա-
խործադուրց չոչորտայ ցերոյ ՚ի զնայլուեն առլ-
մայնինքն՝ շաէարբաչս ըն՝ արտեամէք, արտեւ-
Հրեշտակական Մ-արտրան Լուսեղեցւոյ Տէրն
Գրիգորի Նարեկացւոյ. ըստ ՚ի խնդրոյ Մ-ար-
տանայ Գեհանատպրի Մեծնէքարենայ Լուծրու-
նեայ

Նեայց ԼԼՀրէայք՝ արտաքսականն հրաժարութեանց գծա
գրոցին յարմարեալն էր՝ մեք ըստ խնդրոյ ոմանց
հոգեւորք բարեպաշտաց հրաման տալով տպեցման
զոր և սրբագրեալ յետոյ մերովք, ի լրումն բաղ
ձանաց նց ըստ ամբարձելոյ իմոյ տառիւ. Այլ ոսկէ
ջինջեանն զմէ և զմտաբերել դասանօսք հասարակս
ար ամ մաստեան հասարակաց չորեքշնն առաջնոյ
նոյն. և զմասանց հոգւոյ և զմարմ. և զկայանից
մարմնոյ մարդն մեղաց դրանց զգայարան. և աս
տուածայնոյ զբանալի զհայեցի և զպոլոյն. Իսկ նա՝
Բէ նախօք՝ պայծառ ներքին և արտաքին զգայութիւն
զինչ ըստ հոգւոյ արտինաւորեմք. և թէ որչ ըստ
դէմ մարմնոյ զդրանս շաղոս փակեմք և բանամք.
Յիրաւի՝ այս փոքրիկ գրքոյս՝ բանալի բարեգոր
ծոյ՝ և փակարան մոլեկանաց կրից. որ ոսկեառ
զարդացուցին է՛ մեծագոյն գանձ. զի ոչ առն. ի
ծերունիս՝ ի ծոյն բան բանական. խորունկ

հանճարոյ խմաստ՝ է՛ զուր ըան.

Սրդ՝ մեք յանձնեալ զնորագիւն յայսմն ծանօթութ՝ ի
ներքոյ գրոհանի զեղեցիկ՝ դնել յաշխարհի
ի լոյս տալ՝ որք՝ ի տան եկեղեցոյ մանկունքն ե
ղէն մակագրեալք, յօժար կամօք հրաման տուաք տպ
պեցման. Այլ զի ծանիցի՝ աստուածպարգեւ Հո
գւոյն սրբոյ աշխատութեամբ շնորհացն բաշխման, թէ
ոչ միայն լեզուաւ զզանազանն՝ զանազանեցաք տառ
բանահիւսել զարտադրութիւն. Որ ուրեք Գրիգորի՝
երբեմն զաղօթականն ըստ խնդրոյ կրօնաւորաց՝

 խրթնա

զուժս ամսոյն ժթ կինչս, այնքան պատրաստութեան 'ի
ուրբէլ կնա և ծառայելիմ. և կնորային՝ աա-
տապես նուիրելէլ նորայնոյն. զի որուժ զատ տուհա-
յաւ, զատ խնդրի յընդունողէն, և այնժ: Ուրեմն
և ես այժմ գործեցից կՁերպարանագելոյ եկզա՝ թէ
կորպեսի ուէր ունելոյ էք՝ աւ քան ո՞րյ Մ արդա-
պետին. և ո՞րդ ընթեռնլոյ. ուրուն կերակրելոյ, և
գործով հաստատելոցք էք՝ որք 'ի սմին տեարանի
բանքն են. զի մնասաւանդ սպեղանի տրին խօսե-
ցելոց հոգւով, քան թէ 'ի խնդիր խորախոյլել
հեկեղեցեաւ բծյաղտ. Մյանքնոյ 'ի խօ-
սօզն, որքան 'ի խօսեցելոյն նհատելոցն: Մ այսու՝
ուրահարացն ըկցեց բանի ո՞րյ Մ արդապետին բա-
անեք՝ թէ ո՞կ 'ի կուր ինչ վաստահեալ էցեն
'ի տպումն սորին։

Մ արդ՝ ես նուաստագոյն յանօթեկեր Պատրիարքս՝
կոչեցին գաղափարն զոր ընծայեալ եմ յԱստուա-
ծածին Պետրոս լուսաւորեալ հօգի գերկգօն և
Աճաքան Մ արդապետեն 'ի հնագոյն գրքէ
թոքէ, եթէ 'ի կրուժն ըկցեց տպել տանողաց ու-
րին. Օրհն կես անուրծան յեկման 'ի ՏՐ ՅՇ
արծանի արաւքէք ո՞կ քերթաանդ ընթերցօղք.
ողջ հաղով աա յոգան բնաւից 'ի ո՞ր Մ ըրբորդուբին
և 'ի ի Աստուածին. ամէն։



Պօղէ

## Գրիգորէ Նարեկացւոյ՝ Բան ՃԵ Աղօթից հաւատոյ․ և Խրատ Ս․ Ներսիսի և Գործոյ։

Տէրունեանն հաւանեալ խրատու՝ որ ըստ պարգեւասէր և յոգնառատ բարերարութեանն տայ ամենեցուն առատապէս և ոչ նախատէ։ Ըստ որում և ասացն, ամենայն որ խնդրէ՝ առնու․ և որ հայցէ՝ գտանէ։ Արդ զիմանալիսն սեղանաւորեաց հայց գիտութեան և գիւտ իմաստութեան՝ գեղեցկապէս նմին քաղցրելոց բանական անձանց․ և բարձր ձայնիւ քարոզչացն՝ կոչեաց 'ի խրախճանութիւն հոգևոր ըստ առակողին․ և մեզ՝ զնոյն օրինադրեաց ասելով․ ամենայն որ խնդրէ 'ի քէն՝ տուր։ Իսկ եթէ զմարմնոյն բարւոք է տալ կարօտելոցն պէտս, որոյ և փոխարէն զի սկզբանէ պատրաստեալ արքայութիւն պարգևեաց, որչափ ևս առաւել զհոգւոցն 'ի բարեաց աղքատութիւն լցուցանել է գովելի։ Իսկ այնքան առաւել՝ ըստ որում առաջին և մեծ պատուականն է ոգի քան զմարմին՝ տիրականին գոլով պատկեր․ և սա երկրորդ նմին և հողանիւթ․ զոր և տէրն գոր-

ծով

ծով յայտ առարեալ։ Բանզի զհետեւեալսն
ճշգրեան ժողովուրդս՝ երկիցս միայն գրեալ
եթէ կերակրեաց հացիւ. բայց կենարար բա-
նին վարդապետութե (որ է հոգւոց կերակուր՝
ըն, եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ
ամ բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ այ) միշտ զհո
գւս նց կերակրէր ՚ի ժամու և արտաժամու.
Այլ առաւել իմաստութն ծառայն տալ
՚ի ժամու ծառայակցացն զկերակուր.
և քանքարացն օրինակաւ՝ կրկնապատիկ շա-
հողին և զելացողին՝ զնոյն նշանակեաց եթէ
պարտ է տալ ամի որ խնդրիցէ։ Իսկ ինձ առ-
քեղ ով սիրեցեալ անձին իմոյ՝ կրկին և ոչ
միկին է հարկաւորութն տալոյ։ Մ[illegible]րա վե-
հագոյն ցուցը տն հրամանին. որ ամ խնդրո
ղի օրինադրէ զտալն։ և Երկրորդ՝ ը բնաւոր
արեանառու մերձաւորութն և մննդակցու-
թն. Որ ՚ի հեղգալն՝ երկնչիմ ՚ի ձայնէ
մեծաբարբառ փողոցն. մրգրէին՝ և առաքե
լոյն. միոյն զի ասէ, յընտանեացն զաւակի
քո զակն ՚ի վայր մի արկանիցես՝ անտես առ-
նելով. և միւսոյն, եթէ ոք իւրոցն՝ մանաւանդ
և ընտանեացն խնամ ոչ տանիցի, ՚ի հաւա-
տոցն ուրացլ է. և չար ևս ք զանհաւատն
է։ Բայց դու զգուշ լեր՝ գործով փութալ
՚ի կատարումն ասացելոցս. ըստ նմանութե
ժիր և հաւատարիմ ծառային՝ որ արթնութ
սպասէր տն գալստեան. զի ոչ եթէ լսելեք


օրի

օրինացն արդարասցին գրէ առաքեալն, այլ առնելիք օրինացն։ Ով ըստ որում եա՛ն ի յոչ տալն դատապարտիմ իբր զլացող տրու-եան, նոյնպէս և դու յոչ հետևելն գործով տունեցելոցն։ Ով որ պատուիրանաւն թագու-ցանօղ զբանին արծաթ՝ ասաց հանել յար-տաքին խաւարն, նոյն և զարկեալն ի սեղա-նաւորս ի լսելիս մարդկան, ի լողացն տա-կոսիւք ասաց պահանջել։ Նա գիտողացն զկամս տն իւրոյ և ոչ պատրաստողացն, գան բա-զում ըմպել։ Իսկ որ շտեմարանապետն է ամ բարեաց. և զմտացն կամի զկեալն, և ի գի-տութե ճշմարտութե զհասանելն, տացէ և մեզ յիւրոցն առնուլ արժանապէս ըստ բարե-սէր կամացն. որ հաւատարիմ տնտես գի-տութե բանին, որ է հաց յերկնից իջեալ կե-րակուր հոգւոց, և օրինօք մատակարարել։ Նա ձեզ մտադրութե և բարւոք հաւանութե ընդունել. և տալ զպտուղ լի յոգնաբեղուն և պարարտ երկրին յաննախանձ սերմանողէն՝ պտղաբերութն ընկալեալ մասն կենացն սերմանս։

Նա արդ սկսցուք՝ ուստի սկսանելն է ար-ժան՝ ի դաւանութե հաւատոյն ճշմարտութե. որ է հիմն և արմատ ամ բարեաց։ Վասնզի և տրն զայս եդ հիմն եկեղեցւոյ իւրոյ՝ տալով առ. Նախնի դասանօղն պետրոս. Թէ դու քո խոստովանութեդ՝ ես իբրև զվէմ հաստատուն և անշարժ, և ի վր այդր վիմի շինեցից զեկե-



ղե

ղեցի իմ. յդ՟, զա՟մ հաւատացեալս և ճշմարիտ
խոստովանօղս համագոյ և զուգականն Երրոր
դութեանն: Նաև շինիչն եկեղեցւոյ Պօղոս ա-
սէ. շինեալ էք ՚ի վր՟ հիման հաւատոյ առա-
քելոց և մարգարէից: Ուր թէ՝ իբրև իմաս
տուն ճարտարապետ՝ հիմն եդի զհաւատն
որ ՚ի մի Երրորդութիւն. յորոյ վր՟ գեղեցկա-
պէս յարմարի շինուած ա՟մ առաքինութե՟.

Եւ արդ՝ այս է ճշմարիտ հաւատոյ դաւա-
նութի: Հաւատալ զԱ՟ծ Հայր՝ էութի ճշմա
րիտ. գոյ կատարեալ. անեղ. անսկիզբն. ան-
ժամանակ. անպատճառ. անիմանալի. անտե
սանելի. անճառելի. անհաս. պարզ. անքըն-
նին. անկէտ. անսահման. աներբ. անուր.
անբովանդակելի. անայլայլելի. անփոփոխ:
գերաբուն. գերագոյ. գերալոյս. գերան-
ճառ. Ո՛չ յումեքէ եղեալ, և ոչ ինքն զինքն
արարեալ. ոչ ինչ յառաջ քան զնա, և ոչ
զոյգ ընդ նմին. այլ ինքն գոլով սկիզբն և
պատճառ ա՟մի: Համագոյիցն՝ ծննդեանն և
ելողութե՟, և եղականացն՝ արարչութե՟.

Եւս զՄիածինն Բան նորին և Ծնունդ ՚ի
վեր քան զբան: Կերպարան և ճառագայթ
էութե՟ն. նկարագիր և կնիք կենդանի. իմաս
տութի և զօրութի. ա՟մ ա՟ծավայելուչ կոչմանցն
Հօր՝ էապէս ունօղ ո՟պ նոյնագոյ բնութի:
Ա՟ծ յԱ՟յ. անեղ յանեղէ. անժամանակ յան-
ժամանակէ. կեանք ՚ի կենաց. լոյս ՚ի լուսոյ:



Ո՛չ

Ոչ կրտսեր քան զՀայր՝ թէ և ծնունդ. այլ որքան Հայր՝ Հայր, և որդի՝ որդի։ Ոչ է և Հայր՝ որդւոյ Հայր. և որդի ոչ ունելով, և ոչ զՀայրութիւն ունել կարէ. ըստ որում և ոչ Որդի՝ առանց Հօր. այլ յատկութիւն երկաքանչիւրոցն 'ի միմեանց զանազանի։

Եւ Հոգին ոչ բղխումն 'ի Հօրէ անժամանակ. ոչ ըստ որդւոյ ծննդեամբ, այլ ելումն յէութենէն. ըստ որում. Հոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ. էակից Հօր, և փառակից որդւոյ։ Նոյն բնութիւն՝ Համագոյից անձից Հաղորդ և զուգական. որ ինչ զՀօրէ և զորդւոյ ասացաւ անեղութիւն. և որ 'ի կարգին։ Որպէս զի ոչինչ առաւելութիւն և կամ նուազութիւն 'ի պաշտելի Երրորդութեան տեսանի. այլ համայնիւք գոլով զոյգ և հաւասար միաւոր՝ բաց յառանձնաւորութեանցն յատկութեանց. և որ նոցին հետեւի։ Այսինքն, զի Հայր՝ Հայր. և որդի՝ որդի. և Հոգի՝ Հոգի։ Եւ ոչ է իմանալ և կամ ասել զՀայր՝ որդի և կամ Հոգի. և ոչ զորդի՝ Հայր կամ Հոգի. և ոչ զՀոգի՝ որդի և կամ Հայր. Այլ Հայր՝ միշտ Հայր. և որդի՝ միշտ որդի. և Հոգի՝ միշտ Հոգի ամէն։

Եւ ըստ առանձնաւորութեանցն, և յատկութեանցն զանազանին։ Այսինքն, Ծնողութիւն. և Ծնելութիւն. և Ելողութիւն։ Ոչ է ոչ երբեք Հայր՝ ծնունդ կամ ելողութիւն. և ոչ որդի՝ ծնօղ կամ ելումն. և ոչ Հոգի՝ ծնունդ և կամ ծնօղ։

Նա միշտ պատշաճի ծնողութ՟ի հօր, ծնելու-
թե՟ որդւոյ, և ելողութե՟ հոգւոյ. զի ոչ
տուանձնաւորութիւն անփոփոխելի, այսպէս և
յատկութիւնք։ Նա՛ հայր պատճառ և սկիզբն
համագոյից ծննդեան և ելողութ՟. Բայց
ոչ թէ ի ժամանակական ինչ այսու ղիջանէ ի
կարծիս. և անպատճառ և անսկիզբն։ Այլ որ
չէնաւբար ընդ սկզբանն գոլով և պատճառի
նոյնագոյ բնութ՟բ. Նա ոչ երիցութ՟ի և կրտսե-
րութե՟, ոչ մեծութ՟ի և փոքրութ՟ի, ոչ առաջութ՟ի
և երկրորդութ՟ի ի համբաւսն իմանի. այլ անձի-
բաց յանձնաւորութեցն՝ համար և միաւոր։
Բնութ՟բ մեծութ՟բ անեղութ՟բ զօրութ՟բ մեծութ՟բ
փառօք պատուով անհասութ՟բ անտեսութ՟բ
անճառութ՟բ իմաստութ՟բ բարութ՟բ արարչութ՟բ
և նախախնամութ՟բ. Ծնեալ և ելելոցս էակ՝
իմանալեաց և զգալեաց. լոյս՝ և լուսոյ արա-
րիչ. կեանք՝ և կենդանարար ամ՟ն. իմաստութ՟ի՝
և իմաստարար բոլորից. բա՛ն և բանից սրբոց.
բարի՛ և բարեաց պարգևաբաշխ. զօրաւոր՝
և զօրացուցիչ զօրացելոց. կատարեալ՝ և կա-
տարելոց կատարելագործ. լի՛ և լցուցիչ կա-
րօտելոց. յաւիտենից՝ և յաւիտենից գոյա-
ցուցիչ. անժամանակ՝ և սահմանիչ ժամա-
նակաց։ Նա զի ժամանակք և յաւիտեանք.
և որ ընդ նոքօք իմանալիք և զգալիք՝ նովաւ
և ի նորին ակնարկելոյ եղեն և կառավարին.
և կան միով յանլոյծ հաստատութե՟.



Նայս

Մայրիկ համառօտիւք Նորոգողութեան խոս-
տովանութեն · յորս պարտ է յարել և զխոր-
հուրդ բանին անօրէնութեան ։

Քանզի՝ մինն՝ ի յերից այս անքաւելից անձնա-
ւորութեանց՝ ծնեալն ՚ի հօրէ անժամանակ և
անմարմին նախ քան զյաւիտեանս՝ էակից
և փառակից հոգւոյն, կամաւ և հաճութեամբ
համօրենիցն՝ խոնարհի յանձառ փառացն և
յանբաւ բարձրութեանն ՚ի խոնարհ եղծեալ և ա-
պականեալ խեղաստեղծ պատկերին ։ Ի՛ջ զընա-
ւոր զօրութի ամենակարօղ իշխանութեան ար-
կեալ ՚ի կիրս այլ զամենաշնոր բազմապատիկ
իմաստութին ։ Նաեւ եօք հրեշտակապետին՝
բնակի յորդանդի հոգւով մաքրելոյ ամեն-
երջանիկ և փառաւորեալ կուսին Մարիամու ·
և ՚ի նորին բնութեն զգենու մարմին հոգւով
և մտօք · մարդ կատարեալ, և ած ճշմարիտ ·
անշփոթ միութբ խառնեալ զանխառնելին՝
նոր և սքանչելի խառնմամբ ։ Քանզի ոչ
պարզութի անյօդ և անմարմին էութե ածութեն՝
փոխեցաւ ՚ի նիւթական և յօդաւոր թանձ-
րութի մարմնոյ · և ոչ հիւթաւոր և թանձր
բնութի մարմնոյն՝ յեղաւ յանօր և աննիւթ
ածութեն պարզութի · այլ երկաքանչիւրոցն
յատկութի բնութեց պահեալ անշփոթ · և միա-
ցեալ անձառաբար ՚ի վեր քան զմտ խառնումն
և միութի ։ Մի որդի · և մի տր յս քս յերկուց
կատարելոց ։ Նա ՚ի քրիստ հրաշկեր որովայնին՝


ծնու

Ձուլեաց ամենարուեստն վերստին զբնութիւն
յառաջին անապականութիւն։ Եւ զի ոչ մա-
սամբ էր ապականեալ մեղօք մարդկութիւն, այլ
բոլորովին հոգւով մարմնով և մտօք. վասն այնո-
րիկ զբոլորս զգեցաւ բանն և միաւորեաց
յինքն. զի իւրով անմեղութեամբն և անապակա-
նութեամբն՝ արասցէ զմեղանչականն անմեղ, և
զապականեալն անապական. և զամենայն կերպ
մարդկային կրեաց՝ բաց 'ի մեղաց։
Նախնիքն. քաղցեաւ՝ որ տայ կերակուր ամենայն
կենդանեաց։ Ծարաւեցաւ՝ որ զկենաց
ջուրն պարգևէ հաւատացելոց իւրոց։
Վաստակեցաւ՝ որ հանգիստն է աշխատելոց։
Ննջեաց՝ որ պահէրն զԻսրայէլ անքուն։ Արտասու-
եաց՝ որ եբարձ զամենայն արտօսր յամենայն երեսաց։
Շրջեցաւ յերկրի զամս երեսուն. լռեաց և ոչ
յայտնեաց զփառս աստուածութեան իւրոյ՝ մինչև 'ի
լրումն կատարեալ հասակին։ Գայ այնու-
հետև 'ի մկրտութիւն ամենասուրբն 'ի մեղաց և ան-
կարօտն մաքրութեան։ Մկրտի 'ի յամենորդւոյն՝
'ի մեզ զշնորհս մաքրութեան ցուցանելով։
Վկայի 'ի հօրէ որդի սիրելի և կատարիչ կա-
մացն իւր. զմեզ յորդեգրութիւն հօրն վերածելով։
Յայտնի և յաղգակից հոգւոյն՝ աղաւնա-
կերպ իջմամբն. որ 'ի մեզ՝ պարգև իջմանն
խորհրդածի։ Վարի 'ի հոգւոյն յանապատ՝
պահեալ քառասնաթիւ աւուրբք. և յաղ-
թեալ փորձողին մերով՝ զշնորհս յաղթութեան

և որ՚ի նմանէ բրաբիոնն՝ մեզ պարգևելով.
և զմեզ ուսուցանելով՝ պսակօք յաղթել փոր-
ձոյնն։ Եւ զգուշոյն զբռամբ ածեալ և
զհնկայն կապեալ՝ դառնայ այնուհետև զօ-
րութ մեծաւ՝ յաւարի առնուլ զստացուած-
սըն անիրաւութ. զոր յափշտակել էր պատ-
րանօք և ոչ զօրութ։ Եւ սկիզբն առնէ նշա-
նաց և վարդապետութ. որով զմիմ դարձոյց
զկապուտն ՚ի դերողէն։ Եւ՚ի լման այսոցիկ
ըստ նախատեսացն կանխաձայնութ՝ ՚ի կամա-
ւորն գայ՚ի չարչարանս։ Ո՛չ ի թէպէտ մարմ-
նանալովն և անմեղութբն սրբեաց զբնութիս
և արդարացոյց առաջի հօր և հրեշտակաց և
կործեցեալ իշխանի դժխ, (քանզի ոչ ինչ
յիւրոցն ՚ի նմա եգիտ) բայց պարտիք նա-
խագործելոյ մեղացն՝ տակաւին կայր ՚ի վր
բնութեան։ Ա՛յ տայ զիւր անմեղ մարմինն
նուէր և պատարագ հաշտութ հօր ընդ ա-
րարածոց՝ եզն պարարեալ և գառն անմեղ և
բառնայ զմեղս աշխի։ Եւ զի անճառ էր ած-
ային անչարչարելի և անմահ բնութբն չարչա-
րանս և մահ ընդունիլ, նովին իւր և զչարչա-
րելիս զգեցաւ մարմին. զի չարչարեսցի ան-
չարչարն չարչարելեաւն, և մեռցի անմահն
մահկանացուաւն, և ազատեսցէ զպատժա-
պարտքս ՚ի դատապարտութ յանցաւորութն։
Եւ ոչ եթէ այլ ոք էր անձամբ որ չարչարէր,
և այլ ոք որ ոչ չարչարէր. և կամ այլ որ

մեռանէր, և այլ որ անմահ մնայր. այլ մի և նոյն անձն գոլով 'ի չարչարանս՝ էր անչարչարելի, և'ի մահուն անմահ.

Եւ ոչ այսչափ միայն, այլև անպարագիր և անփոփոխակ գոլով բնութեամբ՝ էր 'ի խաչին, և ընդ աջմէ հօր. 'Ի գերեզմանին, և յաթոռն քառակերպեան. 'Ի ստորին վայրս դըժոխոց. և գեր'ի վերոյ քան զամենայն բարձրութիւս. 'Ի դպրաց և'ի փարիսեցւոց թշնամանեալ, և'ի սերովբէից ընդ հօր և հոգւոյ սրբաբանեալ. Մարմնովն'ի գերեզմանի, և հոգւովն 'ի խաւարաբնակ արգելանս դժոխոց. Ո՛չ որոշեալ աստուածութիւնն 'ի մարմնոյն և կամ 'ի հոգւոյն. Յարուցեալ աստուածապէս և ինքնիշխանաբար նովին մարմնովն՝ որով չարչարեցաւ և մեռաւ. Երևեալ աշակերտացն. և հաստատեալ զնոսա 'ի հաւատս յարութեան՝ տեսութեամբ և շօշափմամբ. և խօսելով և'ի կերակուրս մերձենալով. Համբառնայ յերկինս 'ի սեպհական փառսն հայրենի և նստի ընդ աջմէ հօր. Որում ոչ երբէք պակասեաց. Խոստացաւ գալ միւսանգամ փառօքն հայրենի. և դատողական իշխանութեամբն՝ առնել յարութիւն արդեամբք յանլուծանելի կեանս և'ի մշտընջենաւոր անմահութիւն անձն. զոր այժմ յուսով նորոգեաց. Այս է հաւատ ուղիղ դաւանութեան կարճառօտ բանիւ 'ի փրկական տնօրէնութեան մարդացելոյն Աստուծոյ մեր՝ կամաւ հօր և հոգւոյն՝ միածին բանին.

Իլ պարտ է դնել · զի Թէպէտ անունն հաւատոյն մի է, այլ 'ի բազում զանա-զանս · զի մեծ և առաջին հիմն և արմատ ամ հաւատոյ՝ վերագրեալ է · այլ հետևաբար այսոքիկ՝ պարտ է յամենայն հաւատալ յոյ ուսուցելոյն մեզ փրկական խորհրդոցն ։

Ի յինքն՝ հաւատալ զեկեղեցի քո որ ընդ-տրեցերս · որք ճշմարիտ և աներկբայ հա-ւատով խոստովանին զհամագոյ և պաշտեն զՍ Երրորդութիւն · և զմարդեղութեան խորհուրդ միածնին · ամ և մարդ կատարել · և վն մեր չարչարեալ և մեռեալ անչարչարելին և ան-մահն · յարուցեալ և 'ի յերկինս համբարձեալ և ընդ աջմէ հօր նստել · որև գալոց է միւ-անգամ ։ Ո ամենն որք ընդ այսպիսի խոստո-վանութեամբ՝ մի եկեղեցի քո հաւատալ · և միոյ գլխոյն քո մարմին և անդամ՝ ըստ առաքելոյն ։

Ո՛չ բաժանել և պատառել հայհոյական բա-նիւ · վն դոյն ինչ եկեղեցական աւանդութե զմարմինն քո · զոր խաչիւ և չարչարանօք ստացար · և փրկական արեամբն գնեցեր և սրբեցեր և միացուցեր ինքեան ։

Հաւատալ և 'ի Մկրտութիւն որ՝ եթէ մաք-րիչ է ամ յանցանաց · և զախտաւոր ծնունդս մարմնոյ՝ անախտաբար ծնանի յորդիս երկ-նաւոր հօրն, և յեղբայրակցութի միածնին, և 'ի հաղորդութի հոգւոյն սրյ, և 'ի ժառան-գութի երկնից արքայութեան,

Հաւատամ և ի Մարմին և յԱրիւն Որդւոյն Այ, որ պատարագի ի վր սեղանոյն, թէ ճշմարտապէս է նա Մարմին և Արիւն Քի. Քանզի այն որ բանիւ ասաց երկնի և երկրի (որ անլուծանելիք են և հաստատունք՝ դիւրաւ անցանել, քան թէ յինէն ասացեալ բանն անկատար մնալ) նոյն բանիւ ասաց՝ այս է մարմին իմ և արիւն. ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց. զոր հաւատով և սրբութբ ճաշակողացն ետու զսա։ Որք թէպէտ և մեղաւորք են, այլ խոստովանութբն և ապաշխարութբն սրբեալ՝ մերձենան յիս ճաշակմամբ ի ճշմարիտ կենդանութիս, և յիս բնակին և ես ի նոսա։ Որ թէ և մարմնով մեռանին, այլ զսերմն ճշմարիտ կենաց յինքեանս ունելով, ի հոգևոր գարունն որ է հասարակաց յարութիւն, բողբոջեալ վերանորոգին ճշմարիտ և անմահ կենդանութբ. ոչ առնլով զդատապարտութեանն հոգւոյ մահուն ճաշակ յաւիտեան։

Հաւատամ և ապաշխարութեն մեղաց. զոր մարդասէրն Այծ (որ ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալ նր ի չար ճանապարհէ և զկեալն,) օճառ լուացման և սրբութե մեղաց ետ եկեղեցւոյ։ Զի թէպէտ և առաջին կամք նր է մնալն մեր սրբութբ և արդարութբ յանմեղութի, այլ ոպ արարիչ բնութեն՝ գիտէ զտկարութիս մեր՝ զի դիւրադթելի եմք և սխալականք. և հանապազ ի վայր հակիմք ի բարձ



բու

րութիւն առաքինութեան։ Մանկունք և մարտակից
թշնամի յորջնամար և բազմապատկեսցէ, և՛ ի
չար առնելն իմաստութեան։ Սոյնօրինակ երկ
րորդ կամօք՝ ոչ առաջնովն (ըստ բաղում
աղօթութեան խորոյ և անոխակալ գթութեան և այն
քան սիրոյն) հայրն բարերար՝ զորդին իւր ետ
՚ի մահ վս մեր. և միածինն՝ զինքն. և հոգին
սբ՝ զփառաւորելն։ Նա և զապաշխարութիւն.
զի նեխեալքն և հատեալքն յանդամոց քի
մեզօք՝ առողջասցին ապաշխարութբ. և վե-
րստին ՚ի գլուխն պատկանեալ յօդեսցին։
Այս պարտ է հաւատալ՝ թէ մինչև մե-
ծանեալ է իցեն, զղջմամբ և խոստովանութբ,
և արտասուօք և ողորմութբ, պահօք և աղօ-
թիւք, և որ ՚ի սոյնս յարմարին բարեգործու-
թիք. եթէ իցեն մեղքն չէ զձանձախարիթ
անլուանալի սևութբ՝ իբրև զձիւն սպիտա-
կասցին. և եթէ իցեն արեամբ չափ ոչ զներկ
ուամ որդան ՚ի գոյն կարմրութեան անեղանելի՝
իբրև զասր սրբեսցին։

Հաւատալ և յարութեան մեռելոց և դատաս-
տանին յաւիտենից. որ է սկիզբն և արմատ
ամ բարեգործութեց. առանց որոյ անհնար է
հաճոյ լինիլ այ։ Զի եթէ ոք յարութեան յու-
սալ ոչ է հաստատեալ՝ զիարդ տայ զանձն ՚ի
ճգունս առաքինութեան. և եթէ ՚ի դատաստան
մտանելոյ ակն ոչ ունիցի, երբ դադարէ ՚ի
մեղաց։ Զի եթէ յարութեան հաւատացեալ և

 դա

դատաստանի ակնկալեալ՝ օրըստօրէ 'ի չա-
րիս յաճախեմք. զինչ ոչ գործեաք եթէ ոչ
եր երկիւղ դատաստանին. ապաքէն անխտիր
բերեաք յամ գարշութիս մեղաց: Ի սպանու-
թեն, 'ի զրկանս, յանիրաւութեն, յափշտակութեն.
'ի պոռնկութեն, յարուագիտութեն, 'ի հպարտու-
թեն, 'ի նախանձ, յատելութեն, և 'ի սոցին նմանս
պէս պէս և 'ի բիւրապատիկ չարիս: Յաղագս
որոյ յոյժ կարևոր է հաւատալ յարութե և
դատաստանին. զի իբրև սանձ 'ի բերան լե-
նելով զյարձակումն չարութե յետս նահան-
ջեալ՝ յառաջադէմ յառաքինութիս լինիցիմք:
Հաւատալ և յայս՝ թէ յարութի և դատաս-
տան ոչ հոգւոց միայն է լինելոց, ըստ որում
ոմանց թուեցաւ, այլև մարմնոց. և մանաւ-
անդ սմա. քանզի հոգին անմահ է. զի և մահն
ոչ այլ ինչ է՝ քան անջատումն հոգւոյ 'ի մարմնոյ.
այսպէս և յարութին՝ վերստին նոյն կապիլ 'ի
միմեանս անլուծանելի միաւորութբ: Եւ ոչ
աստ 'ի միասին քաղաքավարեցան՝ լաւ և կամ
վատթար գնացիւք, նմանապէս և յայնժամ
'ի միասին վայելեսցեն և կամ տանջեսցին: Եւ
ոչ ըստ դանդաղելոյ ոմանց՝ եթէ այլ մարմին
յարիցէ փոխանակ այնմ որ մեռաւն. այլ նոյն
վախճանեալն: Զի ոչ անիրաւ է ած զայլ
փոխանակ այլոյ պատժել և կամ պսակել.
այլ ըստ առաքելոյն՝ ընդունի իւրաքանչ-
իւրոք իւրով մարմնով զոր ինչ գործեաց յա-
ռաջագոյն՝ եթէ բարի, և եթէ չար: 166

Հաւատալ դարձեալ՝ թէ և արքայութեան երկ-
նաւոր ընդունելոց են այնմիկ արժանաւորքն
և կեանս յաւիտենականս. զի այս է որ թե-
թեւացուցանէ զբեռն օրինաց, և քաղցրա-
ցուցանէ զլուծ պատուիրանին, և առնէ
զդժուարինն դիւրինս, և զառապարն 'ի
հարթ ճանապարհս. և դիւրակոխ՝ զանձուկն
և զնեղն քան զլայն և ընդարձակ: Այն այս
հաւատ՝ զօրացաւ 'ի վերայ ամենայն ընդդիմահարաց
մարմնոյ: Կոխեաց զհուր. բթեաց զսուր:
Մարտեաւ ընդ գազանս: Խզեաց զկապանս:
Խորտակեաց զզէնս: Փշրեաց զալեղունս:
Արհամարհեաց զքաղց: Նշկահեաց զմեր-
կութիւն: Ոչ երկեաւ 'ի բռնաւորաց: Խորո-
տացաւ 'ի վերայ մահու: Եւ միանգամայն զբո-
լոր 'ի վերայ յարուցեալ ներհակ զօրութիւն կոր-
ծանեաց: Օ այս վայելչական կարգ հաւա-
տոյ՝ գտցես և յընդհանրական դաւանութե-
նս և տիեզերական ժողովոյն Նիկիոյ. զոր
օրըստօրէ վերագրեն դասք հաւատացելոց
բազմազան լեզուօք՝ մեծամեծք և փոքունք:
Քանզի յետ խոստովանելոյ զհամաբուն և
պաշտելի Երրորդութիւն, և զներմարդութեան
տնօրէնութիւն, յաւելուն թէ՝ հաւատամք և
յայս միայն ընդհանրական և առաքելական
եկեղեցի. 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի
թողութիւն մեղաց, 'ի յարութիւն մեռելոց, 'ի դա-
տաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց,

 յաւ

յարքայութին երկնից, և՚ի կեանսն յաւի-
տենից։

Մայրինկ լի և անթերի հաւատոյ խոստովա-
նութի շինել՚ի վր հիման առաքելոց և մար-
գարէից։ Սակայն ոչ կտրեալ փրկութի ինքն
ըստ ինքեան առանց գործոց առաքինութե. զի
հաւատք առանց գործոց՝ մեռեալ են ասէ ա-
ռաքեալն. ոչ և գործք առանց հաւատոյ. զի
և դևք հաւատն գրեալ է. և ոչ միայն հաւա-
տան, այլև սարսին ևս. բայց ոչինչ օգտին
առանց գործոց։ Այլ պարտ է ընդ մաքուր
ուղիղ հաւատոյն, և զզանազան քարինս ա-
ռաքինութե յեռուլ ըստ սողոմոնի. որք հան-
դերձեալ են արքայական թագ յօրինել և ըն-
ծայել երկնաւոր թագաւորին. որով մանա-
ւանդ ընդ ինքեանց պսակեսցի գլուխն քո։
Ոյր և այսորինակ հանճարիչն պօղոս ասէ. ես
իբրև իմաստուն ճարտարապետ՝ հիմն եդի
զհաւատոյն վարդապետութի, բայց այլ է որ
շինէն. և իւրաքանչիւրոք զգոյշ լինիցի զի
որդ շինեսցէ. զի եթէ ոք շինիցէ ասէ՚ի վր
հիման հաւատոյն ոսկի, արծաթ, ականս
պատուականս, փայտ, խոտ, եղէգն. որ են
գործք։ Ոսկի՝ խոհեմն իմաստութի։ Արծաթ՝
բանական առաքինութի։ Պատուական քա-
րինք՝ պէս պէս և զանազան բարեգործութիք։
Իսկ փայտ խոտ և եղէգն՝ զեղեռնագործութե
ներէ զնշանակ. փայտին՝ զթանձրագոյն



և

և զգործով մեղսն յայտ առնէ․ որ է յատուկ մարմնոյ։ Իսկ դիւրաշարժ և անհաստատ եղեգամբն՝ զյոգնաշարժ բանիւ յանցանսն 'ի ձեռն լեզուոյ։ Իսկ յոգնաբոյս խոտովն՝ զբազմազեղուն և բիւրակերպ մտաւորական շարժմանցն սխալանս։

Իսկ 'ի վր ածէ թէ՝ իւրաքանչիւր գործն յայտնելոց է․ զի օր դատաստանին ընտրեսցէ․ զի հրով յայտնելոց է դտուրն․ և զիւրաքանչիւր գործն զինչ և իցէ՝ հուրն փորձեսցէ։ Ոչ թէ ոսկի է կամ արծաթ՝ ոչ միայն ոչ ծախի 'ի հրոյն, այլև առաւել ևս զտեալ պայծառնայ․ և թէ ունէր դուզնաքեայ ինչ խառնուած ժանկոյ՝ սրբեսցի և ճառագայթաձև փայլեսցի։ Իսկ եթէ փայտ խոտ և եղէգն՝ վաղվաղակի ծախել այրնի։

Իսկ զի մի կարծեսցի, թէ ընդ կիզելն գործոցն՝ և գործօղն ծախել յոչէութի դառնայ, յաւելու թէ՝ ինքն կեցցէ։ Իսկ զի մի այնպէս իմասցիս թէ զճշմարիտ կենաց առէ, ածէ 'ի վր․ այլ այնպէս՝ ոպ թէ 'ի հուր․ զայն յայտ արարեալ թէ՝ անմահութի ունի և կիզելի․ միշտ այրի և ոչ մեռանի։

Իսկ արդ՝ 'ի վր այսպիսի գեղեցիկ և ճշմահաստատ և առաքելաշէն հիման, որ ոչ 'ի շնչմանէ հողմոց շարժի և ոչ յիջմանէ անձրևաց անկանի և ոչ 'ի յարուցմանէ գետոց կործանի․ յորս առակեալ են զանազան փոր-

Զուէք · այլ յայնպիսի նիւթոց պարտ է յարմարել շինուածս, որ՚ի հուր ընտրուեն մերձենալով պայծառանայ՝ քան թէ ապականի · որ են հոգեկան և մարմնեղն առաքինութիւնք ·

Եւ զի նախադաս է և պատուական ամեն անձն բանական քան զմարմինն՝ ըստ իմանալեն գոլոյ և ազգակից վերնոցն և տիրականին պատկեր, իրաւացի՝ է նախ զնորայն զարդարել մասունս՝ իւրոյն և բնաւոր առաքինութեամբք ·

Եւ վասն զի եռամասնեայ գոլով ոգի՝ ունի Բանն, Ցասումն, և Ցանկութիւն · արարչապետեղ հրամանաւ և դրութեամբ · որով ուղիղ ըստ բնականին վարել՝ ոչինչ ՚ի վերնոցն վերջանայ նմանութենէ : Եւ իւրաքանչիւր սոցա՝ ունին ինքեանց յատուկ առաքինութիւս : Եւ է բանականին առաքինութիւն՝ խոհականութիւն · և ցասմնականին՝ արիութիւն · իսկ ցանկականին՝ ողջախոհութիւն : Եւ խոհականին՝ գործ է խորհելն և ընտրելն զլաւն ՚ի վատթարէն : Իսկ արիութեան՝ զառ՚ի խոհականէն ընտրեալն՝ քաջապէս և արիաբար կատարել : Իսկ ողջախոհութեան՝ զն ընտրութեանն և կատարմանն՝ ՚ի սէրն որ առ ած բորբոքել · որով զնախադասն ինքեան՝ սիրոյն ջերմութեամբ առաւել զօրացուցանէ ՚ի բնաւորսն ունակութիւս ·

Բայց տեսանել արժան է և զբարեձև սոցա կարգաւորութիւն : Զի նախ բանականն յառաջադասի՝ որպէս վեհ քան զայլսն · և իշխան



և

և հրամանատալ՚ի վր նց · զի նր է գործ ընտ-
րելն · և ըստ նմին աւանդել երկաքանչիւ-
րոցն՝ ցասմնականին և ցանկնին զարժանն ։
Իսկ ցասմնականին՝ հաւանուԹ և արիուԹ
հրամայելոցն հետևել ։ Ունել և սաստ ՚ի վր
ցանկականին · զի զաւանդեալն նմա ՚ի բանա
կանէն՝ ուղէղ ցանկուԹ առ ած և յածային
պատուիրանսն՝ ամբողջ և աներտ պահեսցէ ։
Սա է բանականն ինքնիշխան · ոչ ունելով և
ոչ մի ոք համակարգիցն իշխանուԹ ՚ի վր նր ։
Իսկ ցասմնականն՝ իշխի ՚ի բանականէն և
իշխէ ցանկականին ։ Իսկ ցանկականն՝ իշխի
՚ի ցասմնականէն · և ինքն այլում ոչ իշխէ ։
Յայտնէ զայս և կայումն նց որ ՚ի մարմինս ։
Ա զի բանականին կայումն է ՚ի գլուխ
ն ի խելապատակ և յուղեղ ։ Սա որպ գլուխ
զվեհն և զառաջինն ընկալեալ նախադասու-
Թի յանդամս մարմնոյ՝ է իբրև զԹագաւոր
և իշխան և հրամանատր ՚ի վր ամ մարմնոյն ։
Նոյնպս և խոհականն անդ ունելով զնիստ
արքունեացն՝ որպ զԹգւր իշխէ ՚ի վր խոնարհ
կացելոցն՝ ցասմնականին և ցանկականին ։
Իսկ ցասմնկնին կայումն է ՚ի սրտի՝ ՚ի ներքոյ
քան զգլուխն · իշխի ՚ի բանականէն՝ ՚ի վերոյ
կացել քան զինքն, և իշխէ ցանկականին որ ՚ի
խոնարհ քան զնա ։ Իսկ ցանկականին բնա-
կընէ յերիկամունսն և ՚ի ներքին կամսն ·
մս այնորիկ և իշխի ՚ի ցասմնականէն՝ որ ՚ի վե

րդյ քան զնա․ և ինքն ոչ իշխէ ումեք․ զի և ոչ է զօրութիւն ինչ ՚ի խոնարհ քան զնա եթէ

հնազանդեսցի նմա․

Այս բարուք կարգաւորութիւս տեսանի յոյժ հրաշափառապէս և պատկառելի յարացուցիւ և յած․ Այս զի ած ինքնիշխան գոլով և թագաւոր ՚ի վերայ ամենեցոց՝ իշխէ ՚ի վերայ բնութեանց․ որով և ՚ի վերայ մարդոյ․ ինքն անիշխան գոլով։ Իսկ զմարդն ՚ի պատկեր իւր արարեալ՝ տայ իշխել ՚ի վերայ երևելի արարածոցս․ և որ ընդ իշխանութեամբ նորեան մարմնոյն․ Իսկ զգալիքս ամ, ընդ իշխանութեամբ մարդոյն․ ինքեանք ոչ իշխելով ումեք․

Արդ՝ որքան այս կարգաւորութիւն՝ վայելուչ է պէս ըստ բնաւորին սահմանի ուղղի ՚ի մեզ ամ ինչ բարեձև և ա տարբերոյն կարգի լինիցի։ Եւ թրոնականն ՚ի մեջ հրաման պատուիրանի՝ անխափան կատարեսցի․ Զի խոհականն միշտ յածայինսն խոկասցի ա գրոյն․ Եղիցին բանքս այսոքիկ ՚ի սրտի քում և յանձին քում․ և խօսեսցիս նոքօք ՚ի նստիլ ՚ի տան, ՚ի գնալ ՚ի ճանապարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել․ և ըստ միւսոյն, յօրէնս ան խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի։ Եւ զի ամ գործոյ եթէ բարի և եթէ չար՝ նախ խորհին է և ապա առնելն․ և առանց խորհելոյ դք ինչ ոչ գործէ․ ապա ուրեմն՝ որ բարուք և ուղիղ խորհի, ըստ նմին և զգործն բարուք և ու-

 ղիղ

ղեղ կորէ։ Իսկ յորժամ խոհականն զիշխա-
նութիւն իւր և զգործ ամբողջ ունի, իշխէ ՚ի
վերայ ցասմնականին. և հրաման տայ պնդմ բա-
րելաւութեանց խորհրդով. և ցասմնականն արի-
ութեամբ և քաջութեամբ իւր հպատակեալ՝ բարւոք
կատարէ։ Այնպէս և ցասմնականն բնաւո-
րականին հետեւելով՝ կայ ՚ի չափաւորութե-
բանականին, և իշխէ ՚ի վերայ ցանկականին։ Իսկ
ցանկականն ուղիղ և ամբողջ պահելով զբա-
նականն՝ ոչ ապստամբէ ՚ի հրամանէ ցասմնա-
կանին. այլ որպէս զծառայ հլու՝ չափաւորութե
կատարէ զնորա հրամանսն. և ինքն ոչ ամբառ-
նայ զեղջիւրս ՚ի վերայ ուրուք. զի չէ՛ ոք ընդ-
նորա իշխանութեան։

Եւ այլ միւս ևս մասն բանականին՝ որ կոչի
արդարութիւն. և է սա կատարող և ուղղիչ
և դատաւոր ամենայն մասանցն։ Վասնզի նախա-
որպէս գործեաց՝ բանականն զբոլորսն ուղղէ.
զիւրաքանչիւրսն յիւրումն անսայթաք պա-
հելով բնաւոր շարժութիւն։ Իսկ այս այսպէս
լինելով՝ այնուհետև է բանականն խոհական.
և ցասմնականն արիական. և ցանկականն ողջա-
խոհական։ Իսկ յայնմ հետէ ոչինչ է խափան
և արգել կամացն Տեառն և պատուիրանացն ՚ի
մարդն կատարելոյ. ըստ որում և եդ զգօ-
րութիւն ՚ի մեզ, և պահանջէ զկատարումն։
Այս զի բանականն խորհի զուղիղն և զօգ-
տակարն, և արդարութիւն՝ բաժանէ ստորա-
կայ

հայիցն. և նորա կատարեն անխափան: Վասն
զի է ցասմնականն 'ի ձեռին խոնհականին՝ ոչ
զընտանի գազան. որպէս շուն: Վասն զի նոքա կըր-
կին ունին բնաւոր շարժութիւնս. զտեարսն և
զընտանիսն՝ սիրեն և շողոքորթեն. զորս և
քծնեն. իսկ օտարաց և անընդելից՝ գազա-
նային և վայրենի և պատռօղ բարս և գործ-
ածութիւնս ցուցանեն: Նոյնպէս և ցասմնականն
զօրութիւն ուղիղ ըղձականն ունի, որ բարուք
խորհելոցն 'ի բանականէն՝ արիաբար սիրելի և
բարեկամ և կատարօղ երևի: Իսկ հակառակ
և անընտանի և օտար խորհրդոցն և գոր-
ծոց՝ ընդդէմ յառնէ ցասմամբ մեծաւ և
'ի բաց վարէ, և կամ չարաչար պատռէ. ոչ
բնաւ թողլ տուեալ դժրել ինչ ընտանեացն:
Նմանապէս և ցանկականն 'ի բանականէն գո-
լով, լինի և անուանի ողջախոհութիւն և սէր՝
Արիականին վերակացութեան. անշարժ առ
ախտաւորսն լինելով ցանկութիւնս, և դիւրա-
շարժ առ ամենայն բարեաց սէր և բաղձանս: Նա-
սատարութեամբ արդարութեան՝ ուղիղ կարգաւո-
րէ զսիրոյն օրէնս. զառաջինն և զմեծն ոչ մա-
լով՝ ըստ նորին օրինադրութեան: Որպէս ասէ, սի-
րեսցես զՏէր Աստուած քո յամենայն անձնէ քումմէ,
և յամենայն զօրութենէ և 'ի մտաց քոց. և ոչ զայլ ինչ
նմին փոխանակէ յէիցս: Ըստ որում և այ-
սոցիկ տիրապէս ուղղիչն Դաւիթ ասէ. զինչ
կայ իմ բնաւ յերկինս, կամ 'ի քէն զինչ



կա

Ես խնդրեցից յերկրի՞ Ո, ուռաղեաց սիրտ իմ և մարմին իմ ով ա̅ծ սէրն. ա̅ծ սրտի իմոյ՝ բաժին իմ ա̅ծ յաւիտեան։ Որ ա̅ծ փափագման ծարաւոյ 'ի Ջուր՝ բաղձայր յանդիմանս լինել երեսացն ա̅յ. և յաւելցոյր՝ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։ Իսկ զարմանալին պօղոս յոյժ հրաշափառագոյնս զևրոյ սիրոյն ցուցանէ զօրաւորութի. քանզի ասէ՝ համարձակութբ խոռխոտացել 'ի վր ա̅մ դժնդակաց։ Ով մեկնեսցէ զիս 'ի սիրոյն քի. նեղութիւնք, թէ անձկութիւնք, թէ հալածանք, և այլն. զի վս քո ասէ մեռանիմ զօրհանապազ։ Ու զի ոչ միայն դառինքն և դժուարինքն են հակառակ ա̅յ սիրոյն, այլ ես առաւել հեշտականքն և ախորժելիք։ Յաղագս որոյ և զայնս 'ի վր բերէ և ասէ. հաստատեալ եմ՝ թէ ոչ մահ, ոչ կեանք, ոչ իշխանութիւնք, ոչ զօրութիւնք. ոչ խորութիւնք, ոչ բարձրութիւնք, ոչ հրեշտակք, ոչ հրեշտակապետք, ոչ որ կանս, ոչ հանդերձեալ արքայութին, և ոչ թէ այլ ինչ արարած լինի քան զերկին և զերկիր. և որ'իսոսս բարութիւք զոր մեք ոչ գիտեմք, կարեն մեկնել զիս 'ի սիրոյն քի։ Ու զոր ասէն՝ այսպիսի ինչ է. եթէ ով ա̅մ չարչարանօք և մահուամբք չարչարէ զիս և սպանանէ վս 'ի քէն բաժանելոյ՝ յօժարութբ զա̅մ չարչարանսն և զմահուանն յանձն առնում, քան թէ 'ի սիրոյն քի բաժանիցիմ։ Ու դիւրել ասէ. եթէ ով տայր ինձ զերկինս.



Եւ

և որ յերկնի են բարութիւնք • զերկնիր ա՟մ, և որ
յերկրի են ցանկալիք • և ոչ միայն զայս՝ այլ
թէ և այլ ինչ լինէր քան զայսոսիկ մեծ և
բաղձալիք՝ զոր մեք ոչ լուաք և ոչ տեսաք • և
այսորքիւք կամէր զիս 'ի քէն սիրոյն մեկնել,
զնո՟ն արհամարհէի և անարգէի, և իբրև
զաղբ անպիտան համարէի, և զքէն սէրն
ընտրէի ինձ սեպհականել:

Իսկ յետ այսորիկ՝ ապա երկրո՟դ մասն սիրոյն
առ մարդիկ ցուցանել • ըստ որում յօրէնսն
և յաւետարանն է կարգեալ: Վասնզի յետ
ասելոյն՝ սիրեսցես զտ՟ր ա՟ծ քո յա՟մ սրտէ
քումմէ, ապա ասէ՝ և զընկեր քո իբրև զանձն
քո • և յաւելու թէ՝ յայս երկու պատուիրա-
նս՝ ա՟մ օրէնք և մարգարէք կախեալ կան •
Իսկ սակայն՝ թէպէտ և երկու ասէ, վ՟ն զի
յա՟ծ և յընկերն բաժանէ, այլ մի է • վ՟ն զի
սէր է • Իսկ ճշմրտ ասաց աղբիւրն ա՟մ ճշմար-
տութե՟ն, թէ ա՟մ պատուիրանք 'ի սէրն բովան-
դակին • զի չէ՛ ինչ պատուիրան որ արտաքոյ
սիրոյն գտանի՝ յորժամ զսէրն ոք ուղիղ և
անարատ և առանց կեղծաւորութե՟ն ունի առ
ա՟ծ և առ մարդիկ • Ոի յորժամ զա՟ծ 'ի բո-
լոր սրտէ սիրէ ոք, զա՟մ արհամարհէ որ ինչ
խափան լինին ա՟յ սիրոյն • ա՟յ, զփառս և զմե-
ծութիւն, զպատիւս և զիշխանութիւն և զատոց
ուսմուն • զհայր և զմայր և զեղբարս և զքորս,
զկինս և զորդիս, նաև զիւր անձն, Իսկ ո-

յուամն ինքն նորին տայց․ եթէ ոք գայ առ իս
և ոչ ատեայ զհայր կամ զմայր և որ ՚ի կար-
գին, ոչ կարէ իմ աշակերտ լինիլ։ Իւ յայտ-
անօթ է, զի որք ճշմարտապէս սիրեցին զԱծ,
ոչ թէ միայն զինչս և զփառս երկրաւորս
արհամարհեցին, և զընտանիս և զորդիս ան-
տես արարին, այլ և զանձինս ևս պէս պէս և
ազգի ազգի չարչարանօք ՚ի մահ մատնեցին։
Իսկ որ առ ընկերն անկեղծ և անարատ ունի
զսէրն՝ ոչ ինչ չար խորհի նմա և ոչ առնէ․ ոչ՝
ոչ ատէ զնա և ոչ նախանձի ընդ նմա․ ոչ զրկէ
զնա, ոչ անիրաւէ, ոչ գողանայ զինչս նր։
Ոչ խորհի նմա սպանումն․ ոչ առ ատն հար-
կանէ․ ոչ նենգէ նմա․ ոչ ստէ․ ոչ մատնէ․
Թէպէտ և բազում վնասուց պարտաւոր գի-
տէ զնա․ Ոչ հպարտանայ ՚ի վր նր․ ոչ ամ-
բաստանէ․ ոչ գրգռի ընդ նմա․ ոչ արհա-
մարհէ․ ոչ թշնամանէ․ ոչ զրպարտէ․ ոչ
քսմսէ․ ոչ մախայ․ ոչ ոխս պահէ․ ոչ բամ-
բասէ․ ոչ տրտնջէ։ Ոչ ինքն առնէ նմա չար
և ոչ կամի թէ այլ ոք արասցէ․ այլ զամ որինչ
բարի է՝ կամի նմա․ և որչափ կարող է առնէ․
Կամի լինել զնա ողջ մարմնով, և առաքինի
հոգւով․ և ամի յաջողել ըստ կենցաղոյս
քերմանց։ Մարմնաւոր գթիւք փարթամ․
պատուով առաւելեալ․ իշխանութբ բարձրա-
ցեալ․ յիմացուց փառաւորեալ․ տամբ աջո-
ղեալ։ Կին՝ ըստ մտին․ որդւքն բարեկամօք

ժբ  և

և խրատե՛լք. մտօք խոնարհական․ ՚ի բանս կար-
գաւոր. մինչ զի սիրելի լինիլ կամի յամենեցունց։
Եւ եթէ աղքատ է՝ ցանկայ լինել զկարօ-
տութիւն. և եթէ տկար է՝ ՚ի բժշկութիւն փութայ.
և եթէ ներհակ ինչ ուսանիք ՚ի վեր յառնէ,
որչափ կարէ՝ ընդդիմակաց լինի. սրտմտութեան
սրտմտակից լինի, և խնդութեան խնդակից. և
ոչ երբեք է չար՝ զոր կամի նմա, և ոչ բարի՝
զոր ոչ կամի։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և
զբազմութիւն մեղացն ծածկէ սէրն. որպէս և ա-
տելութիւն զբարեացն. զի զոր օրինակ՝ զատե-
լին ՚ի բարեգործութեան տեսանել՝ թուի չար տա-
նել. այսպէս և զսիրելին ՚ի չարագործութենէ
տեսանել՝ թուի բարի առնել. Այս ամենայն ա-
ռաւել քան զայնս, և առաքելոյն թուէ զսի-
րոյ մասունս։ Տեսանե՞ս՝ ահա զի ամենայն օ-
րէնքն և մարգարէքն և աւետարանական վար-
դապետութիւն ուսուցանեն, սէրն յինքեան ու-
նի զբովանդակն։ Յիրաւի ուրեմն և քա-
ւէր աշակերտացն. այսու ծանիցեն զձեզ
ամենքն եթէ իմ աշակերտք էք, յորժամ սիրի-
ցէք զմիմեանս։ Ոչ ասաց թէ այն է իմ աշա-
կերտութեան նշան, յորժամ զհիւանդս բժշ-
կէք, կամ զկոյրս լուսաւորէք, կամ զանդա-
մալոյծս հաստատէք, կամ զդևս հանէք, կամ
զմեռեալս յարուցանէք, կամ զլերինս փոփո-
խէք, այլ յորժամ սիրէք զմիմեանս։ Վասնզի
գիտէր թէ յորժամ ճշմարիտ սիրով սիրեն



զած

զա̃ծ և զընկերն, ընդ նմին և ա̃մ պատուի-
րանք կատարին։ Արդ՝ ո̃չ վեհագոյն ցու-
ցք, յորժամ մտաւունք հոգւոյն ուղիղ զե-
րեանց կարգաւորութիւն պահեն, զի իշխանն
յիշխանութեան կայցէ, և իշխեցեալքն 'ի հնա-
զանդութեան, ա̃մ այսոքիկ բարեգործութիւնք
անսխալ կատարին, Իսկ եթէ եղծեալ ապա-
կանի վայելչական կարգն, և ծառայքն 'ի վե̃ր
տերանցն յառնեն, և զիշխանութիւն յափշտա-
կեն, և զտեարսն ծառայեցուցանեն. ո̃ր ցան-
կականն՝ ցասմնականին, և ցասմնականն՝ խո-
հականին տիրելով, ա̃մ շփոթեալ վեր 'ի վայր
կործանի. և խռովութիւնքն 'ի հակառակ ներ-
գործութիւնս շարժին։ Եւ ըստ գործոյն՝ և
անուանցն փոփոխումն լինի. Եւ այնուհե-
տև ոչ խոհականութիւն և արիութիւն և ողջախո-
հութիւն և արդարութիւն, այլ անմտութիւն և սրտմը-
տութիւն և բղջախոհութիւն և անիրաւութիւն կոչին։
Քանզի ոչ խոհականն զբարուոքն խորհի, և
ոչ ցասմնականն ընդդէմ չարին մաքառի, և
ոչ ցանկականն ողջախոհաբար՝ ո̃յ և ա̃ծայ-
նոցն ցանկայ. և ոչ արդարութիւն այսոցիկ ուղ-
ղիչ լինի՝ վերակացու և կառավար. այլ 'ի բնա-
կանէն յանբնականն շարժէ՝ չարաչար տա-
պալմամբ կործանի։ Ըստ առակողին բանի.
Թէ երիւք շարժի երկիր. յորժամ ծառայ
թագաւորէ, և աղախին եթէ հանէ զտիկին, և
անմիտն եթէ լցցի հացիւ. Քանզի ծառայ

արամտութեն՝ թագաւորեաց ՚ի վր իշխանն խո֊
հականին. և աղախին բղջախոհութեն՝ եհան
զորիկին արիութեն. և անզգամ անմտութեն՝
լցաւ հացիւ՝ նանրախոհութե։ Այսինքն սը֊
տուէ հացիւ. որով և շարժեցաւ ամ լաւն
՚ի վատթարն կոյս. զի զամ նանրութի խորհի
մոլար իշխանն այնուհետև՝ որ ծառայ եղև
ախտից։ Նաև այս է անիրաւ դատաւորն ՚ի
քաղաքի բնութեա. զոր տրն յաւետարանին
ասէ, թէ յայ ոչ երկնչէր, և ՚ի մրդկանէ ոչ
ամաչէր. զի խորհի՝ և ոչ տրամբ. դատէ՝ և
ոչ իրաւամբք։ Նաև որ բնաւորեն էր յօրէնս
ան խորհել, ընդ ամ խոկումն չարութե յա֊
ծեալ լինի. և զի թեթև և դիւրաշարժ գո֊
րով բնութի, փաղփաղակի ընդ բիւրապատիկ
գարշ և աղտեղի ցանկութիւ զանցանել խորհր
դով. ինքն զազրանայ խոկմամբ խորհրդով,
և զգայութիւն ընդ ինքեան շարժէ յախտա֊
կրութի. Նաև զի անտեսանելի գոլով բնութի՝
ոչ ՚ի մարդկանէ ամաչէ. այլ թէ և մերձա֊
կայ է բազմաց՝ շարժի ընդ չար յօժարութեն
յամ պղծութիւ. և կատարէ զգործ անիրա֊
ւութեն. թէպէտ մտօք, և ոչ մարմնով։
Այսինքն՝ է որ ունէր զատելութի յօժար֊
ախորժ կամօք ընկեց ՚ի պատուհասն. կողոպ֊
տեաց յընչիցն. զրկեաց ՚ի փառացն. կործա֊
նեաց յիշխանութեն. յարգելս եդ անելանե֊
լի. պնդեաց ՚ի կոձեղս. տարաշխարհիկ արր.
և

և զկարևորսն էհաս անդամնն. և ոչ այսու-
շատացաւ, այլև չարաչար և դառն մահու-
մամնեցն։ Իսկ այս է ասելն որդւոյն որոտմանն,
եթէ Տէր որ առէ զեղբայր իւր՝ մարդասպան
է. զի թէպէտ և մարմնով ոչ, այլ կամօքն և
յօժարութեն սպան։ Իսկ այս է կէս սպա-
նումն. զի մրդ՝ հոգի է և մարմին. և հոգին
է մեծ քան զմարմինն. և նա հոգւոյն սպան.
զի ոչ մարմինն արդեամբք սպանանէ. այլ
և հոգին՝ կամօքն և յօժարութեն։ Իսկ եթէ
ախտաւոր ցանկութե հարեալ է ՚ի սէր ուրուք.
անարգելաբար երթեալ շնացէ ընդ նմա.
թէպէտ և ՚ի մէջ բազմաց է տուփեալն և ան-
ձեռնարկելի նմա ըստ մարմնոյ, Ասէ զի ոչ
Բաց արգելու զնա. ոչ հեռաւորութի տեղւոյ,
ոչ թշուառութի ճանապարհի, ոչ լեառն բարձ-
ցեալ, ոչ դաշտ տօթագին, ոչ ծով լայնածա-
ւալ, ոչ քաղաք պարսպեալ, ոչ դղեակ ամրա-
ցոյն, ոչ աշտարակ անպարտելի, ոչ աղխեալ
դրունք, ոչ երկիւղ պահապանաց, այլ զամե-
նեքումբք քայլեալ՝ աներկիւղ համարձակու-
թբ առ տուփելին հասանէ և զգարշ ցանկու-
թին կատարէ։ Իսկ այս է ասելն տն, թէ Տէր
որ հայի ՚ի կին ցանկութբ, անդէն և փնդ շընա-
ցաւ ընդ նա ՚ի սրտին. ըստ՝ յոգւոյն։ Նոյն-
պէս և թէ կին առն ցանկայ, նովին օրինա-
կաւ շնացաւ. զի Տէր ասացեալն՝ ոչ ՚ի վր առն
է, նոյն և կնոջ. և ոչ վն սպանութե ասացաք.



Նմա

Նմանապէս և վն այսորիկ՝ զի կէս շնուն է, զի
Թէպէտ ոչ մարմնով կատարեաց զշնուին, այլ
հոգւով: Կուսնակ սոցին իմա և սու ամ մեղս
դիւրաշարժ գոլ զմտաւորական շարժմուն
ալն և դիւրակատար. և զի վն անտես գո_
լոյն 'ի մարդկանէ ոչ ամաչէ, այսպէս և վն
հեշտախտուն և յիմարելոյն ցանկուբ՝ յոյ
ոչ երկնչի. Նաւ ամ մեղաց պատճառ՝ խոհակա
նին մոլորութին և անընտրող յիմարութին լինի.
և յորժամ նա որ իշխանն էր 'ի վր այլոցն և
տուղէն, սյսպս ծառայն ախտիւք կաշկան_
դիւայլքն մտին մոլար ընտրողութեն հետևեն.

Զի ամ ինչ եթէ բարի և եթէ չար, նախ
խորհի և ապա գործի:

Իսկ ցասմնականն զօրութի յեղափոխեալ և
այլ փոխանակ այլոյ եղեալ, վն զի որ երբեմն
քաջանայր ընդդէմ օտարացն, ըս բանսարկ_
ուին և նորին չար արկածիցն, այժմ զնի ը
դէմ ընտանեացն. այս է ամ բարեգործութե.
Նաւ մանաւանդ 'ի համազգին և յեղբարին
դարձուցել զսրտմտուին՝ գազանաբար յար_
ձակի, Վասնզի սրտմտուի նշ ըստ նմանութ
օձին ըս՝ սատանայի. խժի և քարբի՝ դիւաց
նոցին. զի լցեալ են զականջս իւրեանց ընդ
դէմ ճարտար Թովչաց՝ միտրեից և առաքե_
լոց և վարդապետաց եկեղեցւոյ. և ոչ կամին
առնուլ յիմաստուն բժշկաց զդեղ ապաշ
խարութե և առողջանալ յախտէն: Նաւ ոչ


կա

կարէ այնպիսին և ոչ դոյզն ինչ Թշնամանաց
համբերել. այլ եթէ դէպ լինի յումեքէ ինչ
կարծիս հակառակութ̃ առնուլ, կամ արհա
մարհութ̃ և դսրովանաց, վաղվաղակի բար_
կութ̃ մեծաւ ընդդէմ յառնէ. աղաղակէ
Թշնամանէ նախատէ հայհոյէ անարգէ՝ որ̃պ
զխելայեղ ոչ գիտէ զինչ խօսի։ Զա̃մ որ
ինչ մոլար միտքն ծնանի եպերանաց բան՝ իբ_
րև կորիւնս գազանաց արիւնարբուս՝ ի գա_
ւագթ̃ սրտին լեզուաւն յառաջ բերէ. մինչ
զի՝ ի յանդուգն յարձակմանէն, և զԹշնամն
ու̃ բանին արտաքս ժայթքէ։ Այլ զձեռսն
և զոտսն անհանձարաբար՝ ի հարուածս շար_
ժէ. և յոլով անգամ եթէ դէպ լինի և՝ ի
սպանութիւն ձեռնամխի. զդիւահարացն ա̃մբէ
բերէ զնմանութի̃. մանաւանդ՝ եթէ չարքան
զդիւահարին. որքան նորա ակամայ, և սք̃
կամօք ջերանին յախտան։ Իսկ ե̃ որս Թշնա_
մութ̃ն բերին՝ առեն մինչև իսպառ. ոխս
պահէն անլուծանելիս. մախան, բամբասեն.
դարանակալ լինին նենգութ̃. որոգայթս
կազմեն բանիւք և արդեամբք՝ ընկենուլ՝ ի
փո̃ց՝ ի պատուոյ յիշխանութ̃ և՝ ի փարթամու_
թ̃ ընդ որոց մախան։ Իսկ ոչ ինչ է նշ̃ ըղձա
լի, քան եթէ զնախանձելին՝ ի Թշուառութ̃
տեսանել. և ոչ ինչ դժնդակ՝ քան եթէ ըստ
որումև իցէ բարեկրեալ տեսանել։ Ա՛յն
քան ինքեանց Թշուառութ̃քն տխրին, ոչ քան



նշ̃

Նշանաւոր բարեկրութիւնքն · զամենայն որքան հնար է՝ շար-ժեն ընդ նոսա ՚ի թշնամութի · և կամին զի յամենեցունց ատեցեալք լիցին ։ Ր՛. յորքան և ես ըստ զոյնս են ատելութիւնք և մախանք անկարգաւորաբար սրտմտելոցն ։

Իսկ ցանկականն որ այլայլեցաւ ՚ի գեղեցիկ ողջախոհութենէն, և ՚ի սիրոյն որ առ Աստուած և առ ընկերս, իբրև ողանդամաչեալ շրջի յամենայն նիւ-թականս բաղձանս ։ Զի ՚ի բնաւորն և յող-ջախոհ սիրոյն անկեալ՝ բերեալ լինի գարշ-ցանկութիւնք ընդ վավաշոտ տռփանս · և ոչ սոսկ ցանկութի, այլ և լրմամբ կորստական գոր-ծոյն · ոչ ՚ի բնականսն յատուկ, այլև յանբնա-կանսն ։ Ըստ այնմ զոր առաքեալն ասէ · Թո-ղեալ զբնականն պէտս իգուն՝ բորբոքեցան ցանկութեամբ իւրեանց ՚ի միմեանս · արուք ընդ ա-րուս զխառնակութիւն գործէին · և զվարձ փոխարէնն՝ որպէս պարտ էր մոլորութեան նոցա, յան-ձինս իւրեանց ընդունէին · վասն որոյ, զկիզումն հրոյն և ծծմբոյն երկնատեղաց՝ նորօրէն անձրե-ւեալ հրածին ամպովք՝ ըստ նորագիւտ հրոյ ցանկութեանն · զօրէն բերեալ յաւիտենական և մշտավառ բոցոյն ։ Եւ ոչ զարմանացն միայն ամբաստանէ, այլև էգքն ասէ փոխանակեցին զպէտս բնականս ՚ի պէտս անբնականս ։ Սոդոմ ասել, և որքան զայսոսիկ է դժըն-դակ և անբնական և առաւել արտաքոյ բնութեան · որ յանասնայինսն և ՚ի գազանայինսն խոտորին

զաղըագործութիւնս · զոր և նիզեանք իսկ անա֊
տունքն և գազանք՝ թէպէտ և անկատ և ար֊
ձակ գոլով բնութիւք (զի և ոչ ընդ օրինաց են
սահմանադրութ, և ոչ սաստ պատուհասի
և կամ տանջանաց է ՚ի վր նց · այլ բնական
օրինացն՝ որ է սահմանին եդաւ ՚ի բնու֊
թիւն հետևելով) ոչ երբէք արտաքոյ ընտա֊
նի ազգակցացն ելանեն՝ իւրաքանչիւր ազգք
կենդանեաց ՚ի խառնական իւրեանց։ Ո ի ոչ
ձի յարջառ, և կամ արջառ յոչխար և կամ
այլ յայլ օտարացեալ ազգս, այլ իւրաքանչ֊
իւր ազգ կենդանեաց՝ առ իւրեանց ցեղսն
դառնան · և զայն ոչ անչափութբ, այլ ըստ
սահմանեալ ժամանակի՝ միայն ծննդագոր֊
ծութբ սովորութեամբ արարչագիր հրամանին
որ ասաց · աճեցէք և բազմացարուք և լցէք
զերկիր։ Եւ այն զի ոչ բան ունին և իմա֊
ստութ՝ եթէ խորհրդեամբ և ընտրութ ՚ի վատ֊
թարացն խոտորեցին · այլ միայն բնական օ֊
րինացն հետևելով։ Իսկ մարդիկ բանիւ և
իմաստութբ պատուեալ, և զբնական և զգրա֊
կան օրէնս ընկալեալ, որ մի ինչ յայսցանէ
բաւական էր զնս ՚ի չափ սահմանի արդարա֊
գործութն պահել, զամենեքումբք զանց ա֊
րարեալ՝ զ զգաստս և զանասունս անմտա֊
գոյնք և զաղըագործք գտանին։ Եւ զայլ
գործ և զաղտեղագոյնս լսեմ որ յայնպիսի
անհանճարից գործի · զոր և գրեմ և ընդ


լսե

յիշելիս է անցնել. այլ ոչ կամիմ զազրացուցա-
նել զբանս. զի մի՛ դուցէ ողջախոհ ոք լսե-
լով տաղտկասցի. մանաւանդ թէ գիտողացն
թողում. քանզի այժմ յայտնի է քաջա-
հմուտք են ամենքն:

Արդ՝ այսպէս մոլորեալքս 'ի ճշմարիտ ցան-
կութենէն եւ 'ի սիրոյն որ առ Ա՟ծ եւ յԱ՟ծայինսն
ամ՟, ընդ բոլոր ապականացու եւ ցնդելի նիւ-
թականացս՝ իբր տոռամբ կապեն 'ի սէր եւ 'ի
բաղձանս. փոխանակեալք զճշմարիտ կենացն
սէր ընդ սնոտեացս. եւ զանապականին ընդ
ապականացուս. եւ զանայլայլելոյն ընդ փո-
փոխելեացս. եւ զերկնաւորին ընդ երկրաւո-
րացս: Վասնզի քաղցրանայ նմին անցաւո-
րացս մեծութիւն. փառք պատիւ իշխանութիւն
փարթամութիւն որովայնամոլութիւն արբեցութիւն
զեխանք ագահութիւն անիրաւութիւն յափշտակութիւն
եւ այլ ամ՟ սնոտեացս բաղձանք:

Իսկ եւ արդարութիւն յեղու յանիրաւութիւն.
եւ որ երբեմն 'ի լաւագոյնսն առաջնորդէր
եւ կարգաւորէր զընդ ինքեամբ մասունսն,
այժմ ներհակին լինի անօրէն եւ առաջնորդ:
Այսքան եւ այսպէս անկարգութիւն բարեաց եւ
կարգաւորութիւն չարեաց անձնական մասանցն՝
'ի բնականացն խոտորմանց եւ յանբնականացն
հետեւմանց լինին: Այս բազում զգուշութեան
եւ արթնութեան պէտք է հսկել ամ՟ ուժեք. զի
զբանական իւր հոգին (որ է պատկեր Այ) իւ-



րա

բական առաքինութիւնք զարդարեցէ․ որով յառաջինն փայլեսցէ լուսատիպ կերպարան․ և զնախատիպն հրաշազարդապէս յինքեան գաղափարեսցէ նմանութ՟ն․ Որով լիցի տաճար և բնակարան անվայրափոխ էութ՟ն ըստ ասելոյն․ ես և հայր առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք։

Արդ՝ մինչ այսպէս գեղեցկայարմար պատկանաւորութ՟ ուղղեցաք զաստուածայնական առաքինութիւնս, պարտ է նմին հետևեցուցանել և զմարմնական բարեգործութիւնս․ Որպէս զի ըստ առաքելոյն, լիցի մարդն ամ՟ կատարեալ ամ՟ և ոչ իւիք նուազեալ․ զի որպէս անձինն՝ մասամբքն զարդարի, այսպէս և մարմինն՝ զգայութեքն պայծառանայ։

Եւ են զգայութիւնք՝ հինգ․ որ են այսոքիկ․ Տեսանելիք․ Լսելիք․ Հոտոտելիք․ Ճաշակելիք․ և Շօշափելիք։ Եւ պարտ է նախ յայտնել թէ զինչ զգայութիւն իցէ, և ապա զնոյն ընտանի ներգործութեքն զարդարել։ Զգայութի ասի այն՝ որ ա՟ իւր ներգործութեամբն զինչ և իցէ՝ արտաքուստ ընդունելով զկիրսն՝ զգայ և ճանաչէ։ Որպէս ակն՝ զծագումն լուսոյ ընդունելով, զգայ և ճանաչէ և լուսաւորի․ և նովաւ զամ՟ զոր տեսանէ՝ զգայ և ճանաչէ թէ զինչ է։ Եւ ունկն՝ զձայնս ձայնից ընդունելով, զգայ թէ յումմէ է բացագանչումն․ Եւ հոտոտելիք՝ զաղմունս

զանազան հոտոց առնլով զգայ և խմանայ և բացատրոհէ զնա ՚ի միմեանց ։ Եւ ճաշակելեօք՝ զպէս պէս կերակրոցն և ըմպելեացն համադամ քաղցրունցն և դառնոցն՝ պարարտացն և կծուագունիցն յինքն ընկալեալ, զգայ խուրաքանչիւր համադամացն զազդողութիւն ։ Եւ շօշափելեօք զարգի ազգի նիւթոցն զանազանութիւն շօշափելովն, զգայ և ընտրէ ՚ի միմեանց զխոշորութիւնն և զողորկն՝ զընդդիմաւորսն և զփափկութիւնն ։ Այդ՝ մի այսորիկ զգայութիւնք տանն ։ Նայց են սոքա ոմ զդրունս ՚ի տան մարմնոյս՝ մտից արտաքուստ, և ելից ՚ի ներքուստ ամի ․ որ է լաւ և կամ վատթար ․ ըստ մարդարէին որ ասէ ․ ընդ պատուհանս եմուտ մահ ։ Եւ զոր օրինակ՝ ընդ դրունս ածեմք ՚ի տուն զամ գոյս պատուականս և պիտանիս ․ և ընդ նոյն դարձեալ եթէ ինչ անպիտան է ՚ի տանն՝ արտաքս հանեմք ։ Նյնպս և զամ հոգևորական փարթամութիւն՝ որովք անկարօտ ճոխանայ անձն բանական ընդ համազգեաց հոգեղինացն՝ ընկալցուք ՚ի ներքս ՚ի մեզ ընդ զգայարանացս դրունս ընդ իւրաքանչիւր ներգործութե ։ Եւ զապաւեալ երկրաւոր ցանկութեց և սատբային սիրոյ՝ (որ է որոմնացան թշնամւոյն սերմանք) իբրև զմնասակարս և մահացուս ընդ նոյն դարձեալ արտաքս հանցուք ։

Եւ զոր օրինակ՝ ոչ միշտ փակեալ պահեմք

զդրունս տանց. զի թէ յարատևակեալ կաց-
ցեմք՝ զօգտակարսն ոչ հաւաքեմք փարթա-
մութիւս. նաև մեզ անպիտան լինին առ՚ի բնա-
կութի: Իսկ ոչ հանապազ բացել. զի և այնպէս
թշնամեաց և դժրողաց գողոց և աւազակաց
մուտ լինելով՝ ՚ի կորուստ անձանց եւ յափշ-
տակութիւն ընչից բերեմք. այլ ՚ի դէպ ժամա-
նակի ըստ պատշաճին բանամք և փակեմք.
իմաստնոյն հաւանել խրատու. որ ամի ժամ
և ժամանակ սահմանէ՝ որ ընդ երկնաւ:
Այսպէս և զզգայութեանց մերոց դրունս ոչ հա-
նապազ պարտ է փակել. զի և յինչ պէտս
եղաւ ՚ի բնութիւն՝ եթէ միշտ փակեալ կայցէ,
զի ական գործ՝ է տեսանելն. և ունկան՝ լսել.
Նմանապէս և այլոցն՝ ըստ իւրեանց սահմանի.
Իսկ սոքա անպիտանք են՝ եթէ զբնաւորսն
ոչ ներգործեն. այլ ՚ի պատշաճ ժամանակի
պարտ է բանալ ՚ի լաւագունիցն հաւաքու-
մըն. և յայլում ժամու փակել ՚ի մոլիցն
վնասակարաց:
Իսկ զոր ասեմս՝ այսպիսի ինչ է: Պարտ է խը-
նուլ զականն ՚ի յարատ հայեցուածոց և ոչ
զննել բղջախոհ ցանկութ և վաւաշոտ տար-
փանօք զդեղ իգի և կամ արուի. վն զի ոչ
՚ի կործանիչ աղեղնաւորէ առնու զնետս
հարուածոց կարեվէր խոցման յոգեկողմն
կոյս. որով զանմահն մահ մեռանի: Այլ զի
տխրտաւոր հայեցմամբն կերպարանէ զգործ,


պղծ.

պղծութեն. և անդէն շնայ ը՟ նմա։ Ըստ տ՟ն հրամանի որ ասէ. որ հայի 'ի կին ցանկութ՟, իսկոյն շնացաւ ընդ նա 'ի սրտին. և տմ՟շուն և պոռնիկ ըստ առաքելոյ՝ ոչ ունի մասն և ժառանգութի յարքայութեն ա՟յ։ Խողումասել և զարտաքոյ բնութե պղծութիւն անասնայսն և գազանայսն՝ ոչ անարժանս յիշատակի։

Փակել արժան է դարձել զակն ընդդէմ չարակնութե որ առ ընկերս. յորժամ տեսանէ զոք բարեկրել ըստ կենցաղոյս ինչ յաջողութեց, տան և որդւոց և ստացուածոց, իշխանութե, պատուոյ, փառաց, բարեհամբաւ անուան, սիրոյ և ընդունելութե ամենն։ Զոր իբրև տեսանէ չարակնն, ոչ սայրասուր սրով հարկանի. նախանձի՝ մախայ և լաւ համարի ինքեան՝ մեծամեծ և դժնդակ տոյժս կրել, քան եթէ զնա այնպէս փառաւորութ՟ տեսանել. յորովք և մահուդաւ գործեն ընդ որս չարակնութ՟ն հային։ Եւ ապացոյց այսորիկ՝ բազումս ունիմք 'ի գրոց։

Եւ մանաւանդ թէ սկիզբն մեղաց և մահու՝ յայսմանէ եմուտ յա՟շ։ Զի չարակն բանսարկուն ոչ կարացեալ տանել զառատութի՟ գերունակ փառաց նախաստեղծին, մատեաւ առ նա հրապուրանօք խաբէութե, և զմահու ձօնեաց նմա ճաշակ։ Եւ կայենի



մաք

մարդասպանութիւն ոչ այլ ինչ էր, այլ զի ոչ
կարաց հայել ընդ հաճելն Տն պատարագամն
հաբելի։ Իսկ եղբարքն յովսեփու՝ և զանիրաւ
ցին յուշացեալ բաղձալի տեսութի, կամեցան
սպանանել զնա. և ապա այլասեռիցն վաճա
ռեալ, որպէս և զոյլն (որդեկք Նոյ) ՚ի չարչարանս
և ՚ի մահ։ Նաև բազմահնար մեքենայքն սա
տանայ առ ՚ի սպանանել զդաւիթ. ուստի՞
այլ՝ քան թէ սիրեցեալ և պատուեալ զնա
տեսանէր յաչս ժողովրդեանն. և լսէր ՚ի
պարաւորացն, եթէ էհար դաւիթ զբիւրս։
Իսկ փարիսեցւոցն և դպրացն խաչ կանգնել՝
և զաստուածորդն փրկութ՝ որ վնս էր եկեալ
բարձրացուցանել և փառաւորել՝ զփայտէ
կախել։ Ոչ ինչ այլ՝ քան թէ բիւրապատիկ
սքանչելեաց և լուսաւոր վարդապետութե
կենարարին և փառաց և պատուոյ նր որ ՚ի
ժողովրդոցն՝ ոչ կարացեալ տանել. զի թէպէտ
և նա յայն սակս էր եկեալ զի մեռցի, և մահ
ուամբ իւրով զմահու բարձցէ զդատապար
տութի ազգի մարդկան. այլ նոքա ՚ի նախան
ձուէն՝ չարակնութե հեղձեալ խաչեցին զնա։
Արդ՝ այսպիսեաց ամի չարակնութեց ըդէմ
պարտ է փակել զակն, զի մի զկուրացուցիչ
և զմահացուցիչ հոգւոց տեսութի ՚ի ներքս
ընկալցի։

Իսկ ընդդէմ լաւացն և օգտակարացն բա
նալ յօժարութե. և զլիծ ամմաղոից (որ


խա

Խափան գեղեցկագործ տեսութեն (լինի) մեզ-
րել․ զի յատակ հայեցուածովք կարասցէ
հայել և տեսանել զսքանչելի գործս այ։
Որովք և յարարչին գիտութի վայելչապէս
հասանիցի ըստ առաքելոյն։ Աներևոյթք այ
՚ի սկզբանէ աշխի՝ արարածովքս իմացեալ
տեսանին․ այսինքն մշտնջենաւորութի և զօրու-
թի և այծութի նր։ Իսկ դաւիթ ասէ․ երկինք
պատմեն զփառս այ․ որև մեծափառագ տեն-
չանօք մաղթէր զլուսաւորութի աչացն՝ յայն-
այի հայել ՚ի սքանչելիս․ զարթո՛ աղէ զաչս իմ
և նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց․ և թէ՝
լո՛յս տուր տր աչաց իմոց, զի մի՛ ննջեցից ըղ
մահուն քուն․ և՝ դարձո՛ զաչս իմ ՚ի նանրու-
թէ։ Յետ որոյ համարձակութբ և պարծա-
նօք ասէր․ աչք իմ յամ ժամ առ տր են․ և՝
յառաջագոյն տեսանէի զտր առաջի իմ յամ
ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ զի մի՛ սասանե-
ցայց․ այսինքն՝ զի մտաց աչօք հանապազ զած
ինձ մերձակայ, և ընդ աջմէ իմմէ կացեալ
տեսանէի․ և ՚ի նր տեսութենն երկուցեալ և
պատկառել ոչ սասանէի ՚ի մեղաց։ Նա ոչ
միայն դաւթի, այլև ամ ումեք այսպս պա-
տահէ․ զի յորժամ զած ինքեան մերձակայ
և տեսօղ հաւատայ, զի արդ կարէ մեղան-
չել։ Ըստ որում որդին որոտման ասէ․ ամ
որ յած է հաստատեալ՝ ոչ մեղանչէ։ Զի
թէ յորժամ մարդ ոք՝ ուրուք մերձակայ

լինելով և տեսող, ոչ առնէ չար ինչ. այսինքն ոչ շնայ, ոչ գողանայ, ոչ սպանանէ, և ոչ այլ ինչ 'ի նմանեացն գործէ. որչափ ևս առաւել յորժամ զարարիչն ամ̃ի և զդատաւորն և զվրէժխնդիրն և զհատուցանօղն ըստ գործոց՝ ինքեան մերձակայ և տեսող հաւատայ, յամ̃ մեղաց և չար գործոց լռէ. Եւ զայս գիտելով Դաւիթ ասէ. աչք իմ յամ̃ ժամ առ տր̃ են. Եւ ինքն ած̃ ասէր մովսէսին. ած̃ մերձաւոր եմ ես և ոչ հեռաւոր: Որդ և նախանձաւորն հեղինակ՝ միշտ առաջի զինքն համարէր. Եւ ոչ զմարմնոյ միայն տեսանէ զգործսն, այլ և զմտացն շարժմունսն ըստ դաւթայ. որ քննես զսիրտս և զերիկամունս ած̃. և յայլուր, թէ ոչ ոք մարդ տեսանէ՝ տեսանէ ած̃. զի մարդ հայի յերեսս, և ած̃ 'ի սիրտս: Եւ ոչ զարտաքին խորհուրդն միայն տեսանէ, այլ և զայն որ տակաւին ոչ խորհեալ է և ոչ գործեալ. ըս̃, զանգործս իմ տեսին աչք քո: Եւ ոչ թէ միայն տեսանէ զանգործսն, այլև գրել պահէ. ըստ որում ասէ՝ և 'ի գիրս քո ամ̃ն գրեցան: Արդ՝ զայնպիսի տեսող պարտ է ամ̃ ուրեք ինքեան մերձաւոր համարել, և յայնժամ ոչ մեղանչէ:

Վարձեալ պարտ է բանալ զակն 'ի տեսութ̃ արարածոցս, և տեսանել զաքանչելի գործսն ած̃յ. և 'ի տեսանելն մարմնոյ աչօք՝ ընդ նմին և բանալ զմտացն աչս. և իմաստութ̃ տեսանել

զզարմանագործութիւն արարածոց։ Ի սատորում և դաւիթ տեսեալ ասէր․ տեսից զերկինս զգործս մատանց քոց՝ զլուսին և զաստեղս զորս դու հաստատեցեր։ Ա,յինքն՝ հայել յերկնի բարձրութի և յընդարձակութի․ ՚ի լուսաւորացդ պայծառութի, և՚ի գեղեցիկ կարգաւորութի։ Նա որ յետ այսորիկ, յամենայն՝ յանձրևս՚ ի հողմս՚ ի ձիւնս՚ ի սառն՝ ՚ի կարկուտ՝ յերկիր՝ ՚ի բոյս՝ ՚ի տունկս՝ ՚ի մարդոյս գեղեցկակազմութի․ յանասունս՝ ՚ի գազանս՝ ՚ի թռչունս՝ ՚ի ծովս՝ յաղբիւրս ՚ի գետս․ և զի՞ ևս մի ըստ միոջէ ասացից, և յայլ ամ եղելութիւնս։ Նա յայսմանէ նախ ճանաչել զմեծութի և զիմաստութի և զանչափ զօրութիւն այ և զբարերարութի․ թէ զայս ամ ձն մեր է արարեալ։ Նա որքան զայս է հրաշափառագոյն․ եթէ զհամրդ նախախնամող զօրութե՛ն կառավարէ զամ և ունի յանլոյծ հաստատութե․ զի այս անբաւ ծանրութե մարմնոյ Տիս՝ երկրի և ծովու ոչ գոյ հիմն և ոչ հաստատութի և ոչ սիւնք․ այլ ամ ՚ի վր ոչնչի է հաստատեալ․ մանաւանդ թէ ՚ի վր հրամանին այ․ ըստ առաքելոյ թէ՝ կրէ զամ բանիւ զօրութե իւրոյ։

Արդ՝ յայս ամ և՚ի սոյնպիսիս պարտ է զակն բանալ և տեսանել, և ճանաչել զանհաս մեծութիւն այ և զիմաստութի և զզօրութի։ Քանզի երկինք և երկիր և որ ՚ի սոսա լինելութիք՝ ոչ

 թէ

Թէ գրով և բանիւ պատմեն զանբաւութի
այս Բատ այնմ, երկինք պատմեն զփառս այ
Եւ'ի տեսանելն զայսչափ անպատմելի արար
չութի, շարժել յանուհետև զմիտս և զլեզու
'ի փառաբանութի այ. և յամեղելոցս փառա-
ւորել զարարիչն: Բանզի յայսոսիկ հայե-
ցեալ անմիտքն՝ զամ ալարածս յօրէնութի
այ կոչէին աստելով. ամ գործք տն զոր օրհնե-
ցէք. Եւ'ի կարգ ամենայն զերկին և որ յերկի
նի, զօդ և որ'ի նմա, երկիր և որ'ի սմա՝ աստէին
օրհնել զած: Եւ ոչ եթէ զի նոքա օրհնեն
զած, վա զի անբանք են և անիմաստք. այլ
մարդիկ մտաւորք և բանաւորք՝ տեսանելով
զոր'ի նա սքանչելագործութիւնս՝ փառաւորեն
զարարիչն: Եւ ոչ միայն յայսպիսի հրաշա-
զան և զարմանագործ տեսութէ իմաստաբար
հայեցողքն զած փառաւորեն, այլ և յայնց
տեսութեց որ յոլովից թուի թէ պատճառք
չարի են. զի որ ընդ մարմնոյ ական՝ և դժո-
գոյն աչս բաց ունին, յայնցանէ՝ յորոց կու-
րացեալքն հոգւով իմասին, նոքա մեծամեծս
շահին: Բատ նմանութե բժշկաց. որ բազում
անգամ'ի իմաստակարացն՝ զօգտակար դեղն
առնուն. ուստի յօձից՝ առնուն զլուծիչս թու-
նից նդ. և յայլ մահացու դեղոց՝ զպատակ-
չական զօրութիս:

Եւ եթէ ախորժէք, յեղելոցն'ի գրելոց իրաց
սառուգեցից զասացեալս: Բանզի պոռնիկ
ամե

ամենայն հաչակելի գեղեցկութիւն յԱնտիոք քաղա-
քի. անուն Պեղագիա. որ ոչ միայն ՚ի քաղա-
քին, այլ յամենայն մերձակայ՝ տարածեալ
էր համբաւ գեղոյ նորա. որ և յամենայն կողմանց
վավաշոտ երիտասարդք գային առ նա։ Նա
յաւուր միում եկեալ ՚ի բաղանեաց՝ և զգե-
ցեալ բեհեզս և ծիրանիս՝ և զարդարեալ ոս-
կեով և մարգարտով և քարամբ պատուակա-
նօք զգլուխն և զլանջսն և զպարանոց, և
գրեթէ զամենայն մասունս մարմնոյն. և սեւութեամբ
աչացն, և ՚ի սպիտակէ և ՚ի կարմրոյ զայտսն.
և օծեալ անուշահոտ իւղով՝ գայր անցանէր
ընդ կերպարանօք է մէջ քաղաքին՝ ՚ի բազ-
մաց յայնոսիկ հեշտացելոց սպասաւորեալ։
Իսկ եպիսկոպոս ումն Նոնոս անուն՝ ծառայ եկեղե-
ցականօքն համբերձ ՚ի սրահ եկեղեցւոյն՝ է
որ անցանէր պոռնիկն. յորմէ բազումք՝ յող-
ջախոհ ժառանգաւորացն դարձուցանէին
զդեմս՝ ՚ի տեսութենէն. Իսկ սուրբ եպիսկոպոսն՝ յար պշու-
ցեալ հայէր ընդ նա. մինչ զի և բազումք ՚ի
տեսողացն ՚ի միտս իւրեանց բամբասէին զնա՝
եթէ ընդ երկար նայի ընդ գեղ պոռնկին։
Իսկ նա յանկարծակի է արտասուս ցնդել
լայր դառնապէս. Իսկ մերձակայքն որք բամ-
բասէին զհայեցուածս նորա՝ մատուցեալ հար-
ցանէին թէ զինչ էր պշնուլն է գեղ պոռ-
նըկին և զինչ ողբումն։ Իսկ նա տակաւին
արտասուելով պատասխանէր. վայ ինձ որ-


դեակք՝

գեակք՝ վա՜ զի տեսի զկինն զայն՝ զի ամ հնա-
րիւք պէսպէս և զանազան զարդուք զար-
դարեալ էր զինքն՝ որչափ և էր կարողութի.
և այն վա՜ մոլեկան և մեղաւոր երիտասար-
դացն՝ զի նմա հաճոյ երևեսցի, և զախտաւոր
ցանկութիւն նմա շարժեսցէ ՚ի տռփումն իւրեանց.
Իսկ ես՝ երկնաւոր փեսային իմ հաճոյացեալ.
որ վա՜ անճառ սիրոյն իւրոյ որ յիս՝ յանբաւ
բարձրութենէ գերակայ փառացն խոնարհեցաւ
յիմ գարշութիւնս, և խաչեալ և արեամբ գնեաց
՚ի ծառայութենէ մեղաց. և սրբարար աւազա-
նաւն լուաց. և հոգւոյն շնորհօք զարդա-
րեաց. և զգեղեցկացուցիչ պատուիրանս իւր
ետ և ուսոյց, եթէ զիարդ նովօք օրըստօրէ
զարդարեսցես զամ մասունս հոգւոյ և մարմնոյ
իմոյ, որով անճառելի սիրով նա յիս բնակես-
ցի և ես ՚ի նմա։ Իսկ ես ըստ առակողին՝ ՚ի
փսխածն անդրէն դարձայ, և ընդ տիղմն
թաւալեցայ՝ յորմէ լուացայ. և զշնորհին
զարդարանս որ ՚ի նմանէ առի՝ մեղօք աղտե-
ղացուցի. և ոչ փութացայ վերստին ապաշ-
խարութեան ջրով լուանալ զանձն իմ. և պատ-
ուիրանին պահպանութեամբ զարդարել՝ զի հա-
ճոյ գտայց երկնաւոր փեսային. որ սիրեաց
զիս՝ և զանձն իւր ՚ի մահ մատնեաց վա՜ իմ.
և կա՛, զի ես ոչ այնքան ցանկամ հաճոյանալ
նմա՝ որքան նա աշխարհի և կամացն սատանայի.
Իբրև լուեալ զայս զարմացան ընդ արթնութի
մբ

մտաց նր̃ և ընդ անախտութե̃ հոգւոյն և փա-
ռաւորեցին զնա․ Տեսանես ահա զի փոյթքն
և արթունքն, և 'ի մտատկարացն չահին.
բայց ծոյլքն և մեղկքն՝ բազում անգամ
մնասին և յօգտակարացն.

Որդ՝ առաջին դուռն զգայարանացս բարւոք
փակեցաւ և բացաւ. Ապա պարտ է և զերկ-
րորդն ըստ նմին օրինակի փակել ընդ դէմ
մահմահացու և կորստական բանից. Ո՜հ ո՛չ
ական տեսութե̃ խոտորի առ չարութի՛ն, և ընդ
քնքեան շարժէ զբոլոր մարմինն 'ի գործակ-
ցութի. Լսելիս և Ականջն լսելութե̃ն տպակա-
նի. և զապականագործ լուրն 'ի ներքս ըն-
դունելով՝ 'ի շտեմարանս սրտին ամբարէ իբ-
րև զկայծակն ընդ յարդի՝ թաքուցեալ.
որ 'ի դիպօղ ժամանակի՝ 'ի շնչմանէ իրիք
արծարծեալ՝ զհրգողական բոցն բորբոքէ.
Եւ է սա սկզբնաւորութիւն մեղաց. զի և նախ
քան զամ՝ բանսարկուն օձին մատուցեալ
յունկն նախամօրն եհեղ զթոյնս դառնութե.
որով ինքն մեռաւ և եղև պատճառ մահու
ծննդոց իւրոց. Որդ՝ առաջին մուտ ախ-
տաւոր լսելութե̃ է այս. Յորժամ տռփողքն
իւրեանց՝ այր և կին՝ լսեն 'ի միմեանց բանս
կակղութե և թուլութե. որ իբրև զսուր
երկսայրի յոգւոյն հարկանի՝ և գերի ա-
ռեալ տանի տռփամբք ցանկութե̃ն 'ի կատա-
րումն մեղաց.

Այսն բարի և չար միջնորդացն բան՝ որ 'ի մէջ երկուցն տանի և բերէ զկորստական պատգամսն. որք օձն 'ի մէջ և այր և բանսարկուին. Նա այս առաւել աններելի է քան զշնութիւն. զի թէպէտ դժնդակ և չար յանցանք է շնութիւն, զի յարքայութենն արտաքս հանէ և գեհենին ժառանգ առնէ, այլ սակայն բանսարկուացն պատճառ և հարկեցուցիչ 'ի մեղս՝ ունի զցանկութիւն մարմնոյն՝ և զթելադրութիւն սատանայի, և զբորբոքումն ախտաշարժութեան. Իսկ անօրէն միջնորդն որով պատճառաւ յայս մեղս կործանի՞ ոչ և մի ինչ հարկ և կամ բռնութիւն 'ի բնութենէն ունելով. զի կրկին ըստ չափու երկուցն յանցանաց՝ որոց պատճառ եղև մեղաց՝ նաև առաւելագոյն տացէ զվրէժ յաւուրն դատաստանի 'ի կեզոյական հուր գեհենին. Դարձեալ 'ի ձեռն ունկան է և լսողութիւն ամենչար խորհրդակցութեան և գործոյ անօրէնութեան, աւազակութեան և գողակցութեան. Յորմէ առակացն բան հրաժարեցուցանէ ասելով. Որդեակ՝ մի խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք և ասիցեն, եկ ընդ մեզ կցորդ լեր արեան. ծածկեսցուք յերկրի զայր արդար 'ի տարապարտուց. կլցուք զնա կենդանւոյն իբրև դժոխք. զորս խրատէ ասելով. մի երթար ճանապարհ ընդ նոսա. խոտորեա զոտն քո 'ի շաւղաց նոցա. Նաև զմարդկանէ չարախօսութիւն ունկամբ 'ի սիրտ

մտա

մտանէ յանփակ լերանցն և յանդուռն բերանոյն. որք գործիք ստնայի եղեն՝ զնո հեղեալ թողին՝ ինքեանց լեզուաւ՝ ի լսելիս այլոց մատուցանեն. և շարժեն զնա ՚ի բարկութի յատելութի ՚ի հայհոյութի յոխակալութի ՚ի թշնամանս ՚ի բամբասանս ՚ի մատնութի ՚ի դաւաճանութի ՚ի զրպարտութի յորոգայթադրութի ՚ի սպանութի և ՚ի նոյնպիսի չարիս. Ի՛ դարձեալ և այս ունկան ախտ. ըստ որում ոչ ՚ի միջնորդաց լսելու՝ այլ դէմ յանդիման կրէ յումեքէ թշնամանս և նախատինս և պարսաւանս և արհամարհութիս և հայհոյութիս և զրկանս և յափշտակութիս և տուգանս և տնանկութիս: Արդ այսպիսեաց ամի զոր վերադոյն ասացաք՝ և որ նման սոցին, պարտ է փակել զունկնն և ոչ թոյլ տալ բնաւ մուտ լսելու. զի մի ՚ի նախ ասացել չարիսդ անկանիցի. Քանզի իբրև զքաղցկեղ ճարակեն այսպիսի ախտք զոգին: Այլ նախանձել զբարուոք նախանձն ըստ դաւթի որ ասէ. ՚ի հակառակել մեղաւորին առաջի իմ, խուլ եղէ և խոնարհեցայ. և՝ եղէ ես ոպ մարդ որ ոչ լսէ. և կամ թէ՝ լսէ, ոչ զայրանայ և ոչ տանէ ՚ի միտ և ոչ պատասխանէ.

Եւ զոյն դարձել բանալ ընդարձակ՝ զամ բարուոք լսելու մտից. զի հաւատոյ բանի և պատուիրանաց այ: Խօսել Օրէնք և Մրգրէից. Աւետարանական և Առաքելա-



կան

կան վարդապետութե՟. Ասել օրինացն որ ա֊
սէ. Տ՟ր Ա՟ծ քո՝ Տ՟ր մի է. և՝ սիրեսցես զՏ՟ր Ա՟ծ
քո յամ՟ սրտէ քումմէ. և զընկեր քո իբրև
զանձն քո. և՝ մի՛ սպանաներ. մի՛ շնար. և մի՛
գողանար. պատուեա՛ զհայր քո և զմայր.

Եւ ՚ի մտ՟րեիցն որ ասեն. խոստորեա՛ ՚ի չարէ
և արա՛ զբարի և երթ զհետ խաղաղութեան.

Եւ դարձելոց սցաւորք ՚ի մեղաց՝ որբեցա֊
րուք յանօրէնութեանց. ընկեցէք զչարութիւն յան֊
ձանց. ուսարուք գործել զբարիս. խնդրե֊
ցէք զիրաւունս. փրկեցէք զզրկեալն. դատ֊
արարէք որբոյն, և տուք իրաւունս այրւոյն.

Եւ թէ՝ բրդեա՛ քաղցելոց զհաց քո, և զաղ֊
քատս անյարկս տա՛ր ՚ի տուն քո. եթէ տե֊
սանես զմերկն՝ զգեցո՛. և զզաւակն ընտա֊
նեաց մի՛ անտես առներ.

Եւ յաւետարանէն սրբոյ. եթէ ոպ՟ կամիք
թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք
արարէք նց. Եւ՝ սիրեցէք զթշնամիս ձեր.
և բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս
՚ի վր՟ ըլկողացն զձեզ. Եւ՝ որ հարկանէ ըզ
ծնօտ քո՝ մատո՛ նմա և զմիւսն. Եւ՝ որ հա֊
նէ ՚ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր և զշ֊
ապիկս. Եւ՝ գանձեցէք ձեզ գանձս յեր֊
կինս. Եւ՝ տուք փոխ՝ ուստի ակն ոչ ունիք
առնուլ.

Եւ յառաքելոցն. եթէ ամ՟ դառնութիւն և ա֊
ղաղակ և սրտմտութիւն և հայհոյութիւն բարձցի ՚ի
ձէնջ՝

ձէնջ՝ ամ չարութբն հանդերձ ։ Իսկ՝ արեգակն
՚ի վր բարկութե ձերոյ մի մտցէ ։ Իսկ՝ սպանէք
զանդամս ձեր երկրաւորս ։ ՚Ի բաց ընկեցէք
զպոռնկութի զպղծութի և զագահութի որ է
կռապաշտութի ։ և զգեցարո՛ւք զգութ ող
քաղցրութի զերկայնմտութի ։ Իսկ՝ ՚ի բաց թօ_
թափեցէք զամ չարութի և զկեղծաւորութի և
զնախանձ և զամ չարախօսութի ։ Իսկ՝ սիրե_
ցէք զմիմեանս՝ զի սէր յյ է ծնել և ճանա_
չէ զած ։ և՝ մի բանիւք և լեզուօք սիրեցէք՝
այլ արդեամբ և ճշմարտութբ ։ և զայն ամ
փրկչին և ոգեկեցոյց՝ որոց ոչ գոյ թիւ ։
Բանալ դարձել պարտ է զականջս՝ և ամ
մաղթողի լսել ։ որ զհարկաւորսն պահանջէ
ըբ լրման մարմնոյ պիտոյից ։ և կամ հոգեւորին
խրատուց ։ որ է մեծ և օգտակար քան ըզ
մարմնոյն ընուլ կարօտութի ։ և այսպէս ըստ կա_
մացն այ լինի ընդունելութի քո լսելեաց ։
Իսկ զոտոտելիսդ խնց ընդդէմ ամ հեշտա_
լի և ախտաւոր հոտոյ ։ որ սովորաբար առ
վաւաշոտսն է տեսանել ։ զի զամ հնարս ա_
նուշահոտութե հնարեն ՚ի մարմին և ՚ի հան_
դերձս՝ առ ՚ի նիւթ և զօրութի տալոյ ախտա
ւոր ցանկութեն ։ որով զհասարակութի ոգւոցն
մեղկացուցել թուլացուցանեն՝ ՚ի վայր հո_
սելով ՚ի բարձրութե արիական հանդիսիցն ։
Իսկ դարձել բաց քո անուշահոտութեն՝ զոր
առաքելովքն ծաւալեայ ընդ տիեզերս ։



Իստ

Ըստ որումն ասէ Պօղոս․ եթէ հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած 'ի մէջ փրկելոցն և 'ի մէջ կորուսելոցն․ ոմանց հոտ 'ի մահուանէ 'ի մահ, և ոմանց 'ի կենդանութենէ 'ի կեանս։ Ո՜ի որք զգարշութիւն ախտաւոր հոտոյ սիրեցին․ զի զկենդանացուցիչն այնոցիկ 'ի մահ եղև՝ դատապարտելով զնոսա վասն անփափագ լինելոյն։ Իսկ որք զհաղորդալիս զայս արհամարհեցին սիրով ճշմարտին, նոցա տիրապէս կենաց եղև պատճառ։ Ո՛րև ըղձաւորն այսորիկ հարսն պանծալի՝ յերգոց երգումն հրատարակէ․ իւղ թափեալ է անուն քո․ վասն այնորիկ և օրիորդք սիրեցին զքեզ․ և անյագ սիրով յինքեանս ձգեցին զկեանսդ․ և միաւորութեամբ կենացդ՝ կենդանացան 'ի մշտնջենաւոր անմահութեանն։ Պարտ է որք սրբութեամբ՝ Ամենայնքն ախորժեն լինել հաղորդ, և զՆ՝աշակելեան փակել ընդդէմ ամենայն վնասակար հեշտութեանց․ զի թէպէտ և 'ի հարկաւորն ընդարձակեալ է յոյժ վայելելոյ ըստ որում և ասաց, Ահաւասիկ ետու ձեզ զամենայն, կերիջիք իբրև զբանջար խոտոյ։ Քանզի ոչ արարիչ մարմնոյ՝ գիտէր զտկարութիւն նորա և զպէտս․ բայց յաւելորդացն արգել յորկորստութենէն․ զոր անխմաստքն՝ անկարգաւորաբար խնդրեն զորովայնս։ Որ ոչ գիտեն զսահմանն բնութեան․ եթէ կերակուր վասն այնորիկ տուաւ յարարչէն կենդանեաց, զի զկենդանութիւն և զզօրութիւն և զառողջութիւն պահեսցէ 'ի մարմինս․

վասն

վճ՟ զի հաստատուն գոլով բնութ՟՝ կառեալն ոչ
պտտէ. և վ՟յնկ Թափէն՝ յոյժ կարօտանայ։
Իսկ Նոքա զայս անգիտանալով՝ կարծեն ա-
ռաւել շնորհ տալ որովայնի անյագութ՟ն.
որ ոչ Թէ միայն զօգնեն, այլև զմարմինն (զոր
բարեգործել կարծեն) ցնասեն. և ընդ բա-
զում ցաւովք արկանեն. յոլով անգամ և ի
մահուամբ։ Նաև անմտագոյն է զանասունս
զայնոսիկ ցուցել. զի Նոքա զբաւականն պի-
տոյս կերակրոցն և ըմպելեաց առնլով, Թէ
և բազում այլ առաջի կայցէ, և ոչ հայիլ
կամին ի նա։ Իսկ սոքա զպատճառս կենացն,
անչափութ՟ն՝ Նիւթ մահու առնեն. զմար-
մինն անցաւոր՝ ցաւօք վտանգեն. և զհոգին
անմահ՝ յաւիտենական մահուն վիճակեն։
Մոռացեալք զառաքելոյ ողբումն զինքենց՝
որ ասէ, լալով ասեմ զԹշնամեաց խաչին Քի.
որոց կատարածն կորուստ է. որոց Ած՝ որո-
վայն իւրեանց է. և փառք ամօԹն. ո՟ր որո-
վայնամոլութ՟ն։ Նաև ոչ վայրապար այնպիսեացն
Ած անուանէ զորովայնսն, այլ ճշմարտութ՟.
զի այ պատիւն՝ ի պաշտամանէ Նր ճանաչի և
ի պատուիրանին կատարմանէ. իսկ որովայնին՝
ի Նոցին սպասաւորութ՟։ Արդ՝ որք որովայնին
առաւել հպատակեն քան այ պաշտամանն և
պատուիրանին, քաջայայտ է զի Ած զորո-
վայնն ունին՝ որում զսպասաւորութին մա-
տուցանեն։ Յիրաւի և Թշնամիս խաչին կո-
չէ.

չէ․ վս զի խաչին անուն՝ չարչարանք են․ ըստ
նորուն տն բանին, որ կամի գալ զկնի իմ գալ՝
զխաչն առցէ և եկեսցէ․ վս զչարչարանսն․
զի ես ասէ ՚ի մարմնազգեցուեսն՝ խաչի և չար-
չարանաց ճանապարհաւ գնացի․ որով և՚ի
անփականն իմ փառս մտի։ Նոյն որ զհետ իմ
ախորժէ գալ՝ և՚ի փառսն իմ փառաւորիլ,
խաչին՝ այսինքն չարչարանացն ճանապարհաւ
եկեսցէ՝ որ է նեղ և անձուկ։ Զի որ ընդ-
լայնն և ընդարձակն ընթանայ, (որ է որկո-
րստութին և այլ մարմնական հեշտութիւնք) նա
ոչ ՚ի կեանսն և ՚ի փառսն՝ այլ ՚ի տանջանսն
և՚ի կորուստն ժամանէ։ Զսոյնս և առա-
քեալն յայտ առնէ յասելն, եթէ չարչարա-
նացն քի կցորդ լինիմք, և փառացն նր հա-
ղորդ լինելոց եմք։

Զինչ ասացից և զարբեցողացն․ որ յորժ-
գեր՝ ՚ի վերոյ անցանէ չափուն՝ քան զկերակ-
րոցն անյագութ։ Նա զի որք կերակրոցն ան-
չափութ վարին՝ թէպէտ զհոգի և զմարմին
վնասեն, (ըստ վերագոյն ասացելոցդ) այլ
զբանական իմաստութին՝ որով յանբան կեն-
դանեացն որոշեցաք, ոչ եղծանեն․ այլ կան
մնան ամբողջ բանաւորութն և խոհականին
ընտրողութբ։ Իսկ արբեցողքն՝ զբանական
իմաստն (որ է պատկեր տիրականին) ապակա-
նեն․ զի ոչ խորհել և ոչ առնել գիտեն ըստ
պատշաճի։ Նոյն ոչ թէ միայն անասնոցն այ-


ոու

տու հաւասարին՝ այլ և յայժ անմտագոյնք
քան զնո՟ երևին. վս՟ զի նոքա Թէպէտ և՛ի բա_
նական համձարոյ զրկել են, այլ ունին բնա_
ւոր շարժունս ը՟ չափոյ պիտոյից կենաց իւ_
րեանց՝ զօգտակարն իւրեանց ընտրել. այսինքն
որոշել ՚ի միմեանց զկենդանական և զմահա_
ցու կերակուրսն. ՚Ի պատառօղ գազանաց
խուսեն. յորոգայթից խորշին. ՚ի վախից և
՚ի խորխորատից ՚ի բաց կան. յամարայնի՝ ՚ի
ցրտայլն լերինս ելանեն. ՚ի ձմերան՝ ՚ի տօթա
գին դաշտս իջանեն. և այլ ինչ բազում; որ
նման է սոցին՝ կերպարանս խոհականութե
յինքեանս ցուցանեն: Իսկ ոչ այսչափ միայն՝
այլև ոտիւք ուղիղ գնան. և աչօք անսխալ
տեսանեն. և ունկամբ արագ լսեն: Իսկ ար_
բեալքն՝ ոչ միայն զբանական և զխոհական
ընտրողութին կորուսանեն, այլ՝ և ոչ զանաս_
նայինս զայսոսիկ յինքեանս ունին. զի զզգայ_
ական նորգործութիւն զա՟մ կորուսանեն. զի
ոչ ոտիւք ուղիղ ընթանալ կարեն, այլ
գայթ ՚ի գայթ. և վաղվաղակի անկել կոր_
ծանին. և իբր զմեռեալ դի՝ յայլոց բարձել
բերին. Իսկ ոչ ակն ըստ պատշաճի տեսանէ.
մինչ զի և ոչ զբարեկամս և զԹշնամիս որո_
շել գիտեն ՚ի միմեանց. Նաև ոչ ունկն ուղ
ղակի լսէ. զի բազում զլուր բանից՝ այլ ը՟
այլ իմանայ: Իսկ ոչ լեզու՝ յօդաւոր և ը՟
կարգի շարժի՝ առ՚ի բանին յարմարութ:



Իսկ

Նաեւ ոչ ձեռք յարարողականին պատրաստականէ մ
շարժի գործառութիւն։ Նաեւ շրջայելով և զամ
հանձար ծախուց՝ զոր ՚ի հանգամանս գի-
նարբուցն անմտաբար ծախէ և յետոյ զըղ-
ջանայ, զինչ պարտ է առնել. զի յոլովք այն
են՝ որ զամէն պատճառս կենաց զգայն՝ ՚ի մուտ
տուր վատնեն։ Նաեւ ոչ այսչափ միայն են
վնասք արբեցութեան. այլ քանզի խելայեղեալ՝
ոչ գիտէ զինչ խօսի և կամ գործէ. բանիւք
՚ի բանս անկանի և՚ի գրգռութի և՚ի հակառա-
կութի և՚ի բարկութի և՚ի սրտմտութի. ՚ի կռիւս
և՚ի թշնամանս. ՚ի հայհոյութիւնս, և՚ի նախա-
տինս. յարհամարհանս, և յանարգութի.
և յայտնանէ՝ ՚ի հարուածս և՚ի գանս. ուս-
տի բազում անգամ և սպանութիւնք. Յորմէ
բանտ և կապանք և տուգանք և յափշտա-
կութիւնք ընչից. և հատումն անդամոց. և զըր-
կումն ՚ի հայրենեաց. և հալածանք յօտարու-
թի. և կամ մահ փոխանակ մահու։ Տեսա-
նես աչա՛ զի ոչ միայն անասնոց հաւասարէ
արբեցն՝ այլ և քան զխոզս և զշունս և զգորտս
և զայլ զազրագոյնս ՚ի զեռնոց վատթարա-
գոյնք են։ Նաեւ այսուքիկ ըստ մարմնոյ. որ յոյժ
վիրաւորք և նուազք են առ բաղդատութի
հոգևորական տուգանացն։ Վասնզի ընդ-
շունս և ընդ պոռնիկս և ընդ սպանօղս և ընդ-
այլ չարագործս զրկի յարքայութէն. և զմշտա-
վառն և զանշիջանելին ժառանգէ զգեհենն՝



ըստ

ըստ առաքելական բանին։ Մի՛ խաբիք ասէ,
զի ոչ շունք ոչ պոռնիկք ոչ լկտեցեալք ոչ
արուագէտք ոչ բամբասօղք ոչ արբեցօղք
զարքայութիւն այ՟ ժառանգեն։

Այլ բազումք են որք ոչ միայն որկորստութբ՟
և արբեցութբ՟ն արտաքոյ սահմանին ելա-
նեն, այլ և զա՟ծային օրինօք սահմանել պահսն
լուծանեն։ Են որք ա՟մ հրաժարեցուցեալ
կերակրօք, և են որք ձկամբ և գինւով և ձի-
թով։ Եւ բարուրս կարկատեն ասելով. ա՟ծ
վ՟ն կերակրոյ ոչ բարկանայ ումեք. զի և յայն
սակս արար զնա և ետ մեզ, զի վայելեսցուք
յառատապարգևս նր՟ և փառաւորեսցուք
զնա։ Օ սիրտ աւէն պարտ է պահել՚ի չարեաց
և չար ումեք ոչ առնել. քանզի զայս մեզ
ուսուցանեն ա՟ծային պատուիրանք։

Եւ որս ասեմք թէ՝ որ զպահսն օրինադրեաց,
ոչ զսիրտ պղծել ասաց չարեօք, կամ զըն-
կերն տրտմեցուցանել. այլ և զայն ընդ նմա
պահել. զի և ոչ միոյ պատուիրանի պահումն
բաւական է յուղղութի։ Եւ լուր առաքելոյն
որ ասէ. եթէ ոք զա՟մ օրէնսն պահիցէ և մի-
ով իւիք գթիցէ, եղև ա՟մ օրինացն պարտա-
պան։ Արդ՝ ո՟չ զմարմին ոչ միայն միով կե-
րակրով այլ ա՟մ պիտանացուօքն կերակրեմք,
այսպէս և զհոգի՝ որոյ է կերակուր պատուի-
րանքն այ՟՝ ոչ միով կամ սակաւուք՝ այլ ա՟մ
պատուիրանօք պարտ է կերակրել. զի և տ՟րն

ոչ սուտ ասաց թէ՝ կեցցէ մարդ բանիւ որ
ելանէ 'ի բերանոյ ա̄յ, այլ թէ՝ ա̄մ բանիւ.
Իսկ եթէ ոք ասիցէ. թէ հրաժարեցուցեր
կերակուր միս է, և որ ինչ 'ի մսոյ՝ զի ծնունդ
կենդանեաց է. Իսկ ցուկն ջրոյ, և ձէթն և
գինին պտղոց. զորս պարտ է անխտիր ուտել.
Ո՜ ցուրտ և յիմար պատճառիս. ո՞չ ապաքէն
տարերքն ա̄մ հաւասարք են, երկիր և ջուր.
օդ և հուր. և նիւթական արարածոցս՝ ոչ
գոյ ինչ էութի̃, որ ոչ 'ի չորից տարերց յայսցա
նէ իցեն գոյացեալ. բանաւորք և անբանք,
կենդանիք և անկենդանք. Իսկ եթէ ասիցէ
դարձեալ. թէ ա̄ծ ասաց՝ բղխեսցէ երկիր
շունչ կենդանի ըստ ազգի. չորքոտանի և սո-
ղունս և գազանս ըստ ազգի. Եւ դարձեալ
ասաց՝ հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդա-
նեաց, և թռչունս թևաւորս, և կէտս և ձ-
կունս և կայտառս զանազանս. և ահաւասիկ
անասունք՝ երկրի են ծնունդ, և ձուկն՝ ջրոյ.
վա̄ այնորիկ զձկունս պարտ է ուտել, և զա-
նասունս ոչ. Այլ յառաջագոյն ասացի թէ.
ա̄մ ինչ 'ի վ̄ր երկրի 'ի միոյ տարրէ գոյացեալ
է, և ոչ յերկուց կամ յերից՝ այլ բովան-
դակն 'ի չորից. Եւ որ յերկրէ ասացաւ՝ ու-
նի զջուրն և զայլն ը̄ ինքեան. Նոյնպէս և որ
'ի ջրոյ՝ ունի և զերկրի և զայլոցն խառնուած.
Իսկ եթէ դարձեալ հակառակիս՝ նուազ

լինել որս 'ի ջրոյ ասացեալ քան զոր յերկրէ,
ընդելէր և ոչ զթռչունս ուտես, քզի և նոքա
'ի ջրոյ են. և կէ ընդ էր ոչ 'ի բուսոց էին սեր-
մանեաց հրամարես՝ զի և նոքա յերկրէ են:
Իսկ եթէ զկենդանին ասես պատճառ, աշամ
և ձկունք կենդանի են և մեծք և յաղթան-
դամք քան զմարմ կենդանիս որ 'ի վերայ երկրի:
Այլ ես ոչ ասեմ զայս ինչ պատճառ կեր զայնս,
այլ զյանցանելն ընդ եղեալ սահմանս. զի և
առաջին պահոցն լուծումն՝ որով անկեաք և
մահ յաշխարհ եմուտ՝ ոչ մսով էր կամ ձկամբ կամ
գինւով և ձիթով, այլ պտղով: 'Ի ծառոյն
առէ գիտութեան բարւոյ և չարի մի ուտիցէք:
Իսկ 'ի պատժելն յետ յանցաւորութեն՝ դարձել
զնոյն երկրորդեաց. փոխանակ առէ զի կերեր
'ի ծառոյն յորմէ ասացի չուտել, անիծեալ
լիցի երկիր 'ի գործս քո. և որ 'ի կարգին.
Արդ ամենայն օրէնսդիրքն ոչ զաւուրսն ո-
րոշեցին պահոց և ուտելոյ, նոյնպէս և զկերա-
կուրսն զանազանեցին. զզօրաւորսն և զհեշ-
տալիսն և զախորժելիսն մարմնոյ զորս պատ-
շաճ դատեցան՝ օրինադրեցին ոչ ուտել յա-
ւուրս պահոցն. զի երկնեսցուք ընդ հնազան-
դութե հրամանի նոյ. Այս և 'ի մարդկէ է
տեսանել. զի 'ի վերայ ը ձեռամբ անկելոցն՝ ոչ
այնքան զմեծամեծսն կամ զփոքունսն քննեն
պատճառս, որքան զանհնազանդութե և զար-
համարհանաց հրամանի իւրեանց. այսպէս ամ


ու

ումեք պարտ է հնազանդել ա՟ծայնոյն օրհնա-
գրութե՟ն՝ զոր 'ի ձեռն եկեղեցւոյ առաջնոր-
դաց կարգեաց։ Նաև զոր ըստ ա՟ծային հրա-
մանին կարգեաց յինքենէ պահոցն զկերակու-
րս՝ մասնաւորել զայն կարօտելոյն հարկա-
ւորացն։ Նաև զա՟մ աւելորդս դիզեցն կե-
րակրոց և զինչ և իցէ, առատապէս սփռել
և տալ աղքատաց․ զի արդարութի՟ բարեգոր-
ծութե՟ն մնասցէ յաւիտեան։ Հաւանել բա-
րերարին խրատու․ զապաշխարացու և զցն-
դելի նիւթ երկրաւորիս՝ որ ցեցոյ և ժանգոյ
է կերակուր՝ ող՟ փոխանակութե՟ տալ 'ի
ձեռս աղքա՟ց և գանձել յերկինս․ որ ան-
դժրելին է գողոյ և ցեցոյ․ և առնուլ փոխա-
րէն զանապականն և զանսպառելին զերկնից
արքայութի՟՝ ըստ նորուն երանաւէտ ձայնի որ
առ բարեգործացն դասս։ Եկայք տոէ օրհ-
նեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զանսպառ
զպատրաստեալ ձեզ զարքայութիւն 'ի սկզբա-
նէ աշխ՟ի։ Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ու-
տել․ ծարաւեցայ՝ և արբուցէք զիս․ օտար
էի՝ և ժողովեցէք զիս ընդ յարկաւ ձերով․
մերկ էի և զգեցուցէք զիս․ հիւանդ էի և
տեսէք զիս․ 'ի բանտի էի և եկէք առ իս։ Արդ
իբրև տարակուսեցան՝ տեսեալ զնա յայնպի
փառաւորութե՟ն, և անարժան նմա լսասցելոյն
վարկանէին, և հարցին․ Թէ Երբ տեսաք ըզ-
քեզ յայդպիսի կարօտութե՟ և բարեգործե-



ցաք

ցաք ոչ գոհանամք։ Պատասխանեաց նմա և ասէ. որովհետև արարէք միում 'ի փոքր և յարհամարհ թուեցելոցս յայսցանէ՝ ինձ արարէք. զի ես էի որ նոցին ձեռօք առնուի զողոր մութի 'ի ձեռաց ձերոց։

Արդ ըստ վերագոյն գրելոցդ՝ ամ քրիստոսակա րոցդ այդոցիկ ընդ դէմ փակել արժան է զճաշակելիս, և լաւագունիցդ բանալ։ Նոյն համեդերձել ըստ աստուածային սահմանին՝ շարժել զնա 'ի բնաւորինացն ներգործութի։

Յետ այսորիկ՝ դնել արժան է սանձս և 'ի վր լեզուոյ. զի թէպէտ և փոքր ինչ անդամ է, այլ մեծամեծս բարբառի ըստ առաքելոյն։ Նա զարդ անիրաւութե զնա ասէ, և ամ մարմնոյն ապականիչ. նովաւ ասէ օրհնեմք զած, և նովիմբ անիծանեմք զմարդիկ՝ որք 'ի պատկերն այ արարան, Նոյն ապա քաղցր և ողոքն բանիւ 'ի խրատ մատուցեալ ասէ։ Ինչ է պարտ եղբարք՝ այսմ այսպէս լինել. զի ոչ աղբիւր՝ անդստին 'ի միոյ ականէ ոչ բղխէ քաղցր և դառն, այնպէս և լեզու՝ որ քաղցր և շնորհալից բանից գործարան յարարչէն 'ի բնութե հաստատեցաւ, ոչ է իրաւացի եթէ զդառնութի հայհոյութե և բամբասանաց, կռուի և հակառակութե, ստութե և չարախօսութե, թշնամանաց և պղպարտութե, քսութե և մատնութե, խեղկատակութե և դատարկաբանութե, երդմնահարութե և շողոքորդութե, և այլ

յոգնութիւն շաղակրատութ յինքեանս բղխես-
ցէ։ Մանաւանդ զանօրէն և զհոգեկորոյս
բանս յիշողութէ. որ է սերմն որոմնացան
թշնամւոյն ՚ի նմանէ սերմանել. և ՚ի հաճոյա-
կատար մշակաց իւրոց երկրագործել և սը-
դիւնացեալ։ Որև քան զմ յանցանագ է
դժնդակ և ծանրագոյն. և առաւել խաւա-
րեցուցանէ զոգւոյն պայծառութիւն. և ան-
հրաժեշտ ժառանգ կացուցանէ մշտավառ
հրոյ անշիջանելի գեհենին։ Ո ի եթէ յիմար
և մորոս ասել եղբօրն՝ (ըստ տն բանին) պա-
տաւոր առնէ գեհենին, որչափ ևս առաւել
զանհամարին և զդժնդակ տմլսելութ՝ անար-
գանաց և նախատանաց բանսն յարդականել՝
ոչ ՚ի դժոխոց մտացն և ՚ի լեզուէն զգայուե-
լով. մինչ զի զանասնոց և զգազանացն ստա-
կանան անարգեն. զի ՚ի պատկեր այ եղեալ է
մրդն. որով զնախատիսն ած շարժեն ՚ի վր
ինքեանց ՚ի բարկութ և ՚ի վրէժխնդրութ։
Յոլով անգամ զքս և զանմեղ հոգին այ հայ-
հոյեն. զորմէ ասաց տրն. ոչ բնաւ ունել թո-
ղութ, ոչ յայսմ ժմի՝ և ոչ ՚ի հանդերձելն։
Այլ ՚ի սանձել զայս տմ անկարգ բերումն
լեզուին, շարժել դարձել գեղեցկապես
զնա արժան է ՚ի խոստովանութ քս և ուղղա-
փառ հաւատոյ երից անձնաւորութեց և միոյ
ածութե համաբուն և զուգին երրորդութ։
Եւ ՚ի դաւանութ աշխարհանորոգ և փրկչն



ան

անօրէնութե. Այլ յօրհնութի և 'ի փառաբա_
նութե անսահման բարերարութե և յոգնա_
ւոր պարգևաբաշխութեն։ Այլ 'ի մաղթանս
մշտանուէքն՝ վն փրկութե իւրոյ անձին, և
համասեռից. Այլ 'ի խոստովանութի նախագոր
ծեալ յանցանացն՝ անպատկառապէս յան_
դիմանութե և գովելի ամօթխածութե. 'ի մե_
ծամեծացն մինչև 'ի մանունսն բջանելով. որ
ըստ գործոց՝ բանից՝ և խորհրդոց. Այլ 'ի
խրատ և յօգտութի այնոցիկ, որ այնմ պէտս
ունին հոգևորաց և մարմնաւորաց։ Չեռն
կարկատելով դրորելոցն։ Մխիթարել զոր_
գաւորս. Կանգնել զանկեալս յուսահատու_
թե. Բժշկել զբեկեալս թերահաւատութե.
Քաջալերել զվհատելսն հեղգութե. Պնդա_
կազմել զյողդողդսն արութե. Զօրացուցա_
նել զհաստատսն պնդութե. Այլ և երբէք
խօսել զայն ինչ, որ ոչ ինքեան՝ և ոչ լսողին է
պիտանացու. այլ՝ զոր հասարակաց ամէն է
օգուտ ըստ առաքելոյն. զի ասէ. լիցի բանն
ձեր համեմեալ աղիւն շնորհաւն, զի տացի
շնորհս լսողացն։

Արդաւորաւքս ասա և 'ի Տ օշափելեան ի_
րուացի է անցանել բանիւ, և զնորայն նա_
հանջել զյանդուգն յարձակումն. որով առ_
ձեռն պատրաստ է 'ի չարութի մուտք և ճա_
նապարհ 'ի մեղս։ Այլ նախ 'ի գարշ և 'ի զազ_
րալի շօշափմանէն կարճել. որ յամենայնումն
և

և 'ի պոռնկութիւն լինել 'ի պեղխան և 'ի շռայլան։
Ո՛չ ասեմ 'ի զգաստան և 'ի պարկեշտան. քանզի
նոքա խորշին յայնպիսի աղտեղութեց։ Քանզի
ամ պիտանացու գործոց՝ ունի բնութիւն յին-
քենէ պատշաճաւոր գործիս. և որպէս յիւրա-
քանչիւր գործս իւրովք յարմարականօքն
վարի, նմանապէս և յայնսան՝ իւրովքն շատա
ցի։ Ին ոմանք 'ի վաւաշոտացն՝ որք և առանց
գործակցի՝ ինքեանք ընդ ինքեանս մոլորին.
և զգարշ ցանկութիւն հոսմամբ ախտիցն կա-
տարեն։ Ոչ ինչ նուազ է զպոռնկութիւն
է, այլ վատ և հաւասար չնութ. մերժէ յար-
քայութենէն զգործունեայսն և առնէ ժառանգ
գեհենին. յորմէ առաւել պարտ է զգուշա-
նալ. մի զի սակաւ է հեշտութիւնն, և յոլով
պատուհասն։ Արգելուլ պարտ է և 'ի գո-
ղութէ զձեռս, ըստ առաքելոյ հրամանին՝ որ
ասէ. որ գողանայր՝ մի ևս գողասցի. այլ մանա-
ւանդ վաստակեսցէ գործել ձեռօքն իւրովք
զբարիս. զի բաւական իցէ տալ ումպիտոյ
իցէ։ Թօթափել և 'ի կաշառաց զձեռս. զոր
դարովէ մարգարէն ասելով. ձեռք իւրեանց
յանօրէնութեան են. և աջ նոցա լի է կաշառօք։ Զի
կաշառ կուրացուցանէ առ զառօղն առ'ի
թիւրել զդատաստանս. զի անարժան է կաշա-
ռաց և իրաւանց ընթացակից լինել։ Զի
որպէս հուր՝ զմոմ, և ծուխ՝ զմեղուս, այսպէս և
կաշառք՝ զիրաւունս հալեն և փախուցանեն։

Իսկ զխոտորելն յայսմանէ, բարեբանութեան
հաշակէն տալով. որ թօթափէ զձեռս իւր
՚ի կաշառաց։ Նաև թէ՝ կաշառս ՚ի վր իրա-
ւանց նա ոչ առնու. և՝ որ զայս արասցէ՝ նա
ոչ սասանեսցի յաւիտեան։ Մ՚չ տալ դար-
ձեալ տոկոսիւք ՚ի փարձու. քանզի զվաշխս
և զտոկոսիս ՚ի տունս ամբարշտաց ասէ իմաս
տունն։ Ապա թէ և ոչ ես կարօղ ըստ տն հրա-
մանին տալ փոխ՝ յորոց ակն ոչ ունիս առ-
նուլ, (որպէս զկատարել քն աշակերտ՝ զի առ-
նուցուս զայն բազմապատկութեան յարքայու-
թե) գոնէ տուր փոխ ըստ մեղաւորացն. անդ-
րէն առնուլ զհաւասար կշիռն. Իսկ զան-
ծնունդ բնութեան արծաթոյն ծննդական առնել
հակառակ է այ. քանզի նա զկենդանիս, և
ոչ զարծաթ ծննդական սահմանեաց։ Նաև
կենդանիքն՝ միանգամ ՚ի տարւոջն ծնանին.
իսկ արծաթն՝ յամսոջ։ Որքան պտմէ դժըն-
դակ և առաւել ընդդէմ այ. զի դու որպէս թէ
զօրաւոր և իմաստուն քան զնա՝ կարացեր
առնել զայն յորում նա տկարացաւ։

Նաև ոչ ՚ի հարուածս ուրուք ձգել ըզ-
ձեռն. զի ոչ հարկանել ուսաք ՚ի տնէ.
այլ հարկանելեաց մատուցանել զծնօտս.
Նաև զոր բանիւ վարդապետեաց՝ գործով
կատարեաց. զի չար ծառայքն որ ած նմա
ապտակ՝ ոչ սաստեաց և ոչ պատուհասեաց.
Ոչ և ընդ միանգամ թող զապտակողսն՝



՚ի

'ի փոքունց ևս հարուածոց սպանումն գործիս

Դարձեալ՝ ոչ ձգել զձեռն 'ի ղրկանս և յափշտակութի • որ զարդարութե սովորեալն հրաման ընկալաք սփռել և տալ կարօտելոց • որ իբրև հակառակս այսոցիկ և օրինաք հրաժարեալս՝ ընդդէմ փակեմք զարձակումն շօշափելեաց: Կացցուք նմա դրունս բարեգործութե օգտակարս և պիտանիս: Ամբարձցուք զնա մաքուր մաղթանօք և անզբօս մտօք առ ած ը դաւթայ • 'ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութի, և օրհնեցէք զտր:

Իսկ ը պօղոսի՝ կամիմ, զի արք յամ ժամ ամբարձցեն զսր ձեռս իւրեանց առ ած՝ առանց բարկութե և երկմտութե: Ոչ է քան զամ ռաքինութի, սա առաւել ընտանի և մերձաւոր է այ • զի այլք ամ իբրև հանդերձանք և պատրաստութիք են առ ած մտից • իսկ սա դէմ յանդիման խօսակցութի է այ: Ոչ է ոչ ամ աշխատութի երկրպագութի վն հաւատելոյ զպտուղն է, և տաժանումն խոհագործի յաղագս կերակրելոյ, այսպէս և ամ բարեգործութի և զգաստութի և պարկեշտութի վն ձանձրոյ գործելոյ մտացն անզբաղանս՝ ոչ ընդ սիրելւոյ բարեկամի այ խօսակից լինել աղօթիւք • և զպէտս ամ կարեաց հոգւորաց և մարմնաւորաց՝ անձին և այլի՝ առաջի դնել • և 'ի նմանէ զյաջողումն ամ բարութե հայցել • և զփրկութի յորդայթից թշնամւոյն



Իսկ

Իսկ այս մասն տաղքենուէ ոչ է ընդ սահմա-
նաւ ոչ զայլսն. այլ անսահմանաբար յամ
ժամու առնել: Ըստ տրունակն հրամանին
որ ասէ. աղօթս կացէք, և յամ ժամ աղօթս
արարէք: (զոր է մտօք և խորհրդով և կամ
այլովք բարեգործութեք զթերի մնացեալ
ժամանակ աղօթիցն լցուցանել. զի միշտ ա-
ղօթէ՝ որ զբարիս գործէ.) Երև յօրինակ
մեզ Նի յորդորումն՝ ընդունօղն զմ մաղթա
նաց՝ բազում անգամ զգիշերսն՚ի գլուխ հա-
նէր յաղօթս զյ: Իսկ առաքեալն ՚ի նմանէ
ուսեալ ասէր. յամի գոհացարուք անդադար
աղօթեցէք: Բանզի և այսպէս վայելչական
է նախ յաղագս տուեցելոց բարեացն գոհա
նալ, և ապա վս առաջիկայիցն մաղթել, Իսկ
ոչ միայն վս անձին և տան և որդւոց և ըն-
տանեաց զայս առնել, այլ և վս ամ Ճի. ի-
րաքանչիւրոցն զպիտոյսն և զօգտակարսն անօ-
րինել՝ ըստ օգտոյ և մարմնոյ: Իսկ առաւել
՚ի վր թշնամեացն և ատելեացն. ըստ բանին՝
եթէ օրհնեցէք զանիծիչս ձեր, և աղօթս
արարէք ՚ի վր այնոցիկ՝ որ լլկենն զձեզ և հա
լածեն: Բանզի այս՝ զամ ատելութ է զխսա
կալութ հալածական առնէ. զի յաղագս ո-
րոց ճշմրիտ և աներկբայ սիրով աղօթս առ-
նէ, և՚ի տնէ փրկութ հայցէ, զէ նս ոխութ
զխարդ կարէ լինել: Նաև թէ պտ լինի ու-
նել զէ ումեք թշնամութ, այլ նախ հաշտել


սպալու

պարտ է՝ և ապա յաղօթս մտանել։ Զի ե-
թէ զպատրագն խափանել հրամայէ նախքան
զհաշտութի, (զի և ոչ իսկ էր ընդունելի ա-
ռանց այնորիկ) որչափ ևս առաւել զաղօթսն.
զի նախ զհաշտութիւն պարտ է առնել, և ա-
պա յաղօթս խնդրել նյ բարիս ՚ի ածնէ։ Եւ
զայս առնել արժան է. զի և մեք առաւելա-
պէս ընդ կարեօք եմք. քանզի անբաղդատե-
լի են առ միմեանս. յանցանք մեր որ ած, և
ընկերացն որ առ մեզ. ժ թուոց բիւր քան-
քարացն և ճ դահեկանին. յաղագս այնորիկ
խրատեցի է թողուլ պարտապանին զիկսն.
զի գտցուք և մեք թողութի բազմացն։
Վասնզի ասաց տրն. եթէ թողուցուք ի-
րաքանչիւր եղբօր իւրում ՚ի սրտից ձերոց
զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր
երկնաւոր զյանցանս ձեր. ապա թէ ոչ թո-
ղուցուք զյանցանս եղբարց ձերոց, և ոչ
հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս
ձեր։ Արդ՝ յաղագս այսպիսի սոսկալի և խրա-
ւացի հրամանի՝ պարտ է յամ սրտէ թողուլ
պարտապանացն և աղօթել սիրով ՚ի վր նց.
զի առ այս զմեզ սորա ած իշխանս ՚ի վերայ
թողութե մեղացն մերոց. զի որով սրտիւ մեք
թողումք նց զմեր պարտսն՝ և սէր և գութ
ցուցանեմք ՚ի վր նց, ճշ չափով և ած զմեր
յանցանսն թողու, և զարարչական սէրն և
զգթութի իւր սփռէ ՚ի վր մեր։



Եւ

Եւ յամ սահմանեալ ժամ աղօթից տուընջեան
և գիշերոյ՝ պարտ է կանխել յեկեղեցին.
և կալ յոր և լիցէ տեղի աղօթից. և առաւել
՚ի ժամ սոսկալի և մեղսաքաւիչ պատարագին.
Ոչ եթէ որնքն վս անճառ սիրոյն՝ խոնար-
հեալ յանբաւ բարձրութեն պատարագի վս
քաւութեն մեղաց քոց, եղեալ միջնորդ հաշ-
տութեն ընդ հայր և ընդ քեզ. (ըստ որում և ասացն.
այս է մարմին իմ որ վս ձեր բաշխի ՚ի թողութի
մեղաց ձերոց) որչափ ևս առաւել քեզ իրա-
ւացի է երթալ և անկանել առաջի և գոհա-
նալ. և շնորհս ունել զանբաւ բարերարու-
թեն. Որ վս պարտաւորացս և անարժանիցս
և ապստամբելոցս ՚ի Նմանէ բիւրապատիկ
յանցաւորութեն՝ զիւր անձն տայ Նոցա և պա-
տարագ հաշտութեն հօր ընդ պատժապարտացս.
Եւ զի մեք յամ ժամու մեղանչեմք՝ խորհր-
դով բանիւ և գործով, նմին իրի և նա յամ
աւուրս պատարագի, զի զօր ըստ օրէ գործել
մեղսն քաւեսցէ. Եւ եթէ գնամք յամ ա-
ւուր ՚ի ժամ սոսկալի խորհրդոյն կատարման,
և գոհանամք և շնորհս ունիմք զմարդասիրու-
թեն և ճանաչեմք զերախտիսն, և զմեր մաղ-
թանսն և զարտասուսն խառնեմք ընդ նր գը-
թութեն և ընդ բիւրապատիկ երախտագոր-
ծութեն, կատարի ՚ի վր մեր և նր շնորհքն, և
ընդունիմք զթողութի մեղաց. Իսկ եթէ հեղ-
գամք և ոչ գնամք ՚ի ժամ սուրբ խորհրդոյն



կա

կատարման յեկեղեցին, և աղօթեմք և գոհանամք զանբաւ բարերարութեն և խնդրեմք զթողութի մեղաց՝ այլ նախապատիւ համարիմք զհոգս մարմնոյն և զզբաղանս անօտիս և զծուլութի և զհեշտութի մարմնոյ. ք զաշխարհակեցոյց և զփրկագործ խորհրդնոյն ոչ միայն թէ չօգտիմք ՚ի նմանէ, այլ և առաւել ՚ի բարկութ շարժեմք զանախտակիր բնութն ՚ի վր մեր. փոխանակ արհամարհանացն և անտես առնելոյն։ Օ՜ իսկ թէ երկրաւոր ոք թգւոր՝ վս բարեգործելոյ ինչ զքաղաք, և պարգևս բաշխելոյ քաղաքացեացն եկեսցէ անդ. իսկ նոքա ոչ եկեսցեն նմա յողջոյն և յերկրպագութի և ՚ի սպասաւորութի և ՚ի շնորհակալութի. այլ արհամարհութբ անփոյթ առնիցեն. իւրաքանչիւրոք յիւր գործ և աշխատութի զբաղելով. ոչ միայն թէ պարգևս բարեաց ոչ բաշխէ նց, այլ և մեծամեծս ցասնու և պատուհասէ. Ո՜, անիօն ևս ապա յորժամ երկնաւոր թգւորն եկեսցէ՝ զանմահ կենաց և զանապական հիրս պարգևաց բաշխել անարժանից և ապերախտից. և մեք արհամարհեմք և անտես առնեմք, զապականացուս և զցնդելիս նախամեծար առնելով ք զանապականն. և որ միշտ նոյնպս առնիս ՚ի բարկութ և ՚ի ցասումն շարժեմք զնա ՚ի վր մեր. քն թէ յողորմութ։

Եւ ոչ միայն պարտ է աղօթել առաջի որդ

 պա

պատրաստեալք էին, այլ և հաղորդել փրկչին խորհրդոյն. զի հաղորդելոցն ասաց լինել 'ի թողութի մեղաց և ոչ անհաղորդիցն։ Վասնզի նախ ասաց թէ, առէք կերայք այս է մարմին իմ. և ապա յաւել՝ որ վս ձեր բաշխի 'ի թողութի մեղաց։ Նա և դարձեալ ասաց. եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նր՝ ոչ ունիք կենս յանձինս. և դարձեալ, որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցէ և ես 'ի նմա, Տեսանես ահա՞ զի ճաշակողացն է 'ի փրկութի և ոչ անհաղորդիցն։ Բայց և ոչ վարկպարազի հաղորդիլ՝ այլ սրբութբ։ Վասնզի ասէ առաքեալն. փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ և 'ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ։ Նա և թէ՝ վս այնորիկ իսկ են 'ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք. և շատք ևս այնք են՝ որք և մեռեալքն են. զի վս անարժան հաղորդութեն։

Այլ թերևս ասիցէ ոք արդեօք։ Ո՛չ յառաջագոյն ասացեր, թէ ինքն է քաւիչ յանցանաց ճաշակողացն. Քս որում ասացն, այս է մարմին իմ որ վս ձեր բաշխի 'ի քաւութի մեղաց. և այժմ զառաքեալն 'ի մէջ բերես որ ասէ. որ ուտէ և ըմպէ անարժանութբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ. և



ա

ահա տարակուսանք՝ զի հակառակս բարբա-
ռին։ Այլ լուր ով դու՝ զի ոչ ընդ հակառակս
խօսին. այլ կարգ քաջ միաբանին։ Իսկ է այսպէս.
մարդ հաղորդութեամբ՝ մարմնոյ և արեան վե-
ձակեալ՝ զի մա՛րդ ինքեան սրբութեան արժանա-
նայ ընդ այ միաւորիլ ճաշակմամբ մարմնոյ
և արեան նր։ Ո՛ւր թէ սերովբէն ոչ համար-
ձակէր մերձենալ յօրինակ նր, այլ ունելեօք
կարօտանայր. մարդ՝ որ անչափ փոքրկութե
վերջանայ ՚ի նմանութե սերովբէի, ո՛րքան կարո-
ղանայ մերձենալ ՚ի ճշմարտութիւն։ Այլ բարե-
րարն և մարդասէրն ած ըստ անչափ սիրոյն իւ-
րոյ զոր ունի առ ազգս մարդկան՝ կամելով
զսոսա միացուցանել յինքն՝ ետ սոցա պատ-
ճառ սրբութե զխոստովանութիւն և զապաշխա-
րութիւն։ Ո՛ւր ի ամ ոք ճշմարիտ սրտիւ ընդ գի-
տակցութե մտաց իւրոց՝ ՚ի շտեմարանս սրտին
մտանելով՝ մանրամասնաբար որոնեսցէ զամ
սխալանս հոգւոյ և մարմնոյ և մտաց, զխոր-
հրդոց զբանից և զգործոց, և խոստովանես-
ցի անապականաբար և անծածկապէս՝ որչ
զթշնամւոյ ամբաստանելով զմեղաց։ Նա-
տարցէ ըստ չափոյ կարողութեն զսահման ա-
պաշխարութե, և ապաշխարեսցէ և սրբեսցի։
Սակայն գիտել պարտ է, զի զամ մեղսն մինչ
՚ի մանրունսն իջանելով՝ ոչ ոք կարէ զմտա-
ածել և խոստովանել. թէ և բիւր անգամ
ջանասցէ։ Նա գրեսցէ՝ թէ զգործսն կա-

րէ յիշել և խոստովանիլ · իսկ զխորհրդոցն և զբանիցն որոց · Եւ եթէ յիմար ասէին և մերոս՝ գեհենին դատապարտէ · և դատարկաբանութի՛ ի պահանջանս համարոյ ածէ, Ո՞րք է որ զայս զմտաւ ածել և կարէ խոստովանել · Արդ զոր մտածեացն և խոստովանեցաւ և ապաշխարեաց՝ զայնս սրբեաց · և զոր ոչն կարաց յիշատակել՝ զայն մարմին և արիւնն քի սրբէ · Եւ ճշմարտի երկոցունցն բանն՝ տն և առաքելոյն: Որ ոչ առանց խոստովանութե և ապաշխարութե ուտէ և ըմպէ, դատապարտի ըստ առաքելոյն · և որ խոստովանութբ և ապաշխարութբ քաւի ըստ քի · Սոյն զայս յայտ առնէ և որոտմանն որդի · Եթէ ասեմք թէ՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք · և ճշմարտութի՛ ի մեզ ոչ գոյ · ապա եթէ խոստովան լինիմք զմեղս մեր, հաւատրիմ է նա և արդար՝ առ ի թողուլ զմեղս մեր · և արիւնն յի որդւոյն այ՝ սրբէ՛ զմեզ յամ անօրէնութենէ: Ասուի թէ զայն ակնարկէ · զի թէպէտ և խոստովանեսցի որ՝ բայց զկատարեալ թողութին՝ հաղորդութի մեղսաքաւիչ մարմնոյ և արեանն քի պարգևէ: Ուսանիմք զայս և յօրինակէ սերօբէին՝ որ առ մրճիւն · վն զի խոստովան եղև մրճիւն · թէ պիղծ շրթունս ունիմ, Եւ ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես: Եւ ապա սերօբէն էառ ունելեօք՛ի

հրոյ անուշ որ ՚ի վ̃ր սեղանոյն․ երբեր մերձե֊
ցոյց ՚ի բերան մ̃րգրէին և ասէ․ ահա այս
մերձեցաւ ՚ի շրթունս քո, և հանցէ զանօրէ֊
նութիւնս քո, և զմեղս քո սրբեսցէ ՚ի քէն։
Տեսանես ահա՝ զի թէպէտ և ս̃բ էր մ̃րգրէն․
և առաւել քան զա̃մ մարդիկ․ մինչ զի հո֊
գւոյն էր բնակարան՝ և զո̃ր զօրութեց ետես
յաթոռ ՚փառաց, այլ օրինակի մարմնոյն ք̃ի
կարօտացաւ ՚ի մեղացն մաքրութ̃ի։
Եւ յետոյ մաքուր մաղթանօք և աղաչանօք
առ ա̃ծ զձեռս համբառնալով՝ զարդարես֊
ցուք զնա և այլովք բարեգործութ̃եք։
Այսինքն տրօք տնանկաց, և կարկառելով
ձեռն յաղքատս․ զի և այս ոչ փոքր ինչ ն֊
պաստ լինի առ ՚ի մեղացն մաքրութ̃ի։ Ըստ
այնմ զմեղս քո ողորմութ̃բ քաւեսցես, և զա֊
նօրէնութիւնս քո գթովք տնանկաց։ Գործել
ձեռօք և տալ կարօտելոց՝ զի̃ խրատուն պօ֊
ղոսի․ զբարիս գործել ասէ մի ձանձրանայք․
զի ՚ի ժամանակի իւրում հնձեսջիք առանց
լքանելոյ։ Եւ ա̃մ վտանգելոց որք կարօտ են
օգնականութ̃․ հիւանդաց՝ տկարաց՝ և ծե֊
րոց՝ սպասաւորել առանց հեղգութ̃․ ո̃պ իւ֊
րաքանչիւր ումեք կարևոր պէտքն պ̃հնջէ։
Նաև զի այս ոչ է պարտ որոշել յընտանե֊
անդամոցն միաբանութ̃ե․ և անխնամաբար
առանց զարդարանաց թողուլ․ այլ իւրովք
բնաւորական ներգործութեցն գործառութ̃ք

պսակել զնա ։ Զի թէպէտ և ՚ի զգայութեց
ոչ է սա, այլ ոչ ինչ նուազ ՚ի նոցանէ, իշխա
նական մտացն առաջնորդութ՟բ՝ յիւրաքանչ
իւրումն ունի շարժումն ընդդիմակ գործոց՝
բարւոյ և չարի ։ վ՟յ պարտ է խոհեմին մե
րակացութ՟բ՝ իբր սաստիւ և անխզելի կապա
նօք՝ արգելուլ զնա ՚ի չար ընթացից և ՚ի գնա
ցից անօրէնութ՟եց ։ Ո՛չ շարժել զնա ՚ի գողոց
և յաւազակաց միաբանութ՟իս և ՚ի հետևողու
թ՟իս ։ ը՟ս իմաստնոյն խրատու ։ Ո՛րդեակ ա՟է
մի երթար ճանապարհ ընդ ն՟ս ։ խոտորեա զոտն
քո ՚ի շաւղաց ն՟ց ։ զի ոտք ն՟ց ՚ի չարիս ընթա
նան, և երագունք են ՚ի հեղուլ արեան ։ Ո՛չ
՚ի տուն պոռնկութ՟ե կամ արբեցութ՟ե ։ զի կա
տարած երկոցունցն հայի յատակս դժոխոց ։
Ո՛չ ՚ի Թատերս խաղուց և ՚ի կտի տեսութ՟եց,
զի յոլովից չարեաց են պատճառ ։ Ո՛չ ա
դիւթս և կախարդս, զի օտարացուցիչք են
յա՟յ ։ Ո՛չ և առ չար խորհրդակիցս և գործ-
կիցս ։ խորհել և կամ առնել ումեք չարու
Եւ միանգամայն յամ՟է՝ որ ընթացիւք ոտ
լինի ապստամբութ՟ի ՚ի հրամանացն ա՟յ՝ ներ
գործութ՟բ չարին յինքն և կամ յայլս՝ խոտորել
Եւ արգելմամբ յայսցանէ՝ ուղղել ՚ի գնաց
արդարութ՟ե ։ ըստ առակողին, ՚ի ճանապարհ
արդարութ՟ե գնամ, և ՚ի շաւիղս ճշմարտութ՟ե
շրջիմ ։ Ի՛ յինքն սակս ընթանալ յեկեղեց
ա՟յ, և ՚ի տունս աղօթից ՚ի փառաբանութ՟ի ա՟յ ։


Գնալ

Գնալ և առ խոստովանիչս, և առ հոգևոր խրատուց բաշխօղս խոստովանել զմեղս, և առնուլ խրատ ապաշխարութե՛ և բարեգործութե՛, Գնալ և յայցելութի հիւանդաց, և որք 'ի բանտի՝ ըստ չափու զօրութե՛ օգնական լինել. Լու բոլորովին յո՛մ՝ որ ինչ ըստ պատուիրանաց ա՛յ է՝ գնալ. և 'ի հրաժարելոյն խոտորել: Մինչ զի կարել ասել ընդ դաւթայ. 'ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, և զճանապարհս ճշմարտութե՛ քո ընտրեցի: Լսել 'ի տնէ. դուք որք եկիք զկնի իմ, 'ի միւսանգամ գալստեան իմոյ վայելեսջիք 'ի փառս իմ:

Լու սուրբ առհաւասիկ շնորհօքն ա՛յ՝ մասանց ոգւոյ, և շարժմանց մտաց. և զգայութեց մարմնոյ, որ ինչ մուտք մեղաց են՝ փակեցան. և որ ինչ առաքինութե՛ և սրբութե՛ յառաջատուէք բացան. զի և այս խակ է մարդ բոլորովին: Ոգի և զօրութիք իւր. միտք և շարժմունք իւր. մարմին և զգայութիք իւր. զոր պարտ է ըստ վերոգրելոյդ ա՛մ զգուշութե՛ պահել: Ո՛չ ընդ հրաժարեցուցելոյն ընտանենալ, և ոչ 'ի համարձակելոյն օտարանալ. զի մի 'ի բարուք և յընտանի կայից սողոսկել 'ի վայր քարշեցի մարդն ա՛յ. և բնծ ինչ առատոյ է՛ անարատ մաքրութին խառնեցի՝ եղծանելով զնախնականն պատկերի լուսանկար գեղեցկութին: Այլ զի վերագրելովքդ՝ յառա_



ջին

ջինն յայն ժ̃մի՛ զարդուրեսցի արարչատեղծ
կերպարան։ Դ̃ռ բոլորովին ըստ լուսադու-
նին, և աղքատ ՚ի հակառակէն։ Օ՛ւ թէ զա̃մ
տէ օրէնսն պահիցես, և միով իւիք գթի-
ցես, թերի ես և ոչ կատարեալ։ Օ՛ր օրինակ՝
եթէ ոք զա̃մ անդամս մարմնոյն կազմ և յար-
դար ունիցի, և միով իւիք նուազեալ, ա-
կամբ կամ ձեռամբ կամ ոտք և ասիցես յան-
դամոցն՝ ոչ ա̃մ լիոք այնպիսին ըստ կատա-
րեալն է՝ այլ թերի կոչի։ Ի սոյն խորհուրդ
և յօրինաւոր հրամանսն՝ զընծայեալսն ա̃յ
պատարագս՝ անարատս հրամայէր մատու-
ցանել. քանզի կաղն կամ միականին կամ
այնչափ կամ որ այլ ինչ թերութի ունէր՝ չէր
ընդունելի ՚ի պատարագսն։ Իբր պօղոս զա̃մ
օրինակսն՝ առնէր հանդերձելոց բարեաց
տէ։ Աստի ընդ այլսն՝ և այս վարկանելի է
առնէր. զի մարմնաւորն այն պատարագ՝
հոգևորիս էր ապացոյց. զի ո̃պ անդ՝ ըստ
մարմնոյ կատարեալքն էին ընդունելիք, աստ՝
հոգևորապէս լրացեալքն և անթերիքն։
Անիմք և այլ յարացոյց զօրաւոր և ուղ-
ղական ՚ի նիւթականէս յաննիւթն՝ և յախ-
տաւորէս յանախտն բաղդատութի։
Բայց ինձ մաքրեցէք զմիտս և զխորհուրդս՝
զա̃մ հիւթական և ախտաւոր մտածութիս ՚ի
բաց բառնալով. և յըստակ հայեցուածովք՝
յանարատ խորհուրդն յառելով զաչս մտաց։


Բան

Քանզի՝ փեսայ քն է և կուսի եկեղեցւոյ․ և սա՝ հարսն անախտաբար 'ի բանն միացեալ։ Սա և փեսաւէրն յօհաննէս ասէր․ որ ունի զհարսն՝ նա է փեսայ։ Նոյն հարսնածուն պօղոս՝ խօսեցայ զձեզ առն իբրև զկոյս մի սբ յանդիման կացուցանել փեսային քի։ Իսկ փեսայն եկեղեցւոյ՝ զիւր ընդ հարսինն եկեղեցւոյ լինելն 'ի սոյն առակէ․ մի թէ մարթք ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ ցորքան զփեսայն ընդ իւրեանս ունիցին։ Թողում և զերրորդ երգոյն բան․ որ 'ի սկզբանէ մինչ 'ի կատարած զնոյն յեղյեղէ՝ մարմնաւորօքն զհոգևորսն ապացուցանելով․ Ո՛չ այլ ինչ այսու յայտնելով, քան եթէ զառաւելութն անչափ սիրոյն քի որ առ հաւատացեալս իւր։ Նոյն զի ճշդիւ ա՛յլ ինչ սիրոյ տեսակ յերկրաւորս առաւել քան զփեսայի և հարսին՝ որ կարօղանայր զսէրն քի որ առ եկեղեցի՝ յանդիման կացուցանել նմին իբր

յայս առակեցաւ։

Արդ՝ զոր օրինակ փեսայն զհարսնացեալն իւրեան, ոչ կամի բնաւին թերութի ինչ ունել յանդամս մարմնոյն՝ այլ ամբն կատարեալ լինել։ Այնպէս և քն զհարսնացեալ իւրեան մաքուր անձն՝ կամի կատարելապէս իւրեան նուիրել սրբութ․ զի և ոչ մի ինչ 'ի մասանց հոգւոյն, կամ 'ի զգայութեց մարմնոյն նուաղեսցէ 'ի բնաւորական իւր ներ-



գոր

գործութեան։ Իսկ որդի փեսային՝ թէպէտ և
հարսն իցէ անձեռի անդամօք մարմնոյն՝ բայց
կամի և զզարդարանս պէս պէս զգեստուց
ունել հարսինն՝ իւրաքանչիւր յարմար ըստ
պատշաճի անդամոցն ՚ի զգեստուց և յու_
կուց և՚ի մարգարտոյ և՚ի քարանց պատուա_
կանաց զի առաւել գեղեցկասցի ՚ի հաճոյս
Փեսային։ Նոյնպէս և Քս կամի զառաքինի ու_
ղին՝ ոչ միայն՚ի չարեաց սուրբ լինել՝ ըստ իւ_
րաքանչիւր մասին և զգայութե. զի այն է
անարատութի անդամոցն՝ յորժամ մեղօք
խառնուած ոչ ունիցի։ Այլ ոչ այսու շա_
տանայ. այլ կամի իւրաքանչիւրոցն՝ պէս
պէս ոսկիանմամբ և մարգարտատիպ և ակա_
նահանգէտ առաքինութբ՝ ըստ իւրաքանչիւր
յօժարականացն ներգործուեց զարդարել։
Արդ այսորիկ պարտ է ամ ումեք փութալ՝
զի մի ինչ նուազ ՚ի պատշաճ առաքինութեց
գտանիցի. ըստ որում եցոյց բանս ՚ի վերոյ.
Յ հոգւոյ և մասանց իւրոց, մտաց և շարժ_
մանց իւրոց, մարմնոյ և զգայութեց իւրոց։
Որովք և հաճոյ լինիս երկնաւոր փեսայի՛ն է_
ղեսցի. և ստասցես լապտերաւն՝ ընդ նմին
մտցէ յառագաստ երկնաւոր հարսնարանին՝
անախտ միաւորութբ յանզուգական փառս
վայելել՚ի Քս Յս ՚ի Տր մեր։ Որ է
օրհնեալ ընդ Հօր և Հոգւոյն Սբյ՝
յաւիտեանս յաւիտենից ամէն։

Տէ Աստուծէլ եւանեծ Հրեարըն՝ Աշխարհ
Սրբոյ Սրբանելուն Գրիգորի տարեգալը
եկեղեցւոյ Մ յրգուն. Աստուծել ոյն Նար-
եկեալն՝ ՍԷ Գրիգոր Նարեկացին.

Արփիական լոյս երկնային. յո՛ քո՛ հօր միածին. լցեր շնորհիւ քո անքննին. զսբ գրիգոր Նարեկացին:

Բղխեալ աղբիւր անհիւթական. անճառ հոգւովդ ծծական. մեղուցելոց լոյս փրկութե. յանցաւորաց ազգի մարդկան:

Գանձ անըսպառ անապական. աննիւթ նիւթով շարադրական. զի որք առնուն փարթամանան. շահով երկնից արքայութե:

Դեղ խոցելոց ՚ի բանսարկուէն. և անջատումն՚ի չար ախտէն. մեզ օգնական լինի և զէն. ընդդէմ այսոց նենգաձորէն:

Երանելի տր սբ գրիգոր. դուռըն բացեր մեզ հոգևոր. ռահըս ցուցեր մոաց մոլոր. բանիւ քոյին արդիւնաւոր:

Զարքայն երկնից աչօք տեսար. զհոգին սուրբ ընկալար. հօրըն լուսոյ ուր կազմեցար. յոլթըն քո պատուհասեցար:

Էին հրոյն մաքրեցար. անտես բոցովըն վառեցար. ընդ այլ խօսակցեցար. մեղուցելոց ցուցեր դու ճար:

Ընտրեալ ծաղիկս ՚ի սբ գրոց. հաւաքեցեր ՚ի մի շարոց. դեղ կազմեցեր հիւանդ հոգւոց.

գրոյ · պտղաբերեցեր ձիր մարդկայնոյ ։
Թախանձանաց բանս լսողին · բարբառեցար դու ՚ի խորին · խորտակեցեր զժանիս չարին · ըղխեաց գընդէն լեգէոնին ։
Ժամանակաւ յետին ցուցար · քան զառաջինսըն պատուեցար · յերեկոյիս լոյս ծագեցար · քան զմիջօրեայ պայծառացար ։
Իմաստութե̃ քո անքննելին · անբիծ վարուքդ եսկ ՚ի մարմնին · եղեր պարծանք տանս արամին · ասքանազեան հայկ արմէնին ։
Լուսաւորչին համանման · գրիգորիոս ալթուն անուան · զի որք նովաւ ՚ի լոյս դարձան, եւ առաւել քեւ ցնծացան ։
Խոչեալ մարմնով ընդ քե̃ · զօրհանապազ մշտ յաղօթի · գրիգորիոս լոյս գերալվի · լուսաւորիչ մեզ ՚ի հոգի ։
Ծաղիկ յաշնան ժամ յայտնեցար · անմահութե̃ հոտ բուրեցար · գրիգորիոս ծառ ծաղկեցար · պտուղ կենաց պարգեւեցար ։
Կեանք մեղուցեալ մարդկան ցուցեր · յուսահատից յոյս կանգնեցեր · գրիգորիոս բանս երգեցեր · յանցաւորաց կանոնս եդեր ։
Հաղբըն չարին անխըղձելի · որ ընդ մարդկան պատուտեսցի · գրիգորիոս սուր երկսայրի · նե̃ աղօթիւքըդ խորտակի ։
Ձայնիւ քոյին հրսկողական · սանդարամետըն ահիւ դողան · գրիգորիոս դու անընման · հողանիւթեայ բնութե̃ս մարդկան ։

 Ղամ

Պանծարափայլ ճաճանչ փառաց • 'ի գաւա-
ռին ըռշտունեաց • քան զարեգակն ե՛ աս-
տեղաց • նոյնպս բանքո ընդ այլ կտակաց։
Ճրագ եդեալ յաշտանակի • ըստ հրաման-
նի տն յն • գրիգորիոս մարմնով յերկրի •
հոգւով 'ի դասս հրեղէն գընդի։
Աշտահոսան հոգւոյն անձաւ • յարմարե-
ցեր բանիւ մեղ ձառ • գրիգորիոս մըտօք
պայծառ • փարատեցեր զմեղաց մըռայլ •
Յանեղ լուսոյն լոյս կոչեցար • յաշտանակի
մարմնոյդ եդար • եկեղեցւոյ ջահ վառե-
ցար • խաւար հոգւոց դու լուսարար։
Նախանձաւոր հարանց վարուց • ձգնաւո-
րաց նախնի դասուց • գրիգորիոս ցանկ խը-
րատուց • բանս խօսեցար վն նոցունց։
Շառաւիղօք րաբունական • առեր շնորհս
և գաւազան • քարոզ լինել որդւոց մարդ-
կան • կոխելով զօձն անդընդական։
Ուրախութեան յաւէժական • ազգըս հայոց
թորգոմական • յորժամ լըսեն զքո խօսե-
լան • որ դեղ կենաց է փրկութե։
Չարին յաղթեմք քոյին երգով • և զնա ուժ-
գին խոցոտելով • զըսպիս մեղաց մեր մաք-
րելով • քաղցրանուագ այսու դեղով։
Պարուց վերնոցն հրակերպեան • եղեր մարմ-
նով համանըման • գրիգորիոս կանգնեալ
արձան • ըռըշտունեաց ծովն յանդիման։
Ջնջեալ 'ի մէնջ զաղտս մեղաց • մեք աղօ-

Թիւք քո յառընկաց · գրիգորիոս տեղ պար-
ծանաց · ակն լուսոյ հայաստանեայց ։
Ռետորն կենաց մեզ կազմեցեր · առատապէս
մեզ բաշխեցեր · գրիգորիոս կոչ տրարբեր ·
զքաղցեալս հոգւով կերակրեցեր ։
Սէ և մաքուր բանից քոյին · այլասեռից ազգ-
ցանկային · եռափափագ սիրով եկին · և
գրծագրեալ առեալ գնացին ։
Վշտացելոց դու մխիթար · և նեղելոց
անդորրարար · որ ես գրիգոր հայր բա-
րերար · այսահարից դեղ և հընար ։
Տաղանդ շնորհաց զոր ընկալար · բազմապա-
տիկ զայն շահեցար · գրիգորիոս կատա-
րեալ այր · ծութեն ըն կամարար ։
Րամից ստեղծչին դու խօսակից · ճգնաւո-
րաց աղօթակից · վարդապետաց հանուրց
վարժից · գրիգորիոս պետ բաղձալից ։
Ցնծան մանկունք նը հաւատոյ · ընդ լու-
սակիր աղօթըս քո · գրիգորիոս դու սիւն
լուսոյ · հայաստանեայց եկեղեցւոյ ։
Ւիւանդ հոգւոցըս մարդկային · բարեխօ-
սեա ըն յիսուսին · նը աղօթից քոց կցոր-
դեն · բանք տիրամօր ծնածնեն ։
Փայտըն կենաց ըջ խաչին · և ձայն ըջ կա-
րապետին · ստեփաննոսին՝ նը գրիգորին ·
յորդոր լուսոյ զմեզ ծընողին ։
Քև ըղ քն փառաբանեմք · ըն հօր հոգւով
երկրրպագեմք · երրորդութեն փառս վերբեր-
գեմք · ծուե մի դաւանեմք ։

## Լուծմունք և Բացայայտութիւն Հոգևորից բանից Լուսաւորչայ Սրբոյ Մարտենից։

(Բան)

Ձայն հառաչանաց։ Լուծումն, Որպէս մանկաւ յառաջին ծովուն, և յոնան 'ի փոր ձկանն, նոյնպէս մեք դոչէ։ Եւ ոչ անյօդ և աննշանական ձայնիւ, այլ յօդեալ և նշանական աղօթիւք խօսի ընդ այ։ Բան, Հուր թախծուն։ Լուծ՝ Զ յօժարութի կամացն ասէ յաղօթս և զվառումն սրտին։ Որպէս խունկն 'ի կրակին զհոտն հանէ, նոյնպէս և անձն զջերմեալ՝ զաղօթս 'ի բոլոր սրտէ, և իբր զպտուղ 'ի ծառէ, զփափագ մտացն ընծայէ։ Բան, Բոլորապտուղ։ Լուծ՝ Ողջակէզն է 'ի չորից պատարագացն, որք են այսոքիկ․ Զոհն փրկութե․ Պատարագն գոհութե․ Վն մեղացն․ և Ողջակէզն որ է նուէր այ․ ՟Ա բաժինն․ Բան, Ծխոյն բուրդումն․ Լուծ՝ Որպէս ծուխն բոլ բոլ ելանէ 'ի բուրվառէն, նոյնպէս և աղօթսն 'ի մտացս։ Բան, 'Ի խորոց աստի զգայութեց։ Լծ՝ զՆերքին հինգ զգայութեանն ասէ, որք են այսոքիկ․ ՟Ա Հասարակ զգայութին, որ է հաւասար տեսութի․ բայց աննկատ է և կիսատ առանց քննութե․ Վն հասարակ տեսութի ասի՝ և ոչ բոլոր։ ՟Բ՝ Երևակայութին։ ՟Գ՝ Կարծիքն։ ՟Դ՝ Տրամախոհութին։ ՟Ե՝ Միտքն, որ է խորհրդակիր սենեակ։ Եւ զի հոգւոյն՝ երկու են զօրութիք․ գիտնական և կենդանական։ Եւ գիտնականին մասունք՝ այդոքիկ են՝ որք 'ի վերոյ գրեցան։ Իսկ կենդանականին՝ կամք, ընտրողութի, յօժարութի, բարկութի և ցանկութի։ Եւ 'ի սոցանէ՝ են որ բանականին են, և են որ անբանին։ Բանականին են՝ Միտք, Կարծիք, Տրամախոհութի, Կամք, և Ընտրողութի։ Իսկ անբանին որ է անասնոյն՝ երևակայութի, զգայութի, յօժարութի, բար-



կու

թիւն, և զանկութիւն։ Բան․ Որդին է պարարտութիւն։ Լուծ՝ Զօրութիւն հոգւոյն ասէ իւղովքն մասամբք․ այլ վերացրեցաւ ի դաւթի փիլիսոփային, իսկ ի մաքսիմոսին այս է, զի և նա հոգւոյն՝ երկու զօրութիւն ասէ՝ միոյ և բանին։ Եւ սոքա են՝ հինգ հինգ զօրութիւն ունին․ զի մտացն է իմաստութիւն, Տեսողութիւն, Ուսողութիւն, Անմոռացութիւն, և կատարելն զՃշմարտութիւն․ իսկ բանին՝ խոկումն է և գործն․ առաքինութիւն և հաւատք, և կատարելն զբարին։ Եւ սոքա այսպէս խառնին ընդ միմեանս․ իմաստութիւն ընդ խոկմանն, Տեսողութիւն ընդ գործն․ Ուսողութիւն ընդ առաքինութիւն, Անմոռացութին, ընդ հաւատոյն։ Եւ ճշմարտութիւն ընդ բարին։ Քանզի միտքն շարժել չեն առ իմաստս, և դադարէ ՚ի ճշմարտութիւն։ Իսկ բանն սկիզբն առեալ ՚ի խոկմանէն, գաւեզի առնու՚ի բարին։ Եւ երկուցն ևս կատարումն է՝ առ Աստուած։ Քանզի նա է ճշմարտութիւն, և նա է բարի․ և է՝ ճշմարիտն բարի, և բարին ճշմարիտ՝ որ է՝ Աստուած։ Եւ որ աղօթէ նոսա յանմանձնէ և յանզօրութենէ․ այլ ասէ՝ Որդին է պարարտութիւն։ Բան․ խորհրդակից սենեկիս։ Լուծ՝ Զմիտն ասէ․ զի նա է խորհրդապահ սենեակ։ Բան․ Ըստ բողքելոյն եսայեայ․ Լուծ՝ Որ ասէ, գալ ձեզ բողբքել առիւ՝ և ինձ ոչ լսել։ Բան, Զանիրաւութիւն բաբելոնի։ Լուծ՝ Զայն ասէ՝ որ աստուածապաշտքն տաղտկանոյն ՚ի բաբելացւոյն՝ այլ և ասէին․ Ո՛չ գոյ մեզ տեղի պատարագ մատուցանելոյ առաջի Աստուծոյ։ Եւ կամ զեւրեանց իսկ զվատթարանալն՚ի բաբելոն ասէ, յորոյ փարչէ՛ր Աստուած․ որպէս և ասէին․ Ո՛չ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր։ Բան․ Զոր առակ եօթանասնեկըդի երկրորդի սաղմոսին ազդէ։ Լուծ՝ Այն է որ ասէ, Եւ ցե ոչ ՚ի ճարպոյ անիրաւութիւն նը։ Բան, ՚ի ձայն վրէժխնդրութեան։ Լուծ՝ Զկատարումն այլազգեացն ասէ յաւուրն յաղթանակութեան․ որ գրեալ է ՚ի Թագաւորութեան։ Բան․ Զէն առ սուսեր՝ խորհրդոյն հողքն։ Լուծ՝ Զպատե-



րազմ

բազմ ընտանիս ասէ, որ ցանկայ մարմինս հակառակ հո-
գւոյս․ որոյ օրինակ էր ժողովուրդն այլազգեացն 'ի վր
Իսրայէլի։ Վայ ասէ պօղոս․ տեսանեմ զայլ օրէնս յան-
դամս իմ, զինեալ հակառակ օրինացն քո, և գերեալ զիս
'ի մահ։ Բան, Ըստ հին դիպուածոյն։ Լուծ՝ Ըստ հին օ-
րինացն որ ասէ՝ ակն ընդ ական․ և թէ՝ անձն որ մե-
ռցէ, նոյն և մեռցի։ Բան, Ըստ օրինակեալ զմովսէս․
զքո փրկութին յաղթող ցուցանէ։ Լուծ՝ Այն է որ
ասէ, մովսէս հաւատարիմ էր յամ տան նր․ իսկ յս̄
իբրև որդի։ Բան, Որդ գիր ասէ։ Լուծ՝ Մարգարէն
յովնան է։ Բան, 'Ի հովիտն անձուկ։ Լուծ՝ Զորն կեդրո-
նի է․ ուր կոտորեցան այլազգիքն ընդ միմեանս հա-
րեալք․ զոր 'ի վերայ ասաց՝ զէն առ սուսեր։ Բան, Ասպա-
րիսին յաղթափառութե։ Լուծ՝ Զհանդէսն ասէ և զաս-
տեանն՝ որ հանդիսեցաւ նմա և պսակեցաւ յաղթափառութ-
արքայն յուդայ։ Բան, Փոքր հանդիսարանացն։ Լուծ՝
Զարհաւիրս այնր կատարմանն՝ համեմատելով առ աս-
հագին ատեանն քո՝ փոքր գոլ ասէ։ Բան, Իրաւանց
ժամանակութեան։ Լուծ՝ Զչափ մեղացն ասէ, որ յորժամ
լցուցի՝ զբարկութին այ̄ ընդունին։ Բան, 'Ի վր իմ ար-
քայութն այ̄։ Լուծ․ Երկու զօրութի է թագաւորութեն
այ̄․ բարերարելն և պատուհասելն․ որպ ցուցաւ յար-
քայն յաղթափառն և յերկօմայեցիան։ Եւ կատարի ճշմար-
տապէս յահեղ դատաստանին քո որ ասէ՝ եկայք, գը-
նացէք։ Բան․ Մարմին եղելոյ։ Լուծ․ Այն է որ ասէ․
մի՛ մնասցէ հոգի իմ 'ի մարդիկդ՝ վասն լինելոյ դոցա
մարմին։ Բան․ Բազմաց տոկանելոյ։ Լուծ․ Զկրկնութիւն
մեղացն ասէ․ որպ շահին շահն։ Բան․ Յանդիմանողաց
ճշմարտապատումից։ Լուծ․ Որք են դպրութիք հրաշիցն
յաւուր դատաստանին։ Բան․ Զձեռին նորին վերա-
կացութիւն։ Լուծ․ Զխնամսն եէմի, և զհարուածսն այ-
լազգեացն ասէ։ Բան․ Այն ընտրութ ամօք յափեցաւ։
Լուծ․ Նոյա հաղուածն և խորախոսութին անցաւոր էր
ասէ։

ասէ․ Իսկ առաքելային և հանդերձելոյն՝ մշտնջենաւոր
Բան․ Ա՞ հ՝ գուբ՝ և որոգայթ։ Լուծ․ Եսայի ասէ՝ որ
փախիցէ յահէն, անկցի ՚ի գուբ․ և ելեալ ՚ի գբէն՝
անկցի յորոգայթ։ Ովդ և առաւելն ամոսայ ասէ, եթէ
փախնուցուք ըք յառիւծու՝ պատահեսցի արջու․ և ան
տի զերծեալ՝ հանդիպեսցի օձի։ Բան․ Աստէն գծա-
ցիելըն․ Լծ․ Զկիրս կատարածին ասէ որ՚ի վերայ գրե-
ցաւ յօրինակս։ Բան․ Ամենավարան։ Լուծ․ Զամ դի-
մաց չիմարանք է մղուորին յաւուրն աւագին․ յորմէ
զերծուսցէ զմեզ ք̃ս որդին ա̃յ․ ամէն։

## Լուծմունք Երկրորդ Գլխոյն։

Բան․ Ո՞ Յամուսեցէ՛լ քան զամաչէկ։ Լուծ․ Զչարուն
ամաչէկացուցն ասէ․ ոյք յամուսէ՛լ ընդդէմ կացին
իէլի յեւուն յեգիպտոսէ։ Բան․ Ընբժշկականս քաղաք
դրօշելոյ։ Լուծ․ Զքաղաքն ասէ, յորս եղեն նշանք
քի՛ և ոչ հաւատացին։ Եւ կամ զայն ասէ՝ որ յաւուրսն
իէլի՝ պահապան ա̃ծ էր նց և նոցա զպատկերս կայոյն
՚ի պարիսպն դրօշելին ՚ի պահպանութի քաղաքին։ Բան․
Ապստամբութե հինն իէլի։ Լուծ․ Որ ապստամբեալ
յա̃յ՝ կանգնեաց զերինջսն ՚ի դան և՚ի բեթէլ։ Բան․
Ուխտազանցութենն յուդայ։ Լուծ․ Որ յա̃յ՝ և որ ՚ի բա-
բելացւոցն։ Վա̃յ ասէ երեմիա, արդարացաւ ապստամ
բութի իէլի առ ուխտազանցութեամբն յուդայ։ Բան․
Կշտամբեալս գերեքան զծուբ։ Լուծ․ Որ նախատեալ
տարաւեցան յա̃յ և՚ի մարգարէից նր։ Բան․ Ակեքս
եփրեմ։ Լուծ․ Իբրև զորդի սիրեաց ա̃ծ զիէլ և կո-
չեաց զնա յանուն որդւոյ․ ո̃ք ասէ ովսէէ, տղայ էր
իսրայէլ և սիրեցի զնա, և յեգիպտոսէ կոչեցի զորդի
իմ։ Եւ այլ թէ՝ որդի անդրանիկ է իմ իէլ։ Զոր մե-
ծացոյց և հնազանդ արար նմա զհեթանոսս մի ուղ
ղութե իւրոյ։ Իսկ յորժամ հնացաւ ժամանակաւ՝ որ



պղծա

դժուար էր նմա առաւել զգաստանալ 'ի սէրն իւր . Նա
յիմարացաւ որպէս զի չար մանուկ 'ի կատաղութենն, և ոչ
զգայր զհաստակին իւրոյ ծնպաշտութեն զկատարելութ.
Այլ ծաղկեցին 'ի վերայ նորա ալիք ծերացն, և նա ոչ
զգայր խմանալ և դառնալ 'ի մեղաց։ Քրն. Այդու աղաւ-
նիս միշտ յիմարութ։ Հրծ. Աղաւնի եմ առէ յիմար.
և ոչ միամիտ. որ է հեզահեզ՝ աղաւնին էքաղցրատես
և հանդարտ և ընտել մարդկան ։ իսկ տուենն եփրե-
մեան՝ զկերպն միայն ունէր աղաւնւոյ։ Զի անհամբեր
լինէր, և գործովքն ոչ։ Զի փոխանակ հանդարտութե
զոր ունի աղաւնին՝ նա յիմարեալ էր. Զի բազում
անգամ տեսին զտունս խրբեանց աւերեալ յայլազ-
գեաց, և ոչ ընդդիմացաւ. որպէս և է բարք աղաւնւոյ։ Քրն.
Օձս եղեռնալին։ Հրծ. 'Ի սրբոցն՝ ես օձ ընտրեցայ
առէ, և իծից նմանեցայ. որ 'ի յղանալն՝ զհայրն, և 'ի
ծնանիլն՝ զմայրն սպանանէ։ Քրն. Վերջին հարցածոցն
էնմ։ Հրծ. Զախտաւորն առէ։ Քրն. Դրացս վասա-
հորան։ Հրծ. Որ է փականքն։ Քրն. Ծրդեալ շինուածս
խօսուն։ Հծ. Ներկել մարդս՝ որ խօսուն շինուած եմ.
կրկին բորոտել աղտեղացայ։ Քն. Քերմանն՝ օրինի։
Հրծ. Զբորոտութ տանն լինել առէ. զոր քերելն և
ընկենուլն 'ի տեղի անմք։ Քն. Օծեալ կաւոյն. Հրծ.
Որ քահանայն աղօթիւք լայր և արտասուօքն կա-
տանէր՝ և այնու ծեփէր զորմն։ Քրն. Անձարակ գտել-
յելս հնարից։ Հրծ. Թէ դարձեալ կրկնէր մեղքն, և
կամ յամառէր 'ի նոյն, բորոտէ՛ր որմն բոլոր. որ ան-
հնար էր քերելովն 'ի սրբութ կազդուրիլ. բայց թէ
ձեռամբ շինողին քակտել զբորբոսն։ Քն. Հրամանաւ
հզօրին։ Հրծ. Որ զօրէնսն հրամայեաց։ Քրն. Ըստ դա-
տաւորաց ածաշնորհին ։ Հրծ. Ածաշնորհ էր մովսէս՝
որ ած անուանել էր փարաւոնի՝ 'ի ձեռն բազմազան
հրաշիցն զորս առնէր։ Զիրս արածին բորոտութ՝ 'ի
զխաւացուցն զկ՛տ 'ի ծոց հանալոյն։ Քրն. Երկայնամիտ

և քաղցրամ ողորմ, ըստ միրն յոժարանու ձայնին։ Լուծ. Այսն Թէ, աւետարանին յորժամ հանդերձեալ էր առնել զաւետարանն՝ նախ աղօթեաց առ Ած տալ նմա առաջնորդ շնորհին մը, զի ըստ հաճոյից իւր կատարեսցէ զգործն։ Զնոյն հոգի և սա հայցէ, զի կատարումն գրոյն՝ ըստ կամացն իւր եղիցի։ Բան. Զուս աստիճանացս։ Լուծ. Զկարգ գլխոցս ասէ. և կամ զաստիճանաց սաղմոսն որ ասէ, երթալով երթային և լային. որք բարձեալ տանէին զսերմանիսն։ Նմանապէս և զաւարտ աղօթիցս հանդերձ պտղովն՝ հայցէ մեզ յայս զլնծուի աստ և՚ի հանդերձեալն։ Բան. Գովման աստղին։ Լուծ. Մարգարէն եսայի գոչէ՝ ասելով, ով թալկացելոյս և կեանք մաշելոյս։ Բան. Հրաշէկ լերանանու։ Լուծ. Զառաքինութիւն իմ ճշմարտեան ասէ ըստ քոյին կամացդ. և զսուրբ հոգւոյ իմոյ հրաշեկացն ոփ զպղինձն լերանանու. որ պայծառ է քան զոսկի։ և թէ կեղծաւորութ պղինձ եմ, ճշմարտապէս զես ռակկիացն փարուքս։

---

## Լուծմունք Երրորդ Գլխոյն ։

Բն. Ո՛ր հանդերձելոցն ճառից լուսաբանէն։ Լծ. Զառաջիկայ ճառսն ասէ՝ զորս հանդերձեալ է ասել. որք յայտնեն զիւր մարգարէութիւնն։ Բան. Զամենեցունց ունի զկրից պատուհասմանց։ Լուծ. Գիրքս այս ասէ՝ զիմ հասակի զկիրս ճգնաց՝ նշանակեալ ունի ՚ի դէմս իւր։ Բան. Առ նախնին ժամն։ Լուծ. Տղայութե հասակն է։ Բն. Կոչեցեալ չափու արբունն։ Լծ. Երիտասարդական հասակն է։ Բան. Առ որ ՚ի կատարած ծերութն։ Լուծ. Ծերութիւն է. զոր առակ աւետարանին ասէ ընդ առաւօտս վարձել զմշակսն՝ և որ ՚ի կարգին։ Բան. Առ ինքնարգոյ բարձրոյոնն։ Լուծ. Որ ՚ի բնէ առաքինութն բարձրացեալ է. և կամ այն՝ որ զհայր

տուԹեն՝ 'ի բնութե ունիս: Բռն. Եղեռնագործ: Լուծ. Չարագործ. որ է լալոյ արժանի: Բռն. Ախտ սրբանուէր. Լուծ. Արտասուքն են: Բռն. ԵԹէ գրեսցի ն՚ի փրկութիւն կարգեսցի: Լուծ. Թէ ումեք սոխա փրկութիւն եղիցի. և Թէ ոք սիրով և յուսով զգիրս գրեսցէ և տասցի: Բռն. Համբարտակին փառաւորեւ: Լծ. Աշտարակին սրբութե: Բռն. Յուսոյն ձգարանն: Լուծ. Լար յուսոյն՝ որ է հաւատն: Բռն. Անձնական ցուցոյ: Լծ. Մահ հոգւոյն է: Բռն. Ընդլուղեալ: Լուծ. Ընկղմեալ: Բռն. Պահպանակն փառաւորութե: Լուծ. Հաւատն յուսովն կամ պահպանուԹեն հրեշտակաց:

## Լուծմունք Չորրորդ Գլխոյն:

Բն. Իղձալի էր, բառ գրոյն: Լուծ. Զյոբայ անիծանելն ասէ զօր ծննդեանն:

## Լուծմունք Հինգերորդ Գլխոյն:

Բն. Յըմբոշխնելն: Լուծ. 'Ի ծամելն: Բռն. Մովսեսեան յանդիմանուԹեն: Լուծ. Այն է որ ասէ, եկեր յակոբ և յագեցաւ և անգոսնեաց զսիրելին:

## Լուծմունք Վեցերորդ Գլխոյն:

Բն. Որդւոյն ամասեայ: Լուծ. Որ է արքայն ոզիա՝ որ խունկ եած 'ի տաճարին և բորոտեցաւ: Բռն. Ամպրոպք: Լուծ. Խռովութե և վրդովման անուն է. որպ և յանկարծ է տեսանել յորժամ որոտմունք լինին և կայծակունք: ՎաԹսուներկու իր ցուցանէ սուրբս յաշխարհէս. և համեմատէ 'ի տեսակս մեղացն՝ որ 'ի բնութիւն մեր մըտուցին. միայն զգլխաւորսն յիշելով և զմասանցն զանց առնելով, 'ի մտաւորսն ապաստան արարեալ: Եւ այն որ ասէ՝ պատռեցաւ փարիսեցին, ոչ Թէ պատռեցաւ՝ այլ այնու զոր ինչ ասացն և արարեալ

էր՝ պատուոյ արժանի էր։ Թէպէտ փոխեցաւ. Նմա-
նապէս և ոգիս Թէև պատուհասեցաւ, այլ կամք նմ-
այն էր՝ Թէ ով խունկ մատուցանեմ. և ես զես չգի-
տեմ ասէ նոյն գունակ փառաւորել՚ի սէրն ով՝ վայ ինձ
հազար բերան։

---

## Լուծմունք Եօթներորդ Գլխոյն։

Բան. Մաշտոցէն։ Լծ. Անզէն լինիմ յուսոյ և հաւատոյ. ոչ զէն են յաղթող ընդդէմ չարեաց. որոց ինքնածինք են յանձնէ և՚ի բնութենէ, և որոց արտաքուստ՚ի սատանայէ. որք վերագրեցան՚ի վեց ձաւն։ Բն. Մահողկուզեան։ Լուծ. Ողկոյզն քաղցր և բարի է՚ի տես և՚ի համ. և զուրախարարն բերէ գինի. այլ ես խաղող մահաբեր եմ ասէ։ Ով և ասեն Թէ՝ յերկբա-տան՝ որ է ամէտի՝ այնպէս խաղող կայ, որ Թէ մարդ ուտէ, առ ժամայն մեռանի։ Բան. Երանութին ընտրութե. Լուծ. Զինն երանութին ասէ. որովք՚ի բնութէս մերմէ ընտանենամք ով։ Բան. Կկեցի։ Լուծ. Ով սատանայական զԹեղն կկէ և սեղմէ։

---

## Լուծ. Ութերորդ Գլ.։

Բան. Պղտորելի։ Լծ. Դողալի և սարսափելի։ Բան. Անըմբռնելեացդ։ Լուծ. Անհամար և անտանելի։ Բան. Ջառածեալդ։ Լուծ. Խոտորեալդ։ Բան. Դարձեալդ։ Լուծ. Պարսաւեալդ։ Բան. Խոհեմականդ։ Լուծ. Մրոտ և ձենձոտ։ Բան. Աղբշխադ։ Լուծ. Որկորամոլդ. որ է կերող և արբեցող։

---

## Լուծ. Իններորդ Գլ.։

Բան. Պժգալ։ Լծ. Կշտոտդ։ Բան. Ոգորիմ։ Լուծ. Ընդդէմ կամ և հակառակիմ, Բան. զՅոյզս մտաց։ Լուծ. Զշարժումն խորհրդոյն ասէ։ Բան. Մոգտանք։ Լուծ.

Բն. Ո՛րպէս մատնէ կորստեան։ Լուծ. Զ յուսա-
հատութիւն ասէ՝ և զհամապազորդ մեղանչելն անա-
նաբար. քանզի թէ մարդ յուսահատի ապաշխարել՚ի մե-
ղաց, նմա վնասակի հոյհոյութիւն հոգւոյն սբ. որ անկար
համարի զնա՝ թողուլ զմեղս։ Թէպէտ և այլ ոչ առնէ
զմեղս, բայց՝ զի ոչ հաւատայ փրկութեան, ընդ միշտ մե-
ղուցեալսն կորստեան մատնի։ Բն. Զ՛նոյն վհատութիւ
ծնունդս արտադրեն։ Լծ. Զմի և զնոյն երկուեալ յա-
ռաջածեն. որ՚ի վեր հաւատոյն և՚ի սիրոյն սբ անկանիլ
տան։ Բն. Այլինկար։ Լուծ. Անկար։ Բն. Պատճառեղի-
նայ։ Լուծ. Անամնոց։ Բն. Առաստան։ Լուծ. Պարսն։
Բն. Ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ։ Լուծ. Ընդ
յուսահատութիւնն համապազ փարի և շողոքորթէ
սղնայ։ Իսկ երկրորդումն՝ որ է մոլեգնաբար մեղան-
չելն. այս է խելաթափիլ՚ի մեղսն։ Ո՛րպ ասէ սբն բար-
սեղ թէ՝ ըմբռնեալքն ՚ի մեղս՝ ՚ի մտաց ևս անկ. ինե
Բն. Լափլիզող դժոխորովայն։ Լուծ. Խնծն է՝ որ զար-
կեն անասնոյն ըմպէ և զլաշն թողու. և լափելով
զարիւնն՝ զդժոխ որովայնն լնու պարարէ։ Զի որպ
դժոխք և կորուստ և ծով ոչ ասացին շատ, նմանապէս
և որովայն գազանին թէպէտ և պարարի՝ արեամբ.
բայց ոչ յագի։ Ա յապէս և սղնայ համապազ զմեղս
առնել տայ մարդկան, և ոչ շատանայ. Բն. Հեծանաւ.
Լուծ. Հաստ բրով մեղաց գանեցայ՚ի սատանայէ՝ մինչ
՚ի մահ։ Բն. ՚Ի վեր.քան զորոյ։ Լուծ. Զնախնիսն ասէ.
զորս պօղոս դրոշմաւք. և նոքա ամենեքեան մեռան.
և ենովք միայն յանմահութիւ փոխեցաւ հաւատովն.
Բն. Անտեսիցն ձոխութ։ Լուծ. ՚Ի հեռուստ տեսին.
և ցնծացան հաւատովլ և յուսովլ։ Բն. Ըզ չափն ընտրո
կանացն։ Լուծ. Զթիւ ընտիր և բարի մասանցն և
համբերեացն սբ ընտրեցի։ Բն. Նախնի զահերեց.
Լուծ. Զհաւատն ասէ. ա՛ պօղոսի թէ՝ առաջս երեքեան

մի են. Հաւատ, յոյս, սէր, յԵրրորդութեն փառաւոր,
Հաւատ է՝ Հայր. Յոյս, Որդի. Սէր, Հոգին սուրբ։
Որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն։

---

## Լուծ՛՛ ԺԱԵրորդ Գլ՛՛.

Բան. 'Ի սկզբնաւորն խմեղելուն։ Լծ. Զկղմայն յարգանդի ասէ։ Բան. 'Ի նորոգս այս փոխադրութե։ Լուծ. Այսպս հաւատամ ասէ արդարանալ 'ի մեղաց. ոտք զնկարիլն յորովայնի։ Բան. 'Ի ձեռն ձեռնի։ Լուծ. 'Ի ձեռն յի. որ է ձեռն այս հօր։ Բան. Որ ընդ մարմնա այէս ծիծաղելն՝ առ նմին հեծէ։ Լուծ. Մինչ ոչ է մըտացեալ մեղաւորն զերկիւղն այս յորժամ յորդոր ծիծաղի. յոգոց հանէ դարձեալ և հառաչէ։ Բան. Նշխար նշուլից։ Լուծ. Մնացուած յուսոյն. Բան. զՀուրն նշանաւորէ։ Լուծ. Հուր տաճարին որ հ ամ հնաց 'ի սիւյին Ջրհորոյն. Իբր զ'ի քուն եղեալ մարդ՝ որ ասին ունի զար. Մուրնոյնպէս և յոյսն 'ի սիրտ մեղաւորին մնացեալ զօրէ՛ 'ի փրկութե դարձին։ Բան. Թաղծելոյ։ Լուծ. 'Ի խոր տրտմելոյ։ Բան. Հանդերձի։ Լուծ. Պատրաստի։ Բան. Երրեմն աղայմամբ։ Լուծ. Զորս ազգ խունկ խառնեալ աղայն 'ի սպաս խորանին. այսինքն՝ Կնդրուկ Քաղբան, Ծաղոտկէն, Ճեռաւոր։ Նմանապէս և մարդս չորից առաքինութեն՝ որ է խոհեմութե, արիութե, ողջախոհութե, և արդարութե խառնի ընդ երեք առաքինութիս ոծոյին. որ է հաւատն, յոյսն, և սէրն։ Եւ յորժամ այսոքիւք մաղչի ոք աղաչել զԱծ, քան զամ անուշահոտ խունկս անուել հաճոյ և պարարունի է այս։ Բան. Փոքրն եղխազար։ Լուծ. Որդին աչարօնի. որ ոչ մեռաւ ընդ աւազ եղբարցն։ Եւ կամ զայն եղխազարն ասէ՝ որ 'ի յԵրրորդ գիրս մակաբայեցւոցն առաքինացաւ հաւատովն և ամ ժողովրդեամբն ապրեցաւ 'ի կոխելոյ փղայն։ Բան. Զօրինակին տուչութե։ Լուծ. Ենովք որ տուժեաց զուգանս նախահօրն մեր՝

պահօքն խաղալիք, և յերկինս փոխեցաւ։ Բառ. ՚ի բուսոյ տհաս հասակին։ Լուծ. Նոյն հարուածքն են, որք էին ՚ի դստերացն կայենի. որք հաւատով ՚ի նոյ և յորդիս նորա յարեցան և ոչ կորեան։ Կամ Թամար և Հաւքերաս, որ է ռախաբ՝ և Հռութ, որք նախամայր լինելով քրի ՚ի կանայն երկնից համբարձան։ Բառ. Զմերս ընթադրեալ։ Լուծ. Նախքան զօրէնսն՝ արկայեալ ոմանց՝ յաղթեցին մեղաց և սատանայի. և զբնութիս փոխադրեցին ՚ի նմանութի սկզբնատպին։ Որչափ և առաւել յաւուրս քո. որ ուխտ խաղաղութե և կենաց եդեալ է ընդ մեզ։ Բառ. Ցարդարայուցանելն զմեզ այ։ Լուծ. Զշնորհացն քո ասէ, որ խորովանման պատարագաւն զմեզ արդարացուցանէ։

---

## Լուծ՟ ԺԲ երորդ Գլ՟։

Բառ. Յառաջնում զղջմանն։ Լծ. զվեցերորդ ժամո բանն ասէ՝ որ զտեսակս մեղացն թուեաց։ Բառ. յԱրգահատել։ Լուծ. Գթով խնամել. որ մայր զորդին գորովելով խրատէ, նոյնպէս և ես։ Է զի ՚ի յուսոյ մնաց խինդ, և է որ ՚ի խնամոցն այ վստահացայ։ Բառ. Կոչումն ընտանի։ Լուծ. Որ հայր կարդամ զած։ Բառ. Մահացելոյս է կենդանութի։ Լուծ. Ոչ թէ վն ապագայից պարգևացն ասէ աղաչեմ զած՝ որ զվարձկանականն սէր յուցանէ, և ոչ վն զի ազրեցայց ՚ի մեղաց և փրկեցայց ՚ի տանջանաց կարդամ առ նա, որ ծառայինն է նշանակ։ Այլ՝ այնպէս աղաչեմ զած՝ որպէս կենդանին զկենդանութի և զգայականն զզգայութի, և շնչաւորն զշունչ։ Զի որ օրինակ՝ կենդանին առանց կենդանութե ոչ՝ կենդանի, սոյնպէս և ոչ ես թարց այ։ Այս է սէրն որդիական՝ որ ըստ էութե խորում պաշտեմ զած։ Բառ. Յուսոյն հանգուցիչ։ Լուծ. Որպէս երկուքուղ հանգուցիչ միանան, սոյնպէս ասէ տէր՝ ոչ թէ ես յուսով հանգեալ եմ և կցեալ յած՝ թէ շնորհս ընկալայց, զի յայսն պար-

գնայ մի՞ է. այլ միրով կայեալ եմ՚ի նաւ։ Բան. Խօլակաւայ։ Լուծ. Յիմարական ցնորից։ Բան. Բուրմանէ հաստոյ։ Լուծ. Կանքս ո՞չ բուրվառ, մաղթանքս ո՞չ խունկ, հաւատս ո՞չ հուր. որ բուրէ զանուշահոտութի ՚ի հաճոյս կամաց ընդունողին։

## Լուծ" ԺԳ երորդ ԳԼ"։

Հարց. Ո՞ր առ մերն է ծանօթութի։ Լծ. Զդաւանութի Երրորդութեն ասէ։ Բան. Բարեհրամանքս ակնարկութի։ Լուծ. Որ երանեաց զպետրոս. և ես զայն ուսայ և հաւատայի ո՞չ զնա. զնոյն և յիս ակնարկեա։ Բան. Ընդէր խոկ իցեն։ Լուծ. Թէ և ՚ի վեր իցեն չարիքն իմ քան զօրէնս բնութե, բայց նուաղ լինին առ քոյդ երկայնմտութիւն։

## Լուծ" ԺԴ երորդ ԳԼ"։

Բան. Ա՞ռաջուն պաշտօն։ Լծ. Օրէնքն մովսիսի՝ ըսպանանէր զմահու դատապարտելն և ոչ կեցուցանէր. սա է քահանայն որ եսես և զանց արար՝ ահարոն իսայնօքն։ Իսկ ղևտացի՝ զոր կարապետն ասէ. զի սկսեալն ՚ի մովսիսէ՝ ՚ի նա կատարեցաւ։ Բան. Սատակիչն օրինաւութե։ Լուծ. Օրէնքն և բանն յովհաննու վեր քան օրէնսն արձանացաւ. այն որ ասէ, ահաւասիկ տապար ՚ի տակ ծառին դնի, հատանել զոչ բարի գործօղսն։ Բան. Յառաջ քան զփորձ առակլյեցն։ Լուծ. Զփորձեճղևորն, այլ տիրաւ հատանէ. ո՞վ տէր յա՞ մի՛ երևայի այն ՚ի քեզ։ Բան. Պահպան անուն ասորեստանւոյցն։ Լուծ. Զսամարացիսն ասէ, որք տեղապահ անուանեալն եկին. զի հարիւր ամաւ յառաջ քան զերուսաղէմ՝ գերեցաւ իէլ ՚ի Թագաւորացն ասորւոց. մնաց պղպարտ երկիրն իէլի անմարդ. վ՜ս ասորեստանեաւ Թագաւորացն եկին պահապան տեղեացն. յարոյց ած ՚ի վերայ նց զգազանս վայրի որք սպանանա

Նմանէին զմտերիմս յուսալեաք յիւրեանց ծերք և անպիտանք՝ որք ոչ գերեցան, առեն ցասուրկին․ անհնար է ձեզ կեալ՚ի տեղիս՝ եթէ ոչ պաշտէք զած երկրիս․ և նոքա թլփատեցան և մոլին ընդ հրէութ․ Բայց ոչ խառնեցին հրէայքն ընդ սամարացիսն․ որոյ ասաց կինն սամա_րացի․ և հրէայքն զքո առեին և սամարացի կոչէին․ զի և նր իսկ ճշմարիտ պահապան լինել։

## Լուծ" ԺԵ Երորդ Գլ"։

Բռն․ Պղծոց լերանց վերադրել․ Լծ․ Զայն ասէ՝ որ ԺԷ կանգուն վերացաւ ջուր հեղեղին առ նոյին․ Բռն․ Հակիրճ հասուցմամբ․ Լուծ․ Որ պտղնկին և ան_դամալուծին տայեր թողեալ լիցին քեզ մեղք քո․ Բռն․ Ելս քաւութ․ ըստ մարգարէին․ Լուծ․ Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու թողցես․ Բռն․ Ա երկարաձիգս անօրէնութ․ Լուծ․ Զոր եսայի ասէ․ վայ այնոցիկ՝ որք ձգեն զմեղս իւրեանց իբրև երկայն պարանաւ․

## Լուծ" ԺԶ Երորդ Գլ"․

Բռն․ Հ Նոստրրափակ․ Լծ․ Տարերքդ մի զմի փակեն_են․ ջուրն զհողն, և օդն զջուրն․ և հուրն զօդն․ և եթերն որ է հաստատուն՝ զհուրն․ ջրեղէն կամարն՝ զհաստատութ․ և վերին արփին զջուրն․ և այն՝ տեղիք է հրեշտակաց և կայանք որդւն․ և ած է՛ր վր ամ․ Բռն․ Թափանցանցութ․ Լուծ․ Որ հուրն յերկաթն, և լոյսն ընդ օդ, այնպէս և ած յամ էակս․ Բռն․ Ա սակ նախ_նումն․ Լուծ․ Ասաց թէ յիշեա զխ յողորմութ քում և մի յիրաւունս․ ՚ի քաղցրութ և մի յարդարութ․ Ողոր_մութի և քաղցրութի առաջին է․ իսկ իրաւունքն և արդարութ՝ վերջին․ Բռն․ Հակառակ քո համբարձե_լոյն․ Լուծ․ Վն մոլորմ ասէ․

 Լուծ"

Լուծ'' ԺԷ Երորդ Գլ''։

Բռն. Ո՛չ մինչ անձամբ միայն բացակայութ։ Լուծ. Սա-կաւ հեռի էր տունն ուր էր քո՛ ՚ի տանէ հարիւրա-պետին. և ես հաւատամ ասէ և ոչ սուտ ինչ միջոց լի-նիլ յարդարայուցանելն զնա ոյ։ Բռն. Դատակնիք։ Լուծ. Այն է որ զդատն կարեն և բանիւ կնքեն ան-դարձ լինել. որ է վճիռ։

Լուծ'' ԺԸ Երորդ Գլ''։

Բն. Փայտս խոնարհ բանաւոր։ Լծ. Եսայի՝ երե-միա՝ և եզեկիել՝ յօրինակ քի՝ անկեալ և բարձրա-ցեալ ասեն զմայրսն լիբանանու։ Բռն. Յանելից գոյա-ւորութի։ Լուծ. Զաչս կուրին ասէ, զոր Նոր սուրբ կաւոյն ՚ի թքոյն. և է իր կազմեաց ՚ի բժշկութի աչաց կուրին. Զարտեւանունսն. Զթարթափսն. Զկոպսն. Զայխտակույն. Զսեւուցն. Զպուպուկսն. Զբիբսն, որ է լուսնկալն։ Բռն. Յերկուց կոյից միայնակողմանբ։ Լուծ. Երկու են ոտք յոր կայացեալ է անձն. և երկու կողմն մինչ ՚ի ստամոքսն։ Յորժամ մի կողմն վնասի միակողմանի ասի։ Բռն. զհետևականն բարձողութ։ Լուծ. Ոտքն են։ Բռն. Զփառաբանարան հաստոճածոյ։ Լուծ. Յեղանել զլիճին խօսեցաւ համրն։ Բռն. Քքուա-նայ։ Լուծ. Զայլ քուէրցն ղազարու ասէ։ Բռն. Անե-րևութերակ վերակ առաջետ գարշութե։ Լուծ. Զջրգողեալն ասէ. որ լինի ՚ի խանգարմանէ բշտին՝ և յուռուցմանէ մարմնոյն։ Զի այն երակն որ զջուրն ՚ի բուշտն տանի՝ խափանի, յայնժամ ջուրն ՚ի բոլոր մար-մինն կու ցրուի. և սակաւ մի ուռոյց կուտայ ՚ի մար-մինն. և լինի մարդն գարշահոտ և միշտ ծարաւի. և շատ խմելով ոչ լիանայ։

Լուծ'' ԺԹ Երորդ Գլ''։

Բռն. Ոմրուրս անօրէնութե, Լծ. Եսայի ասէ, վայ



որ

որ արբեալ էք՝ և ոչ ՚ի գինւոյ։ Եւ դաւիթ ասէ, բա-
ժակ ՚ի ձեռին տն՝ գինի լի՛ անապակ. որ է բարկութե
նշանակ։ Որպ ասաց վս Նաբուգոդոնոսորայ, բաժակ
բարկութե՛ ՚ի ձեռին իմում, և ում կամիմ արբուցանեմ
զնա։ Այս է ասելն, խոնարհեցոյց յայսմանէ յայս. որ
ցուցանէ զայժմու պատուհասն՝ որ գայ հրամանաւն
այ ՚ի վր աշխարհիս։ Զոր օրինակ՝ զպարզ գինին խմեն.
և տապա ՚ի մրուրն հասանեն. նմանապս և այժմու պա-
տուհասս՝ պարզ գինի է առ յաւիտենին տանջանսն.
և այն՝ մրուր որ է բոլոր։ Վս աղաչէ ոբս՝ այսրէն
թափել զայն, զի մի անդէն արբուսցէ։ Բռն. Տարտա-
րոսն, Լուծ. Հուր գեհենին է և սատանայինքն. որ
մին առ մի տարեալ են. և մի առ մի տան զմեղաւորն
՚ի պատիժս։ յՕրինակ նորին է շինել սանդափիլյսն
՚ի փռանկս։ Բն. Տպաւորագոյն են։ Լծ. Պատիժքն
զորս ածես ՚ի վր՝ փոխանակ մեղացն, նմանք են և
ազգակիցք խմոյս գործոյ։ Բն. Թողի զտեղի քո՝
նր, ըստ գրոյն։ Լծ. Որպ ասէ սաղմոսն՝ եթէ ոգի
իշխանին գայցէ ՚ի վր քո՝ մի՛ թողուր զտեղի քո նր.
այսինքն սղնյի։ Բն. Յետուստ գաղտնեաց առակա-
նաց։ Լծ. Զոր եսայի ասէ, բա՛ց զպրունս քո. և յայտ-
նեսցին ամօթ քո։ Բն. Զմեղաց փոշիս, ըս աւետոցս
Լծ. Այն է զոր ասէ մարգարէն՝ յոտն կաց և թօ-
թափեա զփոշի քո ենմ։

## Լուծ.՛՛ Քառն Երորդ Գլ՛՛։

Բն. Ընդդիմութիւն չափոյ։ Լծ. Գիտութ ըստ անգի-
տիւն չափոյ մեղաց։ Բռն. Զատակեցայ։ Լծ. Մոլո-
րեցայ, յիմարեցայ։ Բռն. Ամպարհաւանեցայ։ Լծ.
Ո՛չ ՚ի բարին հաճեցայ, և հպարտացայ։ Բն. Զոր չէ՛
աստ գրելի։ Լծ. Ասէն թէ ոբս՝ ետես գ.քն աչօք բա-
ցօք, կամ թէ՝ զամ խորհուրդ փրկութ մերոյ յոյ՚ իբր
զտեսիլ համարեցաւ։ Բն. Յաղօթարանն վայրի։ Լծ.



Ան

Անձամբս յեկեղեցին լինիմ ասէ և մօրս յամօթե-ղիս շրջագայիմ ։ Բն․ Ափիգած անկարկատելի ։ Լծ․ Դաստառակն կտաւի՝ զոր թաղեց Մարգարէն Երե-միա բանիւ տն ՚ի գետն Եփրատ․ և յորժամ առաց առնուլ՝ էր խղեալ անկարկատելի․ և ասէ ցնա տր՝ այնպէս եղիցի ժողովուրդն իմ։ Բն․ զհանդերձս ինչ ապաշխարից։ Լծ․ Որ է հալաւ դաշտանի արենա-թաթախ։ Բն․ Ջորրորդ չափն անօրէնութե․ Լծ․ Ամ-մովսէս ՚ի դիմաց այ, ՚ի վր երից անօրէնութեցն և՚ի վր չորից ոչ դարձայց ՚ի բարկութէ։ Բն․ Ռեփանայ բաբելոնականին։ Լծ․ Բաբելացւոց պաշտօնածն է․ որպ ասէ սրբն ստեփաննոս, և աստղն այն հռեմփայ։ Բն․ Յուցաւ ՚ի սինայ ․ Լծ․ Այս կռապաշտութե նախ ՚ի սինայ ցուցաւ ․ արարին (որպ ասէ) որթ ՚ի քորեբ․ Ջի սին՝ գլուխ լերին է․ և քորեբն՝ որ է եզք, ստո-րոտն․ և միով անուամբ ասին ։

Լուծ" ԻԱ Երրորդ Գլ"։

Բն․ Ո՛չ կացի երբէք ՚ի յոտս մարդոյ։ Լծ․ Որպ փաղանն դանիէլի տեսլեանն՝ որ եկաց ՚ի վր ոտից մարդոյ և սիրտ մարդոյ տուաւ նմա․ և նա ոչ կացի։ Բն․ ՚ի Նա-խակարդելոցդ։ Լծ․ ՚ի Յառաջկարգելոց մեղացն։ Բն․ ՚Ի խիթմանէ ։ Լծ․ Յահէ որ կու վախեմ։

Լուծ" ԻԲ Երրորդ Գլ"։

Բն․ Րուղական։ Լծ․ Տրմղական։ Բն․ Ամպական․ Լծ․ Դատարկ և ունայն։ Բն․ Կամակոր։ Լծ․ Որ կա-մաւ կորանայ ՚ի մեղս ։ Բն․ Անկցելի ձորձով ։ Լծ․ Զաւրգածն ասէ, որ վերագրեցաւ ՚ի քսան ձաւլին․

Լուծ" ԻԳ Երրորդ Գլ"։

Բն․ Խնեթիւ խոցոտեալ։ Լծ․ Նեղեւ ՚ի խղճէ մտաց․



յետ

յետ հեշտութե մեղացն։ Բն. Զանկոխածն հանդերձանաց մահու։ Լծ. Զսկզբնական մեղքն ասէ՝ յոր հեշտութն շաղախի։ Բն. Խմանալեքն վերաւորեալ։ Լծ. Հոգին վշտանայ յետ մեղացն։ Զի նախ քան զհեշտութն բանականութն կորնչի, և քան զմնասուն լինի. իսկ յետոյ 'ի միտս գայ և հեծէ։ Բն. Եւ 'ի մտացն մարտ՝ 'ի փոքունցն յաղթահարեալ։ Լծ. Յորժամ 'ի խղճէ մտացն յուսահատի՝ 'ի փոքունց արկածից խաբողայ յաղթահարի. այս է՝ փոքր մեղացն ևս ընդդէմ չկարէ կալ։ Բն. Եւ 'ի թառանչ սրտին՝ հագագին դուռն հրդեհեալ։ Լծ. 'Ի հեծութէ մտացն և 'ի հառաչմանէ սրտին, բերանն ցամաքի։ Բն. Աներեւելեացն ոտք։ Լծ. Անհամար տուգանքն՝ որ է յաւիտենից տանջանքըն. և այն երևի յայս կեանս մեղաւորին՝ խղճիւ մտացն տրտմութեամբ։

---

## Լուծ. ԻԴ երրորդ Գլ.։

Բան. Պոյղն պալար՝ փայլունակ. Լուծ. 'Ի մարմինն յորժամ նշան լինի սպիտ՝ շիթ և կամ պալար՝ որ է միատարր լինացեալ. սպիտակն՝ կամ պաղպաջն՝ որ է պսպղուն և կամ շիթ շիթ սպիտակ ասա և անդ։ Զատուսցէ զնա քահանայն ասաց օրէնքն՝ երկիցս է օր. թէ ոչ տարածի և տեղն ոչ խորանայ, նշան է. և թէ յետոյ կրկնի, բորոտ է։ Պղծեսցէ զնա. այսինքն. պիղծ համարեսցէ զնա քննելն մինչև ողջասցի։ Եօթն օրն՝ այս կենցաղս է. որ այս կենօք մարդն ապաշխարէ կրկին ընդ մեղացն. այս է՝ թէ տարի մի 'ի մեղս է կացեալ՝ երկու ամ ապաշխարէ։ Իսկ թէ տարածի յամ մարմինն՝ ոչ է. որպէս թէ բովանդակ մարդն մեռաւ մեղացն և սպան զանդամս զերկրաւորս։ Եւ թէ ուրեք կենդանութի երևի՝ պղծի դարձեալ. որպէս թէ՝ մեղքն կենդանացաւ և ինքն մեռաւ մինչև դարձել ջիւխի 'ի նոյնն։ Բն. Մնացուած ինչ սպահեալ։ Լծ.

Պէրք մեղացն յետ խոստովանութեան ։ Բն. Նախուհնակ ։
Լծ. Յայն մեղացն որ նախ կայր յիս ։ Բն. Երկդիմի
կերպին ։ Լծ. Հոգւոյս և մարմնոյս ։ Բն. Սպանեալն՝
կրկին ինձ կենդանացաւ ։ Լծ. Մեղքն՝ որ քնէ ընդա
նաւ ։ Բն. Լաստին դադարք ։ Լծ. Լաստ՝ զնաւն ասէ,
և դադարք՝ զնաւահանգիստն ։ Բն. Ոտնոցն յարկին
կառուցման ։ Լծ. Ողնափայտն է. ոտք և հոգին՝
զմարմինն ։

---

## Լուծ″ ԻԵ երորդ Գլ″ ։

Բն. Ընկերն՝ ՚ի մաւնէ ։ Լծ. Նախաձառեալքն ։ Բն.
Երեքալեանն ։ Լծ. Յերեք դիմաց հողմոյ. կամ է կից
ալիքն որ պատահին բարձրացեալ և ուռուցեալ մի
զկնի միոյն ։ Բն. Կայմն ։ Լծ. Սարինն է. ք, սիւնն.
կամ որ ՚ի ծայր սեանն է խոտորնակ ձողն, որ պարզէ
զկտաւն ։ Բն. Թռչարանն ։ Լծ. Արմինն է ։ Բն. Առա-
սանք ձգողականացն ։ Լծ. Չուաններն ։ Բն. Տեսարան ։
Լծ. Սեր նաւապետն նստի և դիտէ ։ Եւ կամ նշանն
է նաւին. ըստ այնմ որ ասէ, փոքր նաւ մի՝ որ ունէր
զդեոսկուրացւոց նշանն ։ Բն. Ապաւանդակն ։ Լծ. Հաստ
ձողանն է. զոր մալուխ ասեն ։ Բն. Լուծք ստոռարք ։
Լծ. Հաստ փայտն է՝ յորոյ վր նաւն է. և ՚ի քիթն
կից են ՚ի միմեանս ։ Բն. Սամիքն ։ Լծ. Ծակ փայտն է
ուր ղեկն ցրցեալ է. և կամ զղեկն ասէ ։ Բն. Լաստ
հիմանն ։ Լծ. Յատակ նաւին՝ ուր սիւնն հաստատի ։
Բն. Ջատին հաստոռած ։ Լծ. Մածուցածք ողնափայ-
տին ։ Բն. Գոգ ամփոփմանն ։ Լծ. Մէջ նաւին ։ Բն. Խելք
շօթանցն ։ Լծ. Բեկանն և շուրթն նաւին. ըստ այնմ
թէ յո ննջէր ՚ի խելս նաւին ։ Բն. Պաշպաջուռնք ։ Լծ.
Գեղեցկութիւք որ ՚ի նաւին լինին տախտակամածք՝
աթոռք և մահիճք ։ Բն. Վանդակապատ ։ Լծ. Որ ՚ի մէջ
նաւին միջնակ լինի ածած՝ և բաժանած տուն ՚ի
տանէ ։ Բն. Յատակեալ ։ Լծ. Ամնպես անկաւ, որ



յա

յատակն երևեցաւ։ Բն. Գաղաւորակ։ Լծ. Ջմահիճքն
ան։ Բն. Դեգերեալ։ Լծ. Ժնկուեալ և շիճարեալ։

---

## Լուծ" ԻԶ Երորդ Գլ"։

Բան. Ո՛չ բնաւին մեռեալ աշխարհի։ Լծ. Ոտք կողմնա տար այրն՝ որ մատեաւ առ կայսրն յուլիանոս և հայցեր ողորմութի, և նա ասաց նմա թէ՝ զոկէլ ես զարեգակն և զգերեզմանն։ Ջի կխոտն կենդանի էր և կխոտն ՚ի գերեզմանի. և ես նոյնպէս եմ առ ներս՝ աշխարհի և ոչ։ Բն. Ո՛չ ջերմ սուկ և ոչ ցուրտ։ Լծ. Գաղջ և աղտաղտին երկիր. ոտք առ տեսիլն յոհաննու՝ 9։ Բն. Երկս առելի։ Լծ. Հոգւովս մոգքս, և մարմնովս։ Եւ դարձեալ՝ երեք զօրութք հոգւոյս. բանիւ, ցասմամբ, և ցանկութբ։ Բն. ՚Ի մի գիծ աւարտել։ Լծ. Ջամէն ստն յետք՝ ՚ի մի գիր աւարտեալ՝ կրկին շուք տայ բանին կարգայ։ Բն. Կշիռ մի ունկի։ Լծ. Ունկ՝ յարդի մղեղն է. որ մղղնաձև պատել է զհատն։ Բն. Ալ յեղանակ ինձ։ Լծ. Շոջէ զբանն. զի այս ութ տունս որ վերագրեցաւ, յառակ քանքարաթաքուցին է։ Բն. ՚Ի նոյն պայմանի։ Լծ. ՚Ի նոյն սահմանի, որ յետքն ամենի՛ լինի. և ոչ թէ զողբս փոխեցի, այլ՝ ողբ ՚ի վր ողբոյ կրկեցի։ Բն. Անհատական թիւ։ Լծ. Ջի ոչ հատանի տուն ՚ի տանէ ՚ի չափն. այլ ինքն ՚ի վանկ և՚ի հեգ և՚ի փաղառութ միաչափ են։ Եւ խորհրդական է թիւս երկոտասան. ՚ի պարտուցն ժխտել տանէն մինչև ցայս՝ երկոտասան տուն է, ըստ կենդանատեսակացն և այլոյն. թէ որոնեա՝ շատ գտանես։ Բն. Ասատոքին։ Լծ. Ասմէն այլոք ՚ի խղճէ մոացյի շատակաւ դատաստանին։ Բն. Ջուշին պարտուն յանվթար"։ Լծ. Ուշիմ՝ ՚ի ձեռն առի զկորըստական խորս չափել՝ և զոլքանն գտանել և յերևոյթ ածել, և պարտեցայ. զի անվթարելի էր. այս է անպակասելի։ Բն. Պատկանեալ։ Լծ. Մխեալ և հաստատեալ։ Բն. Խիթք



ցա

ցաւոյ։ Հծ. փոխանակ կենդանուն որ 'ի լերդէն ընդ երակին բաշխի, խիթք ցաւոց բաշխին և գնան, Բն. Բազմանհատուած են։ Հծ. Զի 'ի չորս տարերս հատեալ է. որ թշնամիք անհաշտելիք են չորս ծայրիւքն. չորութն և խոնաւութն՝ ջերմութն և ցրտութն. Դարձեալ՝ են և սիրելիք անքակտելիք. զի Դ ծայրիւքն միաբանին. ջերմութն՝ հրոյն և օդոյն. ցրտութն՝ ջրոյն և հողոյն. Դարձեալ՝ չորութն հրոյն և հողոյն. գիճութն օդոյն և ջրոյն. Զի խառնակուորք երկու ծայր ունի. որպ թէ երկու ձեռն ունի հողն՝ և ձգեալ է զչորութին 'ի հուրն, և զցրտութին 'ի ջուրն. Նմանապէս և ջուրն ունի զցրտութին 'ի հողն, և զգիճութին 'ի յօդն. Այսպ և օդն ունի զխոնաւութին 'ի ջուրն, և զջերմութին 'ի հուրն. Նմանապս և հուրն ունի զտաքութն Ը օդոյն, և զցամաքութն ընդ հողոյն.

---

## Լ֊ծ" ԻԵ եղբ֊ր Գ֊լ".

Բտն. Մորհուրդ կնքեալ ընդ որ չիք ումեք անցանել։ Հծ. Մեղսն է. զորոյ զկնիքն ոչ ոք կոտրէ, և ոչ այլ ոք։ Բն. Աններելի մտաց արագման՝ զամ ծանիցէ։ Հծ. Այնքան խորին զօրութի ունի մեղսն, որ անհաս է մտաց։ Բն. 'Ի վերջին դատաւնիք դատուն լւծելոյ։ Հծ. Դիւքն զվերջին դատաւնիքն ընկալան. այս է՝ կնքեցաւ 'ի վր նց դատապարտութին. զի ոչ դտաւ 'ի նս մեղսյն։ Բն. Այս նմին խզեալ համառօտ։ Հծ. Զի թէ ստացեալ էին յետոյ մեղսյ՝ լինէր թէ հատեալ էր վրէժ մահուն հասելոյ. յորմէ 'ի մեղսյէն ընտրութն զոր ընտրեց անձնել զանօրէնութն և զսահման մարդեղութեն ոչ էր եղեալ. կամ զոր ընտրեաց և սահմանեաց յաւիտենական զվրէժ մահու նց՝ թէ գտեալ էր 'ի նս մեղսյ՝ անգործ էր եղեալ այս սահմանս։ Բն. Պատկեալ։ Հծ. Բոլորեալ։ Բն. Բարգաւաճի։ Հծ. փարթամանոյ 'ի շնորհաբաշխութն ածութեն՝ յորժամ



մարդ.

մարդս զշինս և մեղս տանէ։ Բն․ Քանզի ո՛վ որք դիմեալ
կալաւ զեղջերսն։ Լծ․ Օրէնքն հին՝ կազմեալ էր եղջեր սեղանոյն 'ի տաճարին սրբութե․ զի յորժամ ումեք ակամայ սպանուեր և կամ այլ վնաս հանդիպէր՝ 'ի տաճարն դիմէր և զեղջեր սեղանոյն ըմբռնէր և ապրէր։ Բն․ Աքսոր զարմեան ։ Լծ․ Որ յերկրով զամզանն և զկառոց լեզուն գողացաւ, ա՛ծ բարկացաւ՝ և անկաւ մահ 'ի բանակն․ և նա չխոստովանեցաւ՝ մինչ որ վճռեալ յայտնեցաւ․ և ապա ասաց թէ մեղայ․ վա՛ որոյ՝ անընդունելի եղև և ոչ արդարացաւ․ այլ մահաջինջ տամբն կործանեցաւ։ Բն․ Սաւուղ կիսեան Լծ․ Յորժամ առաքեցաւ յամաղեկացիսն կոտորել զմարդ և զանասուն, և նա տեսեալ զագագ թագաւոր նոցա գեղեցիկ 'ի տես և 'ի հասակ՝ խղճաց և ոչ սպան․ այլ կենդանի էած առ սամուել․ և նա բարկացեալ՝ սպան զնա փառազանաւն։ Եւ յուտել զօրացն 'ի մսոյ անասնոյն ամաղեկացւոց՝ զոր չէր հրամայել ա՛յ և մարգարէին՝ ետ սաւուղ մեղայ, և ոչ արդարացաւ։ Եւ այլ ուր ասաց սամուէլ սաւուղայ թէ՝ մնա՛ ինձ մինչ ես եկից և մատուցից զպատարագն․ և սաւուղ չմնաց մարգարէին․ և մարգարէն եկեալ բարկացաւ նմա՝ ետ մեղայ և ոչ սրբեաց։ Բն․ Յուդա սխանեան։ Լծ․ Որ զտէրն մատնեաց․ երբ բանն արդիւնացաւ, ապա ասաց թէ՝ մեղայ․ և չընդունեցաւ ։ Բն․ Զկրտոտէ հարազատս ։ Լծ․ Անքան մաքրէ մեղացն զմարդն 'ի մեղաց՝ ո՛վ աւազանն․ թէ և այն ձրի, և այս աշխատութբ։ Բն․ Ձեռն՝ յոգի հարեալ ։ Լծ․ Ձեռն՝ զմարմնոյ կամսն ասէ․ որով հարկանի հոգին մեղօք․ և այլ՝ զի բռամբ զկուրծս հարկանէ մարդ, որ նշանակէ զհոգին․ զի ծեծելովն զխիղճն՝ ցուցանէ զնոմայր և պատճառ մեղացն, որ անկանի ընդ միսն և կոյ ընդ անձն ։ Դարձեալ՝ մարմնական հեշտալի գործովք, այսինքն ձեռօք յոգի հարեալ 'ի պատարագ



մարմ

մարմնոյն ոյ, և կամ՝ի մեռոնն որք, կամ յայլ խոր_
հուրդ եկեղեցւոյ, ՚ի խաչ և յաւետարան։ Բն. Արկին
աշխար։ Լծ. Վայ ՚ի վր վայի։ Բն. Զիս ունին՝ առ որ
չեմ։ Լծ. Առ արդարս։ Բն. Զարտաքնոյարդար բա_
ժակս։ Լծ. Սրբել զարտաքինն բաժակին։ Բն. Սին
պարծանօք։ Լծ. Ով փուճ ընկուզն՝ որ ճռճռէ և կեղե
պովլ որտաքոյ զարդարեալ երևի, և մէջն սին է։ Բն.
Զոր տեսի աչօք։ Լծ. Ալէն թէ՝ որս եսես զքո աչօք
բացօք դէմ յանդիման։ Եւ կամ զայն ասէ՝ որ յամ
ուրէք տեսանի քո ՚ի որ սեղանն պատարագաւն։
Բն. Մեծ է պատասխանատուութիւս։ Լծ. Այս՝ քան
զամ աւետիս ածային անօրէնութեն մեծագոյն պար_
գևք է դէմ յանդիման զքո տեսանել. և այսու առա
ւել վստահութի է խօսակից լինիլ քե, քան զամ երախ
տեօքն՝ որ յաւետրանին։ Բն. Հոգս հալոցականս։ Լծ.
Ով ասէ սողոմոն. սիրտ հոգայօղ՝ չեղ ոսկերաց։ Բն.
Անդաձմունս։ Լծ. Անդէճք անհնարինք՝ որ ը մտա
ռնցանեն։ Բն. Ելմունս տնկատուս։ Լծ. Զանամ ելա_
նել յառաքինութի, և անկատար մնամ. իջանեմ խոնար
հութբ՝ և ոչ կամ հաստատ։

---

Լուծ՝՝ ԻԸ երորդ Գւ՝՝։

Բան. Ո անկերպագրելին չյիշատակելի։ Լծ. Որ ՚ի
միտքն տպաւորին տեսակք մեղաց, զոր չէ պարտ յի
շել։ Բն. Զառ դրունս հեշտականացն։ Լծ. Որ յիշելովն
հեշտանայ։ Բն. Քանզի ոչ պիտակ ինչ սուկ։ Լծ. Զհօր
և զորդւոյ և զհոգւոյն որք ասէ թէ՝ ոչ սուկ և պի_
տակ. այսինքն՝ անուամբ միայն ասել ըստ սաբելի.
այլ յատուկ և որիշ զաւանիմ զամենայն Երրորդու
թեն և զմի ածութին։

---

Լուծ՝՝ ԻԹ երորդ Գւ՝՝։

Բան. Յիննուց յինից և չորրեակ տատանց։ Լծ. Ինն
ժ.Զ

յիսունդ՝ ՂՃԾ. և չորրեակ տասանդ՝ Խ. որոց բոլորն
լինի՝ ԲՃԾ։ Զայն ասեմ՝ թէ մինչ մարդկան կարգեցեր
զայս սահման թողուլ զմեղս, թէ և մեղուցեն միմեանց
յաւուրն նոյն չափ թողուլ. իսկ դու որքն թողուցուս
ըստ քո մեծութեդ ներողութե՝ խնդրողացն ՚ի քէն զղջ
մամբ խոստովանութ և ապաշխարութ։ Բռ. Հիւթ երկ
րի յօդս հեղեր։ Լծ. Մանրամաղ փոշին որ խաղայ ՚ի
շողն. զի ո՛չ աստեղք երկնից անթիւք են մեղք և դու
որ զամենեսեան զնս յանուանէ կոչես. այնպ և փոշե
շողին՝ քեզ միայն է գիտելի. Նմանապես և քոյդ ողոր
մուի անչափ է. ո՛չ և դու անսահման ես։ Բռ. Քան
ինձ նախագրեալ համարդ։ Լծ. Ո՛չ միայն քան զայս
զոր ինձ ուսուցեր թողուլ եօթանասնեկին է և նմա
նիւ քեզ. այլ յոյժ առաւել գտանին քո թողութիւ առ
քոյդ գթուի։

## Լոծ՛՛ Լերորդ Գւ՛՛։

Բռն. Բազմագթելին։ Լծ. Զեօթանասնիցն է ասէ.
և այնպ կանոնեաց՝ թէ և յեօթն շունչն իցէ, թողութ
գտանէ. և թէ ՚ի մէջ չարութե փոխադրէ զղջմամբ ՚ի
բարին՝ առաւել պատուի։ Բռ. Կ յորդս այս անձնիշխա
նական։ Լծ. Հոգին և մարմինն կցորդ են միմեանց և
հակառակ. բայց մարմինն քարշէ զհոգին զհետ կամաց
իւրոց և առնէ արածող հողմոյ՝ չար ցանկութն։ Բռ.
Հատտողին փախչօղ։ Լծ. Հոգին դժուարաւնելի է, և
փախչի ՚ի հատտողէն. այսինքն՝ թէ ջանան արգիլել՝ ո՛չ
կարեն. Նմանապ և անձնիշխանականն ՚ի մարդս՝ փախ
չի վայրաքարշութ ՚ի չմարիտ հատտողէն ո՛չ։ Բռ. Ցոգ
նապատմուեան ամենակալական։ Լծ. Բազմապատմու
են սխալմունք մարմնոյս, որ զմիտս և զհոգիս որսան ՚ի կո
րուստ հինգ զգայութս հարել ՚ի հեշտութի աշխա հիս։
Բռն. Ըմպանակք երկու։ Լոծ. Կթխայ. զի զղջացեալն
կերկու կարծիս լինի. ո՛հայ պատուհասից վն մեղաց. և

Թուի ընդունելի զթողութ՟ն մ՟ղ զղջմանն։ բն. Կշտամբանք երկու ըծ. Վ՟ն միոյ մեղաց՝ երկու յանդիմանութ՟ն, սաստ՝ի հանդերձեալն։ բն. Արեգակունք երկու։ ըծ. Առայուսահատի ծանրութ՟ն մեղայն և խաւարի, և անդ կիզանի յաւիտենական տանջանօքն։ բն. Կեղակարծ։ ըծ. Ցանկարծ և յեղակարծ։ բն. Ամպ ըմթագին։ ըծ. Մտաւ և մըթագին։

## Լուծ՟ ԼԱ. երորդ Գլ՟։

Բռն. Թիւ մի անբաւութեան։ ըծ. Եօթն՝ անբաւ է և անսահման թիւ. զի՝ է գիրն երկար է ըստ քերականին, և զեւրին ոչ նշանակէ. որ է միշտ. և անդիւտելի է սահմանենին, և անհաս թիւ է ը՟ աւազանին որդւոց. և ոչ ունի կէտ սահմանի. այլ կոյս ունի է 'ի ներքոյ տասնին. ոչ կուծնանի յայլմէ՝ ո՞պ երկու 'ի միոյն՝ և չորս յերկուցն, և վեց յերիցն, և ութ՝ի չորիցն, և տասն'ի հնգիցն. և սաուել զանձառն ունի վիճակ, և դժուարաթարգմանելի է էն։ Ջի ո՞պ նման է։ բն. Զխաւարեալքն։ ըծ. Ո՞պ ծխաւորն 'ի վ՟ր սուկալանացն, այսպէս և ո՞քն աչարկու են 'ի վ՟ր դիւաց։ բն. Հետևակ սպառազէն արևութ։ ըծ. Ո՞պ հետևակն յաջողակ է 'ի գոտեմարտն լինել, նոյնպէս և հոյլք ճգնաւորացն։ բն. Ո՞չես մոռացեալ։ ըծ. Ջնո՞քամ 'ի նշնե. մինչ'ի թատերս խաղացողաց. և'ի միտ չարաց և խոստաց անկինիլ։ Ո՞չ դու զնո՞ մոռանաս և ոչ նոքա զքեզ։ բն. Եօթեամբք իցէ փարակեալ։ ըծ. Աւետողմոն՝ եթէ եօթն անգամ աղաչէ զքեզ թշնամին քո՝ մի՛ հաւատար նմա։ Այս մարդկան է սահման. բայց ա՞յն՝ եօթանասնիցս եօթն սահմանեաց թողուլ յանցաւորին 'ի միում աւուրն։ բն. Ա՟ն ամբարիշտ մաքուրն, և առ պոռնիկ զղջացեալն։ ըծ. Անաչառ դատեսջ. ո՞պ զփարիսեցին և զմաքսաւորն. զի թէ՞պտ և մաքուր իցէ ամբարիշտն՝ ամբարշտութբն դատես. և թէ զղջանայ պոռնիկն՝ արդարացնես։



Լուծ՟

## Լուծ՛ ԼԲ երորդ Գլ՛ոյ

Բան․ Յենեալս ՚ի նախադրութեց ։ Լծ․ Յառաջնո րդքն․ այլ ընդ անհամարձակին և նկուն հայցեմ զո_ ղորմութի քո։ Բն․ Զ՚ի մահ գլորմանն ցուցից կերպա րան ։ Լծ․ Այսու՝ որ յերկիր եդեալ եմ զերեսս ՚ի ծունր, ցուցանեմ թէ ՚ի մահ գլորեցայ և ընդ անա_ սունս համարեցայ։ Բն․ Կիտայր։ Լծ․ Որ կործանայ ՚ի վր զաւազանին։ Բն․ Առ քեզ հայի նմ ակն սեառղիս Լծ․ Որպէս ասէ, Առ քեզ տր համբարձի զաչս իմ։ Բն․ Կարսեցին ։ Լծ․ Որպէս պարսն հեռացուցանէ դ․քարն։ Բն․ Քեղիքն։ Լծ․ Այն ձողն է որ առագաս տին գլուխն է․ և կամ սիւներն նաւին ։

---

## Լուծ՛՛ ԼԳ երորդ Գլ՛՛։

Բան․ Բ_ շխարհաւոր տանն սեռականս ։ Լծ․ Զի տունն նս լի եղև ՚ի հոտոյ իւղոյն, որ է սիրտ և տեսակ լրութե նմ աշխարհի․ որք և ասայ տր, թէ ուր և քարոզեսցի աւետարանս, և այլն։ Բն․ Անկշռամբելի ՚ի բամբասա նաց։ Լծ․ Սաղմոսն որ ասէ՝ իւղ մեղաւորի մի օծցէ Բն․ Զմարգարէին կերպարան ։ Լծ․ Այլ ուղէ էառ ղտունիկ կանայս և որբոց, նոյնպս և տրն մեր էառ զբնութիս մեր և որբոց ։ Բն․ Անտուստ առ սոսինս Լծ․ ՚Ի մարգարէին առակէն՝ առ մերս բնութի վերա_ բերեալ զշնորհն ։ Բն․ Ընդ անմահական զարդոյն ։ Լծ․ Զոր ասէ մարգարէն ՚ի դիմաց ոյ առ պոռնկեալ ժողովուրդն, ես ետու քեզ զարծաթ, զինի և ձէթ և կոտաւ։ Բն․ Ընդ զերծման զխաշոյք կատւոյն։ Լծ․ Այս սպառնալիքն են, որ ասաց մարգարէն առ ժողովուրդն, առից զկտաւդ ՚ի գլխոյդ քո, և զասպա_ ցանձանս և զայլն։ Փոխանակ այսոցիկ մարմնականացս զոր եառւ նցց, և առեր վն անարժանութեն, ետ դհո_ գևորն շնորհեցեր։ Բն․ Ընդ քոյուս՝ պերճութե լանջացն։ Լծ․ Քառամանեակն վզանոց է՝ զորեզքկոսի տղիսա_



նման՝

Նման՝ արծաթ կամ ոսկի։ Բն․ Ի սոյն յարկ մուծից,
Ըծ․ Յայս ճառս՝ զոգիս ածից դատաստանաց լինել։ Բն․ Ի
Ցօրինակէ ժամուց կորուսին։ Ըծ․ Ո՞չ ասէ սաղմոսն․
ա̃ծ փշրեսցէ զատամունս ն̃ց, և զժանիս առիւծուց
խոր՞։ Եւ ամոս ասէ․ ո՞չ հովիւ մի որ Թափէ ՚ի բե-
րանոյ առիւծու սրունս բ̃, կամ բլթակ մի ունկան։
Եւ երեմիա ասէ, զերծուցից զքեզ ՚ի ձեռաց չարաց՝
և ՚ի ժանդաց ապրեցուցից զքեզ։ Բն․ Բարւոք փորձ
կամիցս։ Ըծ․ Ո՞չ ասէ տ̃րն իգնատիոս Թէ՝ զոր օրինակ
վարձն ըստ վաստակոց է, նմանապէս և շնորհն ըստ
յուսոյն կշռի․ ըստ որում ասէ սաղմոսն։ Եղիցի ողոր-
մութի քո տ̃ր ՚ի վ̃ր մեր ո̃պ յուսացաք ՚ի քեզ։ Եւ տ̃րն
ասէ, յորում չափ Թողուցու՝ չափ սիրէ։ Բն․ Ըզգեցծգ-
մածուած վերջնում։ Ըծ․ Զմածուած վերջնումն՝
զաւազանին խորհուրդն ասէ՝ նախ քան զհասանելն
ջրհեղեղն կամարին․ զոր լոյս մածուած և վերջին վա-
րագոյր ասեն։ Բն․ Դարձել կրկնեսցի։ Ըծ․ Զի մինչ
յայս, որ մօտքս ՚ի վեր հայեցայ ՚ի լոյս իմաստից քոյ,
նոյն լուսոյ զօրութ̃ հրաշապէս ապշեալ ելս, և յայտնի
մնացս․ և զայս ունու ճանաչեմ, որ խռովուն մնացս
խաղաղայն ։

Լուծ՛՛ ԼԴ Երորդ Գր՛՛։

Բուն․ Ո՛ր ՚ի նախնին ճառեալ։ Լծ․ Զոր վերոյ
ասացեալ եմ՝ զտ̃մ դրական անուանն․ Թէպէտ և դեր
՚ի վերոյ դոանիս․ այլ տ̃ն յարմարաւոր է քեզ․ բարին
և բարերարն․ լոյսն և նորոգօղն․ և կամ զառաջինսց
դաւանութիս ասէ։ Բն․ Յանդիմանութիս գրաբանինս։
Ըծ․ Զատենախօս քարոզն ասէ ՚ի լուր ժողովրդոյն․
Թէ սպառ է աշխարհք և դատաւոր լինել։ Բն․ Յիշ-
խանական ազգմն։ Ըծ․ ՚Ի միոս և ՚ի հոգիս։ Բն․ Բաց
՚ի բանէն ։ Ըծ․ Զի բանին՝ տ̃ծ ունի հայր․ բայց
հրաշածին, մայրմոյն ասի․ զի տ̃ծութեն հաւասար է



երեք

Երէք անձանցն․ և անձն բանին միայն էջ 'ի յարգանդ կուսին, և առեալ իւր մարմին ։ Բն․ Նոր և չքնաղ Ղծ․ Ո՛չ է մեզ նմանն․ զի նա 'ի կուսէն և ա՛ծ, և մեք մարդ միայն՝ և ոչ 'ի կուսէն։ Բն․ Աւանդեցնաց․ Ղծ․ Վարդապետաց․ Բն․ Յառաքելոց։ Ղծ․ Յանդգնելի։ Բն․ Յերկրի օրինակս ։ Ղծ․ Զոր ետես եզեկ․ շարժումն, հողմ, և հուր ․ Զի մարգարէն հայցէր յա՛յ շարժել երկիր և կորուսանել զմարդիկ․ հողմ ուժգին եղանել և ցրուել զմարդիկ․ հուր սաստիկ՝ և այրել զաշխարհս ։ Յորս ոչ գոյր կամքն ա՛յ․ այլ 'ի քաղցր օդն, որ զհեշտութիւն ա՛յ ցուցանէր․ և այլքն զմարդկան խրատուէ։ Բն․ Որ Ծաղկական եդեմ։ Ղծ․ Ընդ այս եդեմս և վերինքն ա_ սեն՝ տ՛ր ողորմեա․ զի մի՛ Թափուր կամ սակաւամարդ_ լիցի 'ի մարդկանէ։ Ա՛յս այն է զոր ետես 'ի դարձի գերութեան․ զի կայր միջայել կարմիր ձիով, և 'ի վեր քան զնա այլ ո՛ն սպիտակ ձիով, որ առէր առ միջայել, մինչև յե՞րբ ոչ ողորմիս եդեմի․ Ա՛յս գործ քահանայի է՝ զոր ետ ա՛ծ հրեշտակային աղօթել վ՛ն մարդկան, որ է եդեմ խորհուրդ լուսաւոր ըստ վեր_ նոյն եդեմի․ վ՛ն մաղթելին՝ ողորմեա եդեմի․ Եւ զայս միշտ ասեն, ողորմեա զոր ստեղծեր մի՛ կորուսաներ․ և զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ․

## Լու-ծ՛՛ ԼԸ երորդ Գլ՛՛։

Բ-ն․ Մատակարարութեամբ։ Ղծ․ Խնամարկութեամբ երկ_ րի՝ զերկնայինն կարգեաց․ ո՛ր զմիջայել խոյսելի․ և զգաբրիէլ՝ պարսից, և զայլս այլոց․ ըստ այնմ՝ կա_ ցոյց սահմանս հեթանոսաց ըստ թուոց հրեշտակայն ա՛յ։ Բն․ Ըստ սահման կշռոյն չափոյ։ Ղծ․ Եւ ո՛չ այնու շատացար կոչիլ մարդասէր, այլ մարդ եղեր և վերըն_ տին մեծարեցեր զբնութիւս մեր՝ 'ի վեր քան զչափ և զկշիռ մեր։ Բն․ Ճառից անբաւից։ Ղծ․ Ո՞ր կարէ գրել և ճառել զբազմազան երախտեաց քոց 'ի մեզ։ Բն․ Զա_

նա

Պապակ ծորմանն։ ըծ․ Զօրէնսն ասէ՝ որք զծարաւ հոգւոյն ալրլին․ և կամ զայն ասէ՝ որ զօրութ բազում երանէր 'ի նմանէ և բժշկէր զնմին։ բն․ Ոմանց վն ծնքեանց։ ըծ․ Ոպ բուռոտացն, և կուրացն, տեռատեսին, և պռունկին։ Եւ կիսոց վն այլոց։ Ոպ հարիւրապետին, և Թագաւորազինին, քանանուհւոյն, և անդամալուծին բն․ Առուեստս բազմօրինակս ըծ․ Որ ձուօքն առնէր․ ոպ զկաւն 'ի վր աչաց կուրին, զլեզուէն ունել, և զմատն յականջն հասուցանել։ բն․ Զանմաքրեալս հոգի՛ ոք հասանել ըծ․ Մեծ է զլուացեալն խոստովանութե անմխտ պահելն, քան 'ի բնէ հոգի ոք սուրբելը բն․ Երկրորդս առաւելութ։ ըծ․ Զխոստովանութին ասէ, որ զշնորհ ուսուցանին ունի․ բն․ Նախատպաւորեցեր։ ըծ․ Սրբեցարուք և սրբեցեց զձեզ աստաց առ մովսէս։ բն․ Յանդգնաբար։ ըծ․ Կինս զոր ետուր ցիս, և այլն։ բն․ Աստախնապաս ծ․ Ղուն նման կերակրոյ անկալլենիլն է։ բն․ Կաղկանձողական․ ըծ․ Փծնել և կծկնծելն է․

## Լուծ" ԼԶ երորդ Գլ"․

Բան․ Յորսայնել։ Լծ․ Երեսիվար ձգել։ բն․ Կրկնակապէն կաշառ։ ըծ․ Զոր յուղայի ետուն․ և պահապանացն։ բն․ Հանւոյն մովաբու։ ըծ․ Կինն զովսայ է, որ դարձաւ արձան աղի․

## Լուծ" ԼԷ երորդ Գլ"․

Բան․ Տարդյազունք են։ Լծ․ Թուքն և ապտակն և այլն՝ անթիւ բարեաց մեղերախտաւորք են․ և անհամար օրհնութեց արժանաւորք։ բն․ Առ այսոսիկ զառաջին։ ըծ․ Առ այս անբաւ շնորհս յորժամ նայիմք՝ և զիւր նիւթն յիշէ թէ 'ի հողոյ եմ․ և ապա զմեքն օտար և անարժան խմանայ այն շնորհին։



Լուծ"

Լուծ" ԼԸ Երրորդ Գլ"։

Բառ. Պաշխարողացն՝ օրինակացն։ Լծ. Ջուր 'ի վեց ձառին առաց, ոմն և ցնցուղք խոր և այլն։ Ընդ զոտսակս մեղաց՝ Նք գրեաց. և առա ղարդարուէս՝ լու։ Եւ յերկոսեանն զնոծաղն 'ի բազմացն առէ. և վայելչ խոյ զՀասավար սխալմնոն բազում յուսացնել. որ տակաւ զօրութե սրբութեն՝ երևի փանօզ շատ մոլութեցն՝ շնորհօքն որ։ բն. Ամենապիկար կարիճ։ լծ. Անգետ և տկար իմ կարողութիւ։

Լուծ" ԼԹ Երրորդ Գլ"։

Բառ. Մ՝ատեանս շնչականս։ Լծ. Մարդս է ըստ եղէկիելի՝ որ եառուն 'ի նա զմատեան թէ կե՛ր և կե՛ցը. և էր գրեալ յերկուս դիմացն՝ վայ և ողբ։ բն. Տարտամ տագնապի։ լծ. Տարտամն յամր ասի, և տագնապն յերտապել նեղութեն 'ի բուռն ցաւոցն։ Զայս ասէ մեզ թէ՝ նեղութիւն առէ՛պ է, և փրկութիւն յամր. զի մի՛ ոք որ տագնապի՝ ելս իրացն խնդրէ. և իմն տարտամութիւ խառնի է ընդ տագնապիս։

Լուծ" Խ Երրորդ Գլ"։

Բառ. Բ՝աւխիզ։ Լծ. Քին տեղիս։ բն. Եմակ։ լծ. Ծոյլ։ բն. Ապականութեա կարիս։ լծ. Գողութիւն, պոռնկութիւն և այլք այսպիսիք, ոչ թէ բնաւորականք են՝ և կամ գոյութե պատճառք, այլ հեշտասիրութե հարկն զպոռնկութիւն գործէ, և ագահութեն զգողութիւ. և այլք նմանապէս. որպէս ասէն թէ՝ կարիքն գործեն զչարիքն։ բն. Յօրինակս երկուս։ լծ. Դ մարմինս 'ի շունչս և յոգիս

(ԽԱ) Սուրբ որ ձառին՝ լուծմունք ոչ գոյ. քանզի պարզ է իմաստասիրողաց։

(ԽԲ) Իսկ նմին հետևել Տր ԱՅ Գրիգորեան ձառին՝ լուծումն ոչ կոյ յաղագս պարզ գոլոյն։



Լուծ"

## Լուծ" ԽԳ երորդ Գլ".

Բուն. Բժշկական կրթականութ. Լծ. Կիրթ ես յա_ռաջնայնելն, և ամենահնար և փորձ ամ կարեաց և ցաւոց. Բն. Ահա դու 'ի յիս, բառ մարգարէին. Լծ. Թէ գնացից 'ի նմ և բնակեցայց 'ի նմ. Եւ թէ՝ ես եմ 'ի միջի ձերում, և բանն իմ, և հոգին.

---

## Լուծ" ԽԴ երորդ Գլ".

Բուն. Օրինակն նորբ. Լծ. Մովսէս՝ որ տարած_ման ձեռացն, գքնին նշանակէր զչարչարանան. Բն. Կենսախրախույն բանի. Լծ. Որ ասէ թէ՝ բաժին իմ է նա. մինչեւ ակն կալայց և համբերեցից նմա. Բն. Բիւրս կրկնեցի. Լծ. Թէ բիւր անգամ կրկնեմք 'ի բանն՝ ոչ չափի. Բն. Որ հոգին կենդանութն՝ և բանն բանականին. Լծ. Օրինակ տայ համականութ հօր և որդւոյ և հոգւոյն որյ. զի հոգին շնչական 'ի մեզ՝ 'ի բանէ՝ բանականին ոչ է օտար. և յայտ է, զի 'ի քակ_տիլ շնչոյն՝ խափանի բան բանականին.

---

## Լուծ" ԽԵ երորդ Գլ".

Բուն. Նուարդ՝ յոյս բարեաց տնկեալ. Լծ. Որով հետև ամենայն երրորդութին առ կեանս փոյթ է և սթափ՝ այսու բարի յոյս տնկեալ է 'ի սրտի քոյ անձն իմ կործանեալ. Բն. Ընդ բնաւորականայն. Լծ. Բնա_ւոր է քաղցն և ծարաւն՝ քունն և այլն. իսկ եկա_մուտ՝ չարն. որ միշտ է 'ի մեզ ոչ բնութի. Բն. Զբանին ստերինականութիւն. Լծ. Անիակ բերանն է, որ միշտ զան_պատեհն խօսի և ասէ. և ոչ սերմնականն յօրէնան ակիզծ էր, նոյնպս վայրախօսն և շատախօսն 'ի նոյա. Բն. Զելիցն շաւիղ. Լծ. Զթոյնս կարծին ասէ, որ ծածկեալ է մաշկովն. որ շուրջ փակեալ ունի ոչ կայ զթոյնն, զի մի ելցէ մինչև հարցէ.

## Լուծ՝ ԽԶ երորդ Գլ.

Բան. 'Ի յօրինակէն չորհէ: Լծ. Որ ձևացար իւր մարդ ուղորդ՝ 'ի ձև հրեշտակի, և 'ի տիպ աշտանակի. զճրագն 'ի գլուխ ունելով՝ տեսանել զօրինակն քո և զսկզբնատիպն ած: Բն. Կրկին ձոխացար: Լծ. Ըզգայարանօք՝ օգնեն բանականութե, յօրինել մատամբք զարուեստ. և բազկօք զգործ. և կոչել ած՝ կցորդ ոյ. ոտինքն՝ արարիչ: Բն. Նիւթականութեն քուն տեսութե: Լծ. Վն այն ետ քեզ զգայութիւն, զի մի՛ ոք մնասցէ տեսութե նիւթականս անդատ յանասցէ. զ անքննելի. կամ նիւթականս՝ վս մարմնոյն առէ: Բն. Կանոնաւ բէլք սահմանել: Լծ. Գ ձ կե որ 'ի տարրնս նմանապէս և յօդուածք մարդոյն: Տարին չորս եղանակօք, և մարդս 'ի չորս տարերացս. երկոտասան ամիք, և ԺԲ անդամք. եօթն որ շաբաթուն, և եօթն զգայարանքս:

## Լուծ՝ ԽԷ երորդ Գլ.

Բան. 'Ի բարւոյն կարկառեալ 'ի յոյս: Լծ. Մեղաց ասելովն՝ հաստատի մարդ յուսով: Բն. Եղերերգութե: Լծ. Լալականս երգ: Բն. Խեռ մնայց: Լծ. Խիղճ մտացն: Բն. Մեծ մեղաւորին: Լծ. Մանասէի: Բն. Զպարտուցս սակ: Լծ. Զհամար մեղացս: Բն. Թախանձ: Լծ. Խիստ աղաչանք. որ ձանձրանայ լռողն: Բն. Արաբան: Լծ. Անբան: Բն. 'Ի սկզբնաւորս ապաւինութե: Լծ. Որ զղջացաւ 'ի սրտի և ասաց՝ յարեայց առ հայրն իմ ուստի ելի: Բն. Օդիկս: Լծ. Ոտից ամանս:

## Լուծ՝ ԽԸ երորդ Գլ.

Բան. Իրաւացուցես զիմս ողորմութե: Լծ. Ո՛չ թէ իրաւամբք դատելով, այլ՝ ճշմարտութը ողորմած լինելով ըստ ցասման երեց որդւոյն ասացելոյ, ուրախ լի-

Նիւ

